

20 FEB 2013

ՅՈՎ. ԵՐԵՐՈՅԵՆ

49/99-8

h.-82 Կ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

(Պատկերներով եւ ֆերականական լիարժույթներով գրաւոր աշխատանքների համար)

1006
29333

Допущена Попечительским Советом Кавказского Ученого Округа к употреблению вг учебникахъ.

ԳԻՆԸ 30 40974

Վ. Ե. Երեւոյ Կ. Գրատրիւն

ԱԼԵԿՍԱՆԴՐԵՊՈՒ

Տպարան Ե. Մ. Մալխասեան

1908



Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ի

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

1. Ծ Ո Յ Լ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ը



«Այսօր չեմ ուզում դասի գնալ. լաւ է
գնամ խաղալու,—վճռեց մի փոքրիկ մանուկ
և վագեց դէպի դաշտ:

Բայց շուտով նա մենակ ձանձրացաւ:

Չորս կողմը նայեց և տեսաւ, որ մեղուն թըռչ-
կոտում է ծաղկից ծաղիկ:

—Մեղուն, մեղուն,—կանչեց մանուկը,—արի, մի քիչ խաղանք:

—Չէ,—պատասխանեց մեղուն.—ես քեզ նման ծոյլ չեմ, որ
դործս թողած, խազն սկսեմ. խաղա՛ մենակ:

Դրանից յետոյ մանուկը տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կը-
տուցով խոտ էր կրում իւր բունը:

—Սիրուն թռչնակ,—ասաց նրան երեխան.—մի քիչ չխաղանք:

—Ի՞նչ ես ասում, ծոյլ տղայ,—բարկացաւ թռչնակը.—ես ժա-
մանակ ունիմ խաղալու. ես դեռ պէտք է մժեղներ որսամ՝ ձագե-
րիս կերակրեմ, բուրգ, փետուր հաւաքեմ՝ բունս փափկացնեմ:

Մանուկը մտածմունքի մէջ ընկաւ: Մտածեց, մտածեց և
վագեց դպրոց:

Ի՞նչ մտածեց մանուկը:

2. ՏԽՈՒՐ ԵՐԵՆԱՅ

Երբոր ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքրոր, աղանի, հաւ ու ծիծեռնակ,
Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով
Գնացին իրանց գործին շտապով:

Միայն ծոյլ տղան չգնաց դպրոց,
Գիրքը չպահեց ու փախաւ փողոց.
Իրիկուն ամենք յետ դաձան ուրախ,
Միայն տղան էր տրտում, գլխակախ:



3. ՁԱՆԱՍԷՐ ՄԱՆՈՒԿԸ

Ա.

Ջանասէր մանուկը՝ լուսամուտի առաջ նստած՝ իւր դասերն էր սովորում, իսկ փայլուն արեւը նրան դուրս էր հրաւիրում, ալիով.

—Սիրուն երեխայ, բաւական չէ կարգաս, դուրս արի, մի քիչ խաղա:

—Ոչ, պայծառ արեւ, ես դեռ չեմ կարող խաղալ, պէտք է դասերս պատրաստեմ:

Բ.

Մանուկը կարգում ու գրում էր. յանկարծ մի փոքրիկ էլրուչնակ թրթուալով եկաւ, լուսամուտի առաջ նստեց և ծիծաղելով ասաց.

—Սիրուն երեխայ, հերիք է, որքան գրեցիր, դուրս արի, խաղա, ուրախացիր:

—Ոչ, սիրուն թռչնակ,—պատասխանեց մանուկը,—ես դեռ չեմ կարող խաղալ. պէտք է դասերս լաւ պատրաստեմ:

Գ.

Մանուկը շարունակում էր գրել ու կարդալ, իսկ պարտիզի միջից կարմիր կեռասը կարծես ասում էր նրան.

—Սիրուն մանկիկ, բաւական չէ աշխատես. դուրս արի, հասած պտուղներս կեր, կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. «Ի՞նչ արտրժակով կեռաս ուտեմ, քանի որ դասերս դեռ չեմ սովորել»:

Դ.

Մանուկը գործը վերջացրեց, գրքերը հաւաքեց, ուրախ-ուրախ դուրս վազեց և համարձակ կանչեց.

—Այն ո՞վ էր ինձ հրաւիրում. եկէք, ես պատրաստ եմ:

Այժմ արեւը նրա համար աւելի պայծառ էր փայլում, թրուչնակն աւելի քաղցր էր երգում, իսկ կեռասը նրան անչափ համեղ էր թւում:

Ինչու.

4. ԺՐԱՋԱՆ ՏՂԱՅ

Տղան սիրում է ձեզ շատ, արեգակ,
Դաշտ ու պարտիզում ձովրոտ թռչնակ,
Ճիւղերից կախ-կախ պտուղներ հասուն,
Բայց ձեզնից աւել պիտ սիրէ ուտում:

Ուրեմն թողէք, նա դպրոց երթայ,
Ընկերների հետ դասերը նա տայ,
Եւ երբ որ իւր սուրբ պարտքը կատարէ,
Որքան որ ուզէ, թող նա ձեզ սիրէ:

Այնուհետև ցոլա՛, պայծառ արեգակ,
Այնուհետև երգէ՛ դու, նախշուն թռչնակ-
Եւ անուշ համը հասուն պտուղին
Թող լինի վարձը ժրաշան տղին:

Գ Բ Ը Ի Ո Ր Վ Ե Ր Փ Ո Ր Թ Ի Ի Ն Ե Ր

1. Գրեցէք բոլոր այն առարկաների անունները, որոնք դուք տեսնում էք դասարանի մէջ: Իւրաքանչիւր բառից յետոյ վերջակէտ դրէք: Սկզբը և վերջակէտից յետոյ գլխատառ գրեցէք:

Օրինակ: — Սեղան: Աթոռ: Գիրք...

2. Արտագրեցէք «Տ խ ու ը ե ռ ե խ ա յ» ոտանաւորից բոլոր շնչաւոր առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ: — Արլար: Աղանի: Հաւ...

3. Արտագրեցէք «Չ ա ն ա ս է ը մ ա ն ու լ ը» յօդուածից բոլոր անշունչ առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ: — Լուսավուտ: Դաս: Արև...

4. Գրեցէք առանձին-առանձին շնչաւոր և անշունչ առարկաների անունները:

Թոշուն: Բու: Բալ: Թաշկինակ: Բար: Կատու: Չի: Բաղ: Թել: Կով: Գիւղ: Գայլ: Ծանձ: Թուղթ: Կոռնկ: Հաւ: Սեղան: Շուն: Գիրք: Բանալի: Պատուհան: Սենեակ: Գետ: Աշակերտ: Աթոռ: Կարաս: Մաա: Գլուխ: Գիւղացի: Բաղաբացի:

5. ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ

Մի հայր երեք որդի ունէր—մեծը տասներկու տարեկան էր, իսկ փոքրը՝ տասը: Մի անգամ հարևաններն ասացին, թէ նրա որդիքը ծիծաղել են մի պառաւ կնոջ վրայ: Հայրը խիտտ յանդիմանեց նրանց և երեխաները խոստացան ուղղուել: Բայց մի քանի ժամանակից յետոյ մանուկները մոռացան իրանց խոստումը և, մի ձերուձու պատահելով, սկսեցին ծաղրել նրան: Այս բանն էլ հօր ականջին հասաւ:

Միւս օրը հօր ասին էր: Որդիքը եկան շնորհաւորելու և երկար կեանք մաղթեցին նրան:

—Չաւակներս,—ասաց հայրը,—ես չեմ ցանկանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ ձերանամ, շար մանուկները ծիծաղեն ինձ վրայ:

Երեխաները հասկացան, թէ ինչ է ուզում ասել հայրը և սաստիկ ամօթից չգիտէին, ինչ անեն: Այն օրից նրանք այլևս չէին ծիծաղում ձերունիների վրայ:

3. Գ Ի Ի Ղ Ի Գ Ր Ա Գ Է Տ Ը

Իւր որդուց մայրը
Նամակ ստացաւ,
Կարօտած սիրտը
Վեր ու վար եղաւ:

Տղան ի՞նչ է գրել,
Պէտք է իմանար,
Բայց նրա տանն էլ
Կարգացող չկար:

Որդին հեռու էր,
Օտար քաղաքում,
Ծառայում մի տան,
Դպրոցում սովորում:

Դուրս եկաւ փողոց,
Մի քարի նստեց,
Գիւղի տէրտէրի,
Որդուն հանգիպեց:

Նայում է թղթին,
Սիրուն նշաններ,
Բայց այդ գրերի,
Միտքը չգիտէր:

Եւ նրան կանչեց.
—Տէրտէրի տղայ,
«Մօտս եկ, ապրես,
«Այս թուղթը կարգաւ»:

7. Ե Ղ Բ Ա Յ Ր Ն Ե Ր

Գիւղացին եօթը որդի ունէր: Հայրը միշտ պատուիրում էր նրանց, որ հաշտ ապրեն միմեանց հետ, բայց եղբայրները չէին կատարում հօր պատուէրը և իրանց օրը կուռով էին անցկացնում:

Մի անգամ էլ հայրը հրամայեց մի ցախաւել բերել և ասաց որդոցը:

—Չեզանից ով որ կոտորէ այս ցախաւելը, հարիւր մանէթ կրատանայ ինձանից:

Եզրայրները շատ չարչարուեցին, բայց չկարողացան կոտորել: Այն ժամանակ հայրը քանդեց ցախաւելի կապերը և բոլոր ճիւղոտները ջուկ-ջուկ կոտորասեց:

—Տեսէք,—ասաց նա որդոցը.—թող այս ցախաւելը ձեզ օրինակ լինի. եթէ դուք հաշտ ապրէք, ձեզ ոչ ոք չի կարողանայ յաղթել. իսկ եթէ իրար հետ կռուէք և միմեանց հակառակ լինիք, ձեզ ամեն մարդ էլ հեշտութեամբ ջուկ-ջուկ կրողնչացնէ:

8. ՈՐԲԻ ՊԱՀԱՆՋԸ

Որք եմ անտուն, անպաշտպան,
Տուէք, խնդրեմ, ապաստան,
Տուէք, սնունդ և քուտմ,
Ես մարդ դառնալ եմ ուզում:

Չեմ ցանկանում շրջել զուր,
Անգործ ընկնել զոնկ-զոն,
Չքի մուրալ ու ապրել,
Ողորմութեան սովորել:

Առէք ձեզ մօտ որդեգիր,
Տուէք ձեռքս արհեստ, զիր,
Լինիմ խելօք ու ազնիւ,
Վայելեմ միշտ սէր, պատիւ:

ԳՐԱԴՐԱՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

5. Աբտազրեցէք հետեւեալ բառերը ե գ ա կ ի և յ օ գ ն ա կ ի թուով:
Հաւ—հաւեր: Օր—օրեր: Գործ—գործեր...: Դաշտ—դաշտ...
Քար—քար...: Գոյն—գոյն...: Քոյր—քոյր...: Սար—սար...: Բաղ—
բաղ...: Խոտ—խոտ...: Յանց—ցանց...: Խաչ—խաչ...: Գիւղ—
գիւղ...: Ամպ—ամպ...: Գունդ—գնդեր...: Թողթ—...: Տուն—...:
Գիւղ—...: Միրզա...: Մանուկ—մանուկներ: Թռչուն—թռչուն...:
Բերան—բերան...: Մեղու—մեղու...: Ժողով—ժողով...:

6. Աբտազրեցէք «Հալը և որդեքը» յօդուածից բոլոր գոյացող կան անուններն իրանց սկզբնական ձևով:
Օրինակ:—Հայր: Որդի: Մարդ:

7. Աբտազրեցէք հետեւեալ նախադասութիւնները և փակագծերն մէջ հարցեր աւելացրէք: Հարցերի տակ գեծ քաշեցէք:
Կովը (ո՞վ) քառաշում է: Արևը (ի՞նչո) ծագեց: Աշակերտը (...) խաղում է: Անձրևը (...) գալիս է: Սազը (...) լողում է: Արծիւը (...) թռչուն է: Սոխակը (...) երգում է: Օձը (...) սողուն է: Ծառը (...) ծաղկեց:

9. Մ Ա Յ Ր Ի Կ Ս

Ո՞վ կերակրեց ինձ, տալով ծիծ անուշ,
Ո՞վ առաւ իւր գիրկը, որ ննջեմ մոռ-մոռ,
Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց.
Մայրիկս:

Երբ աչքերից քունը փախաւ, գնաց,
Ո՞վ ինձ անուշիկ օրօրներ ասաց
Եւ թևերի մէջ օրօրեց, որ չլամ.
Մայրիկս:

Ո՞վ գլխիս վերև նստեց ու հսկեց,
Երբ քաղցր քնում էի օրօրոցիս մէջ,
Եւ սիրոյ քաղցրիկ արցունքներ թափեց.
Մայրիկս:

Երբ սաստիկ ցաւով լալիս էի միշտ,
Ո՞վ աչքս սրբեց, թեթևացրեց իմ վիշտ,
Ահ ու դող զգաց, որ ես չմեռնեմ.
Մայրիկս:

Ո՞վ վագեց օգնել, երբ ես ընկայ վար,
Եւ պատմեց ինձ վէպ, որ լինի ինձ ճար,
Համբուրեց ցաւած տեղը՝ ինձ քնքշաբար.
Մայրիկս:

Ո՞վ աղօթք սովորեցրեց բերնիս քնքոյշ,
Որ պաշտեմ Աստուած, լինիմ միշտ զգոյշ:

Եւ խելքով-շնորհքով կեանքս անցկացնեմ:

Մայրիկ:

Եւ կարո՞ղ եմ ես մոռանալ քեզ, հոգիս,

Քեզ, որ սիրեցիր և ինձ հոգացիր,

Ու անշափ ցուեր ոչինչ համարեցիր,

Մայրիկս:

Ո՛հ, այդպիսի բան մտքովս չի անցնիլ:

Եւ դու, ս՛վ Աստուած, իմ արև պահիր,

Որ ես վարձատրեմ քո անշափ հոգսեր,

Մայրիկս:

Իսկ երբ կըզառնաս տկար պառաւակ,

Իմ հզօր բազուկ կըլինի քեզ նեցուկ,

Ես պէտք է սփոփեմ քո բոլոր ցաւեր,

Մայրիկս:

Եւ երբ որ տեսնեմ՝ գլուխդ ծռի,

Ես պէտք է հսկեմ մօտ քո սնարի

Եւ սրտիս խորքից պիտ արցունք թափեմ,

Մայրիկս:

10. Վ Ա Տ Ը Ն Կ Ե Ր

Հայրը տեսաւ, որ իւր որդին վատ ընկերների հետ է ման գալիս:

— Զաւակս, — ասաց նրան, — հեռու կաց զբանցից. զբանք քեզ կըփչացնեն:

— Ո՛չ, հայրիկ, — պատասխանեց մանուկը, — ճիշտ է, իմ ընկերները վատ են, բայց ես կաշխատեմ նրանց ուղղել:

Հայրը վեր առաւ մի կողով, որտեղ միքանի փչացած խընձորներ կային և նրանց մէջ մի գեղեցիկ կարմիր խնձոր և մի մաքուր քար դնելով, ասաց որդուն.

— Թո՞ղ սրանք մնան այստեղ, տեսնենք՝ ինչ կըլինի:

Երեք օրից յետոյ հայրը որդուն բերեց կողովի մօտ: Նայե-

ցին և ի՛նչ տեսան: Գեղեցիկ կարմիր խնձորն էլ արդէն սկսել էր նեխուել, փշանալ, իսկ քարն, իհարկէ, ամենևին չէր փոխուել:

— Տեսնո՞ւմ ես, — ասաց հայրը որդուն. — եթէ դու էլ այս քարի նման պինդ ես, ես քեզ չեմ արգելիլ վատ մարդկանց հետ ընկնել. իսկ եթէ թոյլ ես, ինչպէս այս խնձորը, այն ժամանակ ինքզ էլ կըփչանաս վատ ընկերների մէջ:

11. Գ Ի Ր

Կարգան, այ իմ խելօք մանուկ,

Կարգան, գրի՛ր դու ամեն օր.

Գիր կարդողի խելքն է կտրուկ,

Միտքը — պայծառ ու լուսաւոր:

Գու կիմանաս, ինչո՞ւ մարդիկ Պէտք է ապրեն իրար համար.

Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք,

Ի՞նչ է լոյսը, ի՛նչ է խաւար:

Գիր կարդալով՝ դու աշխարհիս

Կըճանաչես շարն ու բարին.

Ո՛վ է խնդում, ս՛վ է լալիս,

Ո՛վ է զրկում խեղճ թշուառին:

Կարգան, դու իմ խելօք մանուկ, Կարգան, գրի՛ր դու ամեն օր.

Գիր կարդողի խելքն է կտրուկ,

Միտքը — պայծառ ու լուսաւոր:

12. Ո Ր Դ Ի Ա Կ Ա Ն Ս Է Ր

Մի երեխայ, փողոցի միջով վազելիս, ընկաւ կառքի տակ. անիւն անցաւ նրա ոտի վրայով և ջարդեց: Խեղճ երեխային վերցրին և տուն տարան: Նրա մայրը տանը հիւանդ պարկած էր և, հէնց որ լսեց որդու լացուկոծը, վախից ուշաթափուեց:

Երեխան իսկոյն կտրեց ձայնը և, մինչդեռ ուղղում ու կապում էին ոտը, նա ամենևին ձայն չհանեց:

— Մի՛թէ դու ցաւ չես զգում, — հարցրեց նրան վերջապէս բժիշկը:

— Օ՛, սաստիկ, — հառաչեց մանուկը, — բայց ես չեմ ուզում, որ մայրիկս իմանայ այդ. նա շատ կըվշտանայ:

13. Օ Ր Օ Ր Ո Յ Ի Ե Ր Գ


Արի, իմ սոխակ, թնդ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագճակ, մի գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թ՛նդ դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվուլով տղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի գալ.
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաշաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովդազար դառնալ:

Թ՛նդ որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ:
Բազէն որ եկաւ, որդիս լոեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:



ԳՐԵԻՐԲ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Արտագրեցէք «Վա տ ընկեր» յողումից թէ շնչաւոր և թէ անշունչ առարկաների անունները եզակի և յգծնակի թուով:

Օրինակ:—Նզակի թ.—Ընկեր: Հայր: Որդի:
Յոզնակի թ.—Ընկերներ: Հայրեր: Որդիներ:

9. Գրեցէք ձեզանից մի քանի փոքրիկ նախադասութիւններ եզակի թուով: Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ վերջակէտ դէք: Վերջակէտից յետոյ գլխատառ գրեցէք:

Օրինակ:—Ընկերս սկաւ: Ժիտը ծրլւելում է:

10. Արտագրեցէք միւսները յգծնակի թուով:

Օրինակ:—Ընկերներս սկան:

Արտագրեցէք և հարցերն յարմօր բառեր աւելացրէք:

Մանուկը (n°վ) սլատասխանեց: Աստղը (b°նշը) փայլում է:

.... (n°վ) սկաւ ... (b°նշը) ընկաւ: ... (n°վ) սովորեցնում է:

.... (n°վ) երգում է: ... (b°նշը) սլայծաւ է: ... (n°վ) վերադարձաւ:

.... (n°վ) կծում է: ... (b°նշը) մալուր է:

14. Ե Ր Զ Ա Ն Ի Կ Մ Ա Ր Դ Ը

Մի թագաւոր սաստիկ հիւանդացաւ և, ժողովելով իւր իմաստուն մարդկանց, խոստացաւ, որ ո՛վ հնար կրգանի իրան բժշկելու, իւր թագաւորութեան կէսը նրան կրտայ: Իմաստուններն սկսեցին առանձին առանձին մտածել և յետոյ միասին խորհրդակցել. բայց ո՛չ մի միջոց չէին կարողանում գտնել: Վերջը նրանցից մէկը ասաց.— «Եթէ թագաւորին հազցնենք որ և է երջանիկ մարդու շապիկ, նա կառողջանայ»:

Այս բանի վրայ թագաւորը սաստիկ ուրախացաւ և մարդիկ ուղարկեց մի երջանիկ մարդ գտնելու: Թագաւորի խնդրակները երկար ժամանակ ման եկան նրա տէրութեան մէջ, բայց երջանիկ մարդ չէին կարողանում գտնել: Ո՛ւմ որ երջանիկ էին համարում, նա մի որ և է պատճառով թշուառ էր դուրս գալիս: Մէկը հարուստ էր, բայց առողջ չէր. միւսը քաջատղջ էր, սակայն աղքատ. երրորդը հարուստ էլ էր, առողջ էլ, բայց անխել:

էր: Մի խօսքով ամեն մարդ մի բանից դժգոհ էր, ամեն մարդ մի պակասութիւն ունէր:

Մի անգամ, երեկոյեան, թագաւորի որդին անց է կենում մի խրճիթի մօտով և լսում է. — «Է՛հ, փառք Աստուծոյ, աշխատեցի, կերայ, կշտացայ. հիմա պառկեմ, հանգիստ քնեմ. էլ ինչս է պակաս»: Թագաւորի որդին ուրախացաւ, որ վերջապէս գտաւ մի կատարեալ երջանիկ մարդ. հրամայեց, որ հանեն նրա շապիկը և նրա փոխարէն տան նրան՝ ինչ որ կամենայ: Բայց բանից դուրս եկաւ, որ այն երջանիկ մարդը շապիկ էլ չունէր:

15. Մ Օ Ր Օ Ր Օ Ր Ը

Լայ-լայ, սիրուն իմ Նազիկ,
Լայ-լայ, սիրուն իմ մանկիկ,
Մատաղ լինիմ աչերիդ,
Մատաղ կարմիր ունքերիդ:

Պաշիկ կրտամ ճակատիդ,
Պաշիկ փափլիկ թշերիդ.
Իմ կեանք, իմ սէր ու իմ շունչ,
Մատաղ լինիմ արևիդ:

Լայ-լայ, սիրուն իմ Նազիկ,
Լայ-լայ, սիրուն իմ մանկիկ:

Ահա քնեց Նազիկս,
Նախշուն աչերը խուփ արաւ.
Դէհ, այժմ արի, հրեշտակ,
Որ պահպանես թևերիդ տակ:

16. Մ Ե Ծ Ե Ր Ե Ի Փ Ո Ք Ր Ե Ր

Գարեգինը, պատուհանի առաջ կանգնած, նայում էր դէպի փողոց, որտեղ պառկած էր նրանց գամբուր—Բօղարը և տաքանում էր արեգակի տակ:

Յանկարծ Բօղարին մօտեցաւ մի փոքրիկ քոթոթ և սկսեց սաստիկ անհանգստացնել նրան—յարձակուում էր վրան, հաչում էր և կծոտում նրա ահագին թաթերն ու գունչը:

—Սպասիր,—ասաց Գարեգինը,—նա քեզ խրատ կըտայ:

Քոթոթը շարունակում էր իւր շարութիւնները, իսկ Բօղարն ամենևին չէր բարկանում նրա վրայ և տեղից չէր շարժւում:

—Տեսնո՞ւմ ես,—ասաց հայրը Գարեգինին.—Բօղարը քեզանից բարեսիրտ է. նա իրանից փոքրին չի դիպչում: Իսկ երբ քո փոքր եղբայրներն սկսեն քեզ հետ խաղալ, այն ժամանակ անշուշտ ձեր խաղը կըվերջանայ նրանով, որ դու նրանցից մէկին կամ միւսին մի զրկանք կըհասցնես:

17. Ա Ր Դ Ա Ր Վ Ճ Ի Ռ

Երկու փոքրիկ տղայ խաղում էին ընկուզենու տակ: Նրանցից մէկի անունը Խաժակ էր, իսկ միւսինը Մացակ:

Քամին ծառից մի ընկոյզ է վայր զցում:

Այդ բանը առաջինը նկատում է Խաժակը և վազում դէպի ընկոյզը, որ վերցնի. բայց Մացակն աւելի մօտ լինելով, վրայ է ընկնում ու ինքը վեր թոցնում—շուտով վերցնում:

—Ինձ տո՛ւր,—ասում է Խաժակը,—այդ իմն է:

—Ինչի եմ տալիս,—նկատում է Մացակը,—ինչո՞ւ է քոնր:

—Նրա համար, որ առաջին անգամ ես տեսայ ծառից վայր ընկնելը. ինձ տո՛ւր, ասում եմ:

—Ո՛չ, կընե՞րես, չեմ տալ,—ասում է Մացակը.—այս ընկոյզը իմն է, որովհետև առաջին անգամ ես վերցրի զետնից:

Նա—հո՛, սա չէ, նո՛—հո՛, սա—չէ, վերջը նրանք, մի հատ ընկոյզի համար մոռանալով իրանց սիրով ընկերութիւնը, դեռ իրար խեթում են, աչքերով իրար ուտում, իրար վրայ խոժոռւում, ապա միմեանց զրգում, քաշքշում:

Եւ շատ կարելի է, թէ բանը շատ վատ վերջանար, տուր ու դմբոց վեր կենար, եթէ նրանց ընկեր Սահակը վրայ չհասնէր:

—Ահա՛ Սահակը,—ասում է Խաժակը,—թող սա՛ ասէ, թէ մեզանից որի կողմն է արդարութիւնը:

—Չատ լաւ, թող ասէ,—համաձայնում է Մացակը:

Մահակը, երբ իմանում է բանի էութիւնը—երկու սիրով ընկերների կողմնակցութեամբ, քմծիծաղ տարով առնում է Մացակի ձեռքից ընկոյզը, զգուշութեամբ կտարում այնպէս, որ կճեպը երկու հաւասար կէս է լինում:

—Այս մի կէսը քեզ է պատկանում, Խաժակ, որովհետեւ առաջին անգամ դու ես նկատել ծառից վայր ընկնելը. այս կէսն էլ քեզ է պատկանում, Մացակ, որովհետեւ առաջին անգամ դու ես վերցրել գետնից: Իսկ միջուկը պատկանում է ինձ՝ որպէս վարձատրութիւն իմ այս աշխատանքիս:

Այդ ասելուն պէս՝ Մահակը բերանն է զցում միջուկը և ծամելով ու ծիծաղելով հեռանում:

Խաժակն ու Մացակը մնում են ամօթով:

Նրանք նոր են զլխի ընկնում, հասկանում իրանց սխալը, բայց ինչ կարող էին անել. արդէն բանը բանից անցել, պրծել էր:



18. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ա.

Ժամանակով կատուն ճօն՝ էր,
Շունն էլ գլխին գտակ չունէր.
Միայն, գիտեմ ոչ՝ որտիանց-որտի՝
Ճանկել էր մի գառան մորթի՝

¹ ճօն—գերձակ, ² Որտիանց որտի—որտեղից-որտեղ:


Եկաւ մի օր, ձմրոնամտին,
Կատուի կուշար տարաւ մորթին.
—Բար՛ յաջողում. ուստան Փիսօ,
«Գլուխս մըսեց, ի սէր Աստոյ,
«Ա՛ն էս մորթին ու ինձ համար
«Մի գտակ կարի գլխիս յարմար:
«Վարձդ կըտամ, միամիտ մնա,
«Միայն խնդրում եմ, շատ չուշանայ»:
—Աչքիս վրայ, քեռի Գուշի,
«Մի գտակ ա, խու մի քուրք չի.
«Քու թանկագին խաթեր համար
«Ուրբաթ օրը համեցէք տար.
«Փողի մասին աւելորդ ա.
«Մեր մէջ խօսարն էլ ամօթ ա.
«Ի՞նչ վենձ՝ բան ա. տօ հէր օխնած,
«Հն՛, հն՛, հն՛... մի գգակի վարձ...»:

1006
29333

Բ.

Ուրբաթ ծէգին քեռի Գուշին
Ուստից ծէրքին², բաց բաց կուճին³
Թափ թափ տարով, ծանդրր ու մեծ
Ուստա կատուի շէմքում կանգնեց,
—Ուստէն ո՛ւր ա... փափախս ո՛ւր ա...
—Մի քիչ կացի, հրէս կերևայ:
Ուստէն եկաւ քուրքը հագին,
Շանը տեսաւ, բեղի տակին
Իրան-իրան քիչ փնփնթաց
Ու մուշտարու վրայ թնդաց.
—Յրտատար էլար... վան, անաշէն,
Չէս թողնու՛մ, որ մի չունչ քաշեն.

¹ վենձ—մեծ, ² ծէրքին—վազ, կանուխ, ³ կուճին—գլուխը:



«Մահաթ¹ խու չի², դեռ հլա նոր եմ
 «Յրցամ² տուել, թէ որ կարեմ»:
 — Դէ, հէր օխնած, էտենց³ ասան,
 «էդ բարկանանդ էլ ինչիս ա.
 «Փող եմ տուել, շուտով կարի,
 «Թէ չէ ասան, էգուց արի...»
 Ասաւ Քուչին ու նեղացած
 Վերադարձաւ գլուխը բաց:

Գ.

Մին էլ եկաւ, դարձեալ չկար.
 Էս անգամը գիպան իրար.
 Էլ անպատիւ, պետոր⁴ խօսքեր.
 Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
 Էլ գող Փիսօ, էլ բաշալ Շուն...
 Բանը հասաւ գիւանբաշուն⁵:
 Մինչև շունը գնաց — եկաւ,
 Ուտա կատուն կտորըն ընկաւ⁶,
 Գլուխն առաւ ու մի գիշեր
 Հանտէ, կորաւ. էն գնալն էր:

Գ.

Էն օրուանից մինչև օրս էլ
 Շունն էս բանը չի մոռացել.
 Մտքում հլա դեռ պահում ա.
 Որտեղ կատուին պատահում ա,
 Վրայ ա վազում, մորթուց քաշում,
 Իրան մորթին ետ ա ուզում.

¹ Սհաթ — ժամացոյց. ² Յրցամ տաւ — շուր սրկել: ³ Էտենց — աչքս: ⁴ Պետոր — անպատիւ: ⁵ Գիւանբաշի — դատաւոր: ⁶ Կտորն ընկաւ — սխալ կացաւ:

Իսկ սներես կատուն յանկարծ
 Ետ ա դառնում ու բարկացած
 Փշտացնում ա, մրթամ¹ նոր եմ
 Յրցամ տուել, թէ որ կարեմ:




ԳՐԵՆԵՐ ՎԱՐՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12. Արտագրեցէր հետեւալ գօրական ածունները եղակի թուով:
 Տներ: Աչքեր: Բաղաքներ: Մարդիկ: Դէզեր: Երեկոներ: Մա-
 զեր: Օղակներ: Մայրեր: Տեղեր: Աթոռներ: Եզներ: Առիւծներ:
 Բզէզներ: Շղթաներ: Պոզեր: Լորեր: Կսմայք: Չուաններ:
 Օր ի ն ա կ. — Տներ: — տուն: Աչքեր — աչք:
 13. Արտագրեցէր հետեւալ նախդասութիւնները և ե ն թ ա կ ա ն ե ռ ի
 տակ գէծ քաշեցէր:
 «Բոթոթը խաղում է: Եղբայրս տաքանում է: Կատուն չանկոնց:
 Պապը ձերացել էր: Որդին բարկացաւ: Չուկը լողում է: Աղախինը
 հառաչում է: Հիւանդն առողջացաւ: Ամանը կտորուեցաւ:
 14. Արտագրեցէր նոյնը յօգնակի թուով:
 Օր ի ն ա կ. — Բոթոթները խաղում են...»

19. ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿԸ

Մի անգամ ճնճղուկը կամեցաւ գօտով տիրել ծիծեռնակի
 բնին և այնտեղ բնակուել: Բնից արտաքսուած ծիծեռնակն

¹ Մրթամ — իբր թէ:



աղաղակ բարձրացրեց, որի վրայ խակոյն հաւարուեցան նրա ընկերներն և սկսեցին յետ ու առաջ անել բնի մօտ. նրանք մտիկ էին տալիս ներս, աղաղակում էին, կարծես այգպիսով կամենում էին թշնամուն գուրս անել բնից: Բայց կամակոր ճնճուկը ներս էր քաշուել բնի խորքը և գուրս գալու միտք չունէր: Վերջապէս տեսնելով որ ոչինչ չի օգնում, ծիծեռնակները բոլորը միասին յանկարծ անհետացան: նրանք թռան-գնացին մօտիկ ճահիճը, կրտուցներով մի-մի փոքրիկ կտոր ցելա առան, եկան, միքանի ըոպէի մէջ ծածկեցին բնի մուտքը: Այսպէս մեր յանգուզն ճնճր-գուկը բնի մէջ փակուած մնաց և սովա-մահ եղաւ:

20. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՊԱՀԱՆՁԸ

Մեզնից շատ առաջ մի օձ երևեց
 Եւ ողջ աշխարհին ահ, սարսափ բերեց.
 Անուն կենդանի, շարժուն— շնչաւոր
 Պէտք է չթողնէր օձը ահաւոր:
 Բայց դեռ չսկսած ահուելի գործը,
 Խորամանկութեան դիմեց շար օձը՝
 Կանչեց մոծակին, պատուիրեց նրան,
 Որ մի օրուայ մէջ գայ, ասէ իրան,
 Թէ ինչ շնչաւոր, թռչուն, կենդանի,
 Համեղ և անուշ միս, արիւն ունի:
 Թռաւ մոծակը, պարտքը կատարեց
 Եւ միայն մարդու արիւնը ընտրեց:
 Դարձաւ, որ պատմէ արքայ վիշապին,
 Բայց նա պատահեց իւր եկած ճամբին

Ծիծեռնակին, որ հարց ու փորձ արեց,
 Թէ ուր էր եկել և ի՞նչ կատարեց:
 Մոծակը մէկ-մէկ ամենը պատմեց
 Եւ վերջն էլ մարդին «թշուառ» անուանեց:
 — Ինչո՞վ իմացար, սիրելի մոծակ,
 Որ քաղցրը մարդու արիւնն է միակ:
 — Ահա թէ ինչով, — լեզուն նա հանեց,
 Իսկ ծիծեռնակը, կտրեց, փախցրեց:
 Գնաց մոծակը, կանգնեց օձի դէմ,
 Չկարաց խօսել, լուռ էլ էր արդէն.
 Արիւն էր գնում նրա բերանից,
 Լեզուն պոկուել էր իրա արմատից:
 Օձը հասկացաւ — թէ արիւն սիրէ,
 Ինքն էլ իւր լեզուն պէտք է գոհ բերէ,
 Ուստի շար միտքը թողեց, հեռացաւ,
 Քաշուեց քարափը, այնտեղ թաք կացաւ.
 Մոծակն էլ քաղցր արեան ծարաւի
 Մարդին կծելով անլեզու կապրի.
 Իսկ ծիծեռնակը, երբ մարդ է տեսնում,
 Բաց դաշտի միջին առաջն է կտրում,
 Վրայ է վազում, շուրջը պտրտում,
 Օձից փրկելու իւր վարձն է ուզում:



21. ԾԻԾԵՌՆԱԿԸ ՊԱՀԱՊԱՆ

Մեծ ուրախութիւն և ցնծութիւն է բազում ու պարտէզում:
Ճնճողակները ծըրվրում են, կաշաղակները դըրվում,
թուխարկանը կըշկըշում է, կարծես ախ ու վախ է քաշում, որ
զիժ ճուտերը իրան չեն լսում, ցաք ու ցրիւ են եղել, էլ չի կա-
րողանում նրանց հաւարել:

Մէկ էլ՝ լսուեց ծիծեռնակի սուր ծըրվոցը: Իսկոյն ամեն բան
փոխուեց:

Ճնճողակները դէս ու դէն փըռուացին. որը թփերի մէջ թաք
կացաւ, որը կաուրի տակ, ոչն էլ մտաւ կանեփների մէջ ու տապ
արեց:

Ճուտիկները լեղապատառ վագեցին, կուշ եկան թուխարկա-
նի թևերի տակ, սուս կացան:

Մի ակնթարթում ամեն տեղ լուծիւն տիրեց: Միայն ծի-
ծեռնակն էր, որ սուր-սուր ձայնով անդադար ծըրվում էր:

Չափարի յետեից ահա վեր սլացաւ աւազակ բազէն՝ լայն
թևերը ծանր թափահարելով: Նա դեղին աչքերը ման էր ածում
բազի ու պարտէզի ամեն քունջ ու պուճախը: Թուխականը՝ փե-
տուրները ուղղրած՝ թևերը տարածել էր ճուտիկների վրայ, եր-
կարացրել էր վիզը, կատաղութիւնից դողդողում, կուռի էր պատ-
րաստում:

Բազէն պտտում էր բակի գլխին և աւելի ու աւելի ներքև
իջնում: Թուխարկանը յուսահատ օգնութիւն էր կանչում: Իսկ ծի-
ծեռնակներն աւելի են ծըրվում, աւելի են ականջ ծակում իրանց
ձայներով ու ամեն կողմից թռչում են աւազակի վրայ, կարծես
ուզում են մաս-մաս անել նրան:

Չուտով գուրս վագեց տանից տատը թոռնիկի հետ և սկսեց
քշել բազէին: Բազէն տեսաւ, որ այստեղ իւր ձեռքը ոչինչ չի
ընկնիլ, թուաւ, հեռացաւ դէպի խիտ անտառը:

Իսկ տատը խրատում է չարաճճի թոռնիկին.

— Տես, ձեռք չտաս, Օննիկ, ծիծեռնակի բնին, նա մեր ճու-
տերի պահապանն է:

22. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բուն էր շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուան բունն էր յիշում:

Մէկ անգամ էր նա բուն շինել
եւ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ, վերադարձին,
Բունն աւերակ էր գտել:

Այժմ նորից բուն էր շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուան բունն էր յիշում:

Նա յիշում էր անցած տարին
Իւր սնուցած ձագերին,
Որոնց ճամբին յափշտակեց
Արիւնարբու թշնամին:

Բայց նա կրկին բուն էր շինում,
Ե՛ւ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուան բուն էր յիշում:

23. ԱՌԻԻԾԸ ԵՒ ՄՈՒԿԸ



Առիւծը քնած էր: Մի մուկը վագեց,
անցաւ նրա վրայով: Առիւծը գարթնեց և
բունեց նրան: Մուկը սկսեց խնդրել, որ
արձակէ իրան:


— Թո՛ղ ինձ, — ասաց նա, — դրա փոխա-
րէն ես քեզ լաւութիւն կանեմ:

Առիւծը ծիծաղեց այդ խօսքերի վրայ,

բայց էլի աձակեց մկանր:

Միրանի ժամանակից յետոյ առիւծը որսորդների ցանցի մէջ ընկաւ: Նա զարնուբելի կերպով մոնչում էր և քաշքշում ցանցի թօկերը, բայց աւելի խրճրճում էր նրա մէջ: Մուկը լսեց առիւծի մոնչոցը. նա հաւաքեց իւր ընկերներին, որոնք եկան, իրանց սուր ստամներով կրքձեցին, կտրատեցին ցանցի թօկերը և առիւծին ազատեցին թակարդից:

—Յիշում ես,—ասաց այն ժամանակ մուկն առիւծին,—որ դու ծիծաղում էիր ինձ վրայ և չէիր կարծում, թէ ես քեզ լաւութիւն կարող եմ անել: Այժմ տեսնում ես, որ մկնից էլ կարելի է լաւութիւն սպասել:



24. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

—Ընկել եմ ճանկդ, դէհ, ուտում ես, կեր, «էլ ի՞նչ ես խառնում իմ դառը ցաւեր. «Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է, «Խեղճ ձագս բնում անտէր մնացել է»:
Ասաց մի խեղճ մուկ քնիւրաւ կատուին,
Որ ճանկել նրան, դրել էր տակին:

—Մի՞թէ ուտելն է մենակ իմ ուղած,—
Պատասխան տուեց կատուն բարկացած:
—Ամեն մի ձայնդ, քաղցը ծրվճրվոցդ
«Որ ախանջս է ընկնում, ու այդ թուլանալդ
«Տեսնելիս՝ սիրտս այնպէս է ցնծում,
«Որ կարծում եմ, թէ նոր կեանք եմ ստանում»:

ԳՐԸՆՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

- 15. Արտագրեցէք հետեւեալ չատուկ գոյական անունները:
Աստուած: Յիսուս: Աննա: Վարդան: Վահան: Տփխիս: Արարատ: Արագած: Արաքս: Ծիրակ: Երեւան: Էջմիածին: Ռուսաստան: Հայաստան: Փրանսիա:
- 16. Արտագրեցէք «Առիւծը և մուկը» յօդուածից բոլոր հասարակ գոյական անունները:
Օրինակ:—Առիւծ: Մուկն:
- 17. Արտագրեցէք և ենթականեր տեւացրէք:
Չին (ո՞վ) խրինչում է: ... (ո՞վ) թոչուն է: ... (ո՞վ) գրում է: ... (ի՞նչը) դառն է: ... (ի՞նչը) կաթկաթում է: ... (ո՞վ) հագնուեց: ... (ո՞վ) վարում է: ... (ո՞վ) նստած է: ... (ո՞վ) թոչում է: ... (ի՞նչը) քանդուեց:
- 18. Գրեցէք ձեզանից միքանի չատուկ գոյական անուններ:

25. ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿԱՔԱԻԸ

Մի անգամ կարան անտառից դէպի դաշտ թռչելիս՝ պատահեց որսորդին:
—Միրելի որսորդ,—ասաց նա.—Աստուած սիրես, ձագերիս չսպանես. նրանք այս անտառի բոլոր թռչուններից ամենասիրուններն են:
—Չատ բարի, կարանիկ,—պատասխանեց որսորդը.—եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կրինայեմ, ձեռք չեմ տալ:

Վարարը հանգիստ սրտով թուալ-գնաց իւր գործին: Բայց երեկոյեան, տուն վերադառնալիս, ինչ տեսնի խեղճ մայրը: Որսորդը մաղախի մէջ դրած՝ տանում էր փոքրիկ կարաներին, նրա սիրասուն ձագերին:



— Ախ, անխիղճ որսորդ, — մոր մորած սրտով ասաց մայրը. — չէ որ դու խոստացար ինայել ձագուկներին. ինչո՞ւ խօսքդ չպահեցիր. ինչո՞ւ սպանեցիր խեղճ ձագուկներին. ամօթ քեզ, ստախօս մարդ:

— Բայց չէ որ դու ինձ ասացիր, թէ քո ձագերն այս անտառի ամենասիրուն թռչուններն են, այն ինչ իմ քսպանածները, ինչպէս դու էլ տեսնում ես, ահա այս մոխրագոյն թռչնակներն են, — պատասխանեց որսորդը:

— Ախ, — բացազանչեց որդեկորոյս մայրը, — միթէ՞ դու չբիտեա, որ ամեն մի մօր համար ամենասիրունն ու ամենազուրկանը իւր հարազատ զուակն է:

26. ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈՒՍԱԿԸ

Մի թուխակ տան մէջ այնքան ճրգոյաց, շրվազ, որ տան տէրը նրան տանից գուրս անել տուեց:

Թուխակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը և նա սկսեց գանգատուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու:

— Աչքիս լոյս, — ասաց թուխակը սոխակին. — ես լսել եմ, որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ՝ լսես իմ երգերը և ասես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը դիւր չեն գալիս:

— Զատ լաւ, — ասաց սոխակը. — երգիր, տեսնեմ



ինչպէս ես երգում: Ես ուրախութեամբ կըլսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը:

Թուխակն սկսեց իւր բոլոր ճարտարութիւնը թափել. հաւի պէս կըշկըշաց, շան պէս հաչեց, կատուի պէս մրաւեց, մի խօսքով կըկնեց իւր բերան արած բոլոր բառերն ու երգերը:

— Այժմ, սիրելիս, — ասաց նա սոխակին. — խնդրեմ՝ ասես, դու լսած կո՞ս մի այդպիսի բան երբեք:

— Սիրուն թուխակ, — պատասխանեց սոխակը. — դու ինձ կընկնես, եթէ քեզ մի նկատողութիւն անեմ: Դու երգում ես ուրիշների ձայնով, ուրիշների երգեր ես երգում: Եթէ ունենաս քո սեպհական երգը, էլ քեզ տանից գուրս չեն անիլ:



27. ԳԵՐԻ ԹՈՒԹԱԿ

Իմ տիկինը կերակրում է ինձ նշերով, շաքարով, իմ վանդակը գարդարում է իւր քնքշիկ ձեռներով:

Բայց գէթ մի ժամ ուրախ լինել, ես չեմ կարող իմ կեանքում, Երբ յիշում եմ, թէ գերի եմ Այս նեղ, փակուած վանդակում:

28. ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՀԱՐՈՒՍՏԸ

Մարդու մէկը մի թուխակ ունէր, որին նա սովորեցրել էր այս խօսքերն արտասանելու. «Դրան կասկած չկայ»: Զատ ան-

զամ, ամբողջ օրը, թուլթակն այս խօսքերն էր կրկնում անդա-
զար և ամեն հարցմունքի նոյն պատասխանն էր տալիս:

Մի օր տէրն առաւ նրան և շուկայ տարաւ վաճառելու:
«Գնեցէք իմ թուլթակը, — կանչում էր նա, — քսան ոսկի արժէ սա»:

Մի հարուստ մարդ քսան ոսկու անունը լսելով, զարմացաւ,
և, թուլթակին դառնալով՝ հարցրեց.

— Պապկան, մի՞թէ դու քսան ոսկի արժես:

— Դրան կասկած չկայ, — պատասխանեց թուլթակը:

Հարստին այնքան դիւր եկան այդ խօսքերը, որ նա գնեց
թուչունը և տուն տարաւ:

Կարճ ժամանակից յետոյ նա զղջաց իւր արածի վրայ և մի
օր՝ վանդակի առաջ կանգնած՝ բարձր ձայնով ասաց ինքն իրան.


— Յիմար չէի, որ սրա համար այսքան փող ջուրը ձգեցի:

— Դրան կասկած չկայ, — գոչեց թուլթակը:

Եւ այս անգամ թուլթակն իրաւունք ունէր այդ ասելու:

29. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՒՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Փորրիկ քուռակը դաշտում վազվզում էր մօր շորս կողմը,
պլուխը թափ տալիս, պոչը շարժում, ուրախ-ուրախ խրինջում,



Իսկ նրա մայրը հանդարտ արածում էր և ուշի-ուշով նայում,
թէ չլինի մէկը զիպչի նրան, մի շարիք հասցնի:

— Ինչո՞ւ դու էլ ինձ հետ չես վազում, չես խաղում, — նե-
ղացաւ քուռակը մօր վրայ:

— Զու՛նկս, — ասաց պառաւ ձին իւր ձագուկին, — դու խաղաս
և գուլարճացիր, քանի դեռ փոքր ես. բայց դու էլ երբ մեծանաս
և սկսես աշխատել — ամբողջ օրը ծանրութիւններ կրել, շարշար-
ուել, այն ժամանակ այդ յիմարութիւնները մտքովդ էլ չեն անց-
նիլ: Իսկ երբ քեզ նման մի շարածճի էլ կունենաս, այն ժամա-
նակ արդէն դու էլ ինձ նման կրհետուես, թէ չլինի նրան մի փոր-
ձանք պատահի:

Գ Բ Ը Ի Ո Ւ Վ Ը Ը Բ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Բ

19. Արտագրեցէք «Թուլթակն ու սոխակը» յօդուածից բոլոր հասարակ
գոյական անունները:

20. Արտագրեցէք հետևեալ հաւաքակաՆ գոյական անունները:
Հօտ: Գունտ: Անտառ: Զօկ: Զօրք: Երամ: Վրճմակ: Հորան:

Ամբոխ: Ժողովուրդ:

21. Արտագրեցէք հետևեալ նախադասութիւնները և փակագծերի
ձէջ հարցեր աւելացրէք: Հարցերի տակ գիծ քաշեցէք:

Քահանան (ի՞նչ է անում) աղօթում է: Աստուած (ի՞նչպէս է):
ողորմած է: Վարդը (ի՞նչ է) ծաղիկ է: Մարդը (...) մտածում է:
Ոչխարը (...) մայրմ է: Արծաթը (...) մետաղ է: Աշակերտը
(....) աշխատում է: Երկիրը (....) կլոր է: Օրը (....) քացուն-
ցաւ: Կրակը (....) հանգաւ:

30. Զ Ի Ն Ե Ի Է Շ Ը

Մի բեռնաւորում էլ և մի պարապ ձի միասին ճանապարհ
էին գնում: Խեղճ էլը անքում էր իւր ծանր բեռան տակ:

— Աղաչում եմ քեզ, — խնդրեց նա ձիուն, — օգնիր ինձ, բե-
ռիցս մի քիչ դու վեր առ:

Ձին ականջ չղրեց իւր ընկերոջ աղաչանքին: Ճանապարհին
էլը վայր ընկաւ և շունչը փչեց: Տէրը վեր առաւ իշի բեռը, նրա
կաշին էլ քերթեց և ձիուն բեռնեց:

—Վայ ինձ,—հառաչեց ձին.—եթէ ես օգնէի խեղճ իշին,
նա կենդանի կրմնար և իմ բռնն էլ այսքան ծանր չէր լինի:

31. ԷՇՆ ԱՌԻԻԾԻ ՄՈՐԹՈՎ

Մի անգամ էշը մի առիւծի մորթի գտաւ:

—Օ, սա ինձ պէտք կըզայ,—ասաց նա,—վեր առաւ, փաթաթուեց նրա մէջ և սկսեց հպարտ-հպարտ ման գալ դաշտում, հէնց իմանա՛ առիւծ լինէր: Իրաւ, դաշտում եղած բոլոր կենդանիները — եզր, ձին, նապաստակը, գորտը, մողէսը և մինչև անգամ օձը նրան առիւծի տեղ ընդունեցին և ա՛ն ու սարսափով այս ու այն կողմ փախան:

Էշը շափազանց ուրախացաւ:

—Տեսնում ես,—ասաց նա աղուէսին, որն այդ ժամանակ անցնում էր նրա մօտով.—ինչպէս բոլոր կենդանիները վախենում են ինձանից և փախչում. լաւ կըլինի, որ դու էլ գգուշանաս:

Բայց խորամանկ աղուէսը առիւծի մորթի տակից նկատեց իշու մոռթը, ծիծաղեց և ասաց.

—Յիմար աւանակ, այդ քեզանից չէ, որ վախենում են, այլ առիւծից: Եթէ ճանաչեն, որ առիւծ չես, էլ ոչ որ չի վախենալ և այն ժամանակ փայ քո գլխին: Լաւ չէ ուրիշի անունով վախեցնելը:

Էշը վախեցաւ, վայր գցեց առիւծի մորթը և փախաւ տիրոջ տունը:



32. Կ Թ Ո Ւ Կ Ո Վ

Մարդու մէկը մի կով ունէր: Նա օրեկան մի կճուճ կաթն էր տալիս իւր տիրոջը: Մի անգամ այդ մարդու մօտ հիւրեր պէտք է գային. նրան շատ կաթն էր հարկաւոր. այդ պատճառով նա տասն օր չկթեց իւր կովը, կարծելով, թէ տասներորդ օրը կովը տասը կճուճ կաթ միանգամից կտայ: Բայց իր քրքան զարմացաւ խեղճ մարդը, երբ վերջին օրը կովն առաջուանից բիշ կաթ տուեց, որովհետև երկար ժամանակ չկթելուց նրա կաթը ցամաքել էր:

33. ԿԹԵԼ ՈՒ ՀԱՐԵԼ

—Ասա, տեսնեմ, մեր գիւղերում կովերն ինչպէս են կթում:

—Ահա այսպէս են կթում.

Հորթը կապում մօր ծնկից,

Ծիծը խլում գաւակից,

Կովկիթն իրան ձեռքն առնում,

Ապա կողքին կրկրզում—

Փը՛շշ, բը՛ժժ...

Փը՛շշ, բը՛ժժ...

Ահա այսպէս են կթում,

Փոքրիկ հորթին լացացնում:

—Ո՞նց են հարում խնոցին.

Հէնց այսօր էլ հարեցին:

—Ահա այսպէս հարեցին.

Թոկը ծառից կապեցին,

Հաստ խնոցին կախեցին,

Երկու օրուայ հաւաքսր

Նրա մէջը ածեցին,

Տաք ու հով ջուր խառնեցին

Եւ ծայրերից բռնելով,

Տարան, բերին, շարժեցին՝
Թ՛ը՛րխկ, չը՛րխկ...
Թ՛ը՛րխկ, չը՛րխկ...

Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին:

Գ Բ Ե Ի Ո Ր Վ Ե Ր Փ Ո Ր Թ Ի Ի Ն Ի Ր

22. Արտագրեցէք հետեւու նախադասութիւնները և ստորագրեալներէ տակ գեծ քաշեցէք:

Կովը որո՞նում է: Չին վազում է: Խոտը չորացաւ: Ոգնին կենդանի է: Թիխնոր միջատ է: Պատկերը գեղեցիկ է: Երկինքը ամպամած է: Հիւրերը կըզան: Գետը ցամաքեց: Մարդը զարմացաւ: Գիւղացին հեծում է:

23. Արտագրեցէք նոյնը յոգնակի թուով: Ստորագրեալներէ տակ դարձեալ գեծ քաշեցէք:

Օրինակ: — Կովերը որո՞նում են:

24. Արտագրեցէք առանձին-առանձին յատուկ, հասարակ և հաւաքական գոյական անունները:

Յարութիւն: Երկաթ: Կամար: Զօլ: Մարդարիտ: Եղան: Անտառ: Ոսկի: Մարմին: Հրաշնայ: Հեղինէ: Մատիտ: Հրանոյշ: Գունդ: Զօրք: Հայկունի: Արամ: Թուղթ: Նկեղեցի: Մուկուս: Կուր: Մասիս: Սար: Գետ: Աստղ:

34. ԳԱՌԸ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ


Մի օր մէկ գառը, չգիտեմ՝ ինչ էր,
Խելքին ինչ տեսակ քամի էր փչել,
Գցեց իւր վրայ մի գայլի մորթի,
Գնաց, խառնուեցաւ հետը իւր հօտի:

Բայց երբ շների աչքովն ընկաւ,
Ասին՝ անտառից ահա գայլ եկաւ.

Գոռում-գոչումով վրայ վազեցին,
Բերաններն առան ու գրգրեցին:

Հաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ,
Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ,
Ու խեղճ գառնուկը կատղած շների
Սուր ատամներից հազիւ փրկուեցաւ:

Եւ մեր գառը հազիւ-հազ,
Արիւնաթաթախ ու նուազ,
Թոյլ ոտները քաշ տալով՝
Հասաւ գոմը մի կերպով:



35. Ա Գ Ռ Ա Ի

Ազուար տեսաւ, որ սիրամարգները շատ գեղեցիկ են, փետուրներն այնպէս փայլուն, գոյնզգոյն, որ կարծես թագաւորի ծիրանի լինին:

— Ինչո՞ւ եմ ես այս սև ու յիմար ազուաների շարքն ընկել, — մտածեց նա, — արի՛, ես էլ այդպիսի սիրուն փետուրներով զարդարուեմ. սիրամարգներն ինձ սիրով կընդունեն իրանց մէջ, իսկ անճոռնի ազուաներն, ինձ նայելով, զարմացած, հիացած կըմնան:



Եւ սիրամարդի սիրուն փետուրներ ճարելով՝ զուգուեց-զար-
զարուեց ու գնաց սիրամարդ-
ների հետ խառնուեցաւ: Բայց
այնտեղ նրան շուտով ճանա-
չեցին. սիրամարդները վրայ
թափուեցան, կոցահարեցին,
կեղծ փետուրների հետ խ-
կականներն էլ պոկեցին և
իրանց միջից դուրս արին:

Անարգուած, փետուրնե-
րից զրկուած ազուար գնաց իւր ազգականների մօտ, բայց նրանք
էլ երես դարձրին և շրնդունեցին նրան:

36. Փ Ի Ղ

Հնդկացին մի փիղ ուներ: Տէրը նրան շատ վատ էր կերա-
կրում և շարունակ գործ անել էր տալիս: Մի օր փիղը բար-
կացաւ և իւր տիրոջը ոտնատակ տուեց, սպանեց: Հնդկացու
կինը արտասուքն աչքերին բերեց իւր որդոցը, զցեց փղի ոտնե-
րի տակ ու ասաց.

—Փիղ, դու սպանեցիր հօրը, սրանց էլ սպանիր:

Փիղը նայեց մանուկներին, յետոյ ամենից մեծին կնճիթով
վեր առաւ, զրեց իւր պարանոցի վրայ և այնուհետև սկսեց նրան
հնազանդուել և աշխատել նրա համար:

37. ՓԻՂՆ ՈՒ ՔՈԹՈԹԸ

Մէկ փիղ առած ման կածէին
Փողոցներից անցընելով,
Յանկարծ բոթոթ մի կռուասէր
Վրայ վագեց խիստ հաչելով:

—Չայնդ կտրիր, զրացի եղբայր,
Ասաց զամբօր մեր բոթոթին.—
«Չես տեսնու՞մ, որ ծաղր եղար
«Բոլոր շների դու առաջին»:

«Ի՞նչ ով ես և փիղը ո՞վ.
«Ահա քո հեքդ է բռնու՞մ,
«Իսկ նա հանդարտ և անխռով
«Հաչելուդ էլ ուշ չի դնու՞մ»:
—Հա-հա հա-հա, դու չիմացար,—
Պատասխանեց մեր քոթոթը,—
«Ու իմ միտքը չհասկացար.
«Հեռուից կանչե՞մ, կուուե՞մ հետը,
«Որ մեծ բանի մէջ երևամ,
«Ուրիշներին էլ ասել տամ.
—Տեսէք, քոթոթն ինչպէս քաջ է,
«Որ փղի դէմ էլ կըհաչէ»:

38. Ա Ն Չ Ա Ի Ա Կ Ե Ղ Ն Ի Կ Ը

Անտառին մօտիկ, այրի մէջ, մի սիրուն եղնիկ իրան համար
բուն էր շինել և իւր ձագուկների հետ երջանիկ ապրում էր: Բայց
երկար շտեպ նրա երջանկութիւնը: Նրա փոքրիկ, սիրունիկ ձա-
գերը հիւանդացան և մեռան. մայրը, կսկծից համարեա խելա-
զարուած, թողեց բունը և իւր վիշտը մոռանալու համար, սկսեց
թափառել սար ու ձոր: Մի օր նա տեսաւ, որ մի որջում երկու
զայլի նորածին լակոտ քաղցածութիւնից նուազած՝ ընկած չեն.
ո՞վ չփռէ, ինչ էր պատահել նրանց մօրը—թակարգն էր ընկել,
թէ ոչխար փախցնելիս հովուի շներն էին զգգել նրան: Գթա-
սիրտ եղնիկը խղճաց թշուառ ձագերի վրայ:

—Արի,—մտածեց նա,—վեր առնեմ այս խեղճ, անտէր ձագե-
րին և կաթնովս կերակրեմ, մեծացնեմ:

Ինչպէս որ մտածեց, այնպէս էլ արաւ:
Անտառից ոչ հեռու ապրում էր մի ճգնաւոր. նա մի օր նկատեց,
թէ ինչպէս եղնիկը կերակրում է զայլի ձագերին և ասաց նրան.

—Է՛յ, անխելք եղնիկ, ես շատ զարմանում եմ, թէ՛ դու
ինչպէս ես սնուցանում այդ զայլի լակոտներին. մի՞թէ չգիտես,
որ զրանք կըմեծանան, զայլ կըզառնան և զուցէ առաջինը քո
արիւնը խմեն:

—Այդ բանը ես չեմ էլ մտածում. ես ուզում եմ միայն բարիք գործել,—պատասխանեց եղնիկը:

ԳՐԵՒՈՐ ՎՆՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

25. Արտագրեցէք հետեւեալ ն իւր Թ ա կ ա ն առարկաների անունները:
Աղ: Բամբակ: Շաքար: Գնդակ: Սրինգ: Մեխակ: Մարդ: Փետուր: Ժիրան: Արօր: Երկիր: Կացին: Սանձ: Փայտ:

26. Արտագրեցէք հետեւեալ մտաւոր առարկաների անունները:
Հոգի: Հրեշտակ: Եռանդ: Քաջութիւն: Ապրուստ: Իմաստութիւն: Ժուլութիւն: Կամք: Երջանկութիւն: Սէր: Ատելութիւն:

27. Արտագրեցէք և հարցերին համաձայն ստորագեալներ աւելացրէք:
Ժիծեռնակը (ի՞նչ է անում) ծըլվըլում է. Գորտն (ի՞նչ է անում) Մշակը (ի՞նչ կանէ) Ագուարը (ի՞նչ է) Կօշկակարը (ի՞նչ արտ) Հունձը (ի՞նչ եղաւ) Ծովը (ի՞նչպէս է) Մեղը (ի՞նչպէս է)

39 ՈՉԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Մի անգամ գայլերն ասացին ոչխարներին.

—Մեղքերս ի՛նչ թագցնենք — մենք ձեզ հետ շատ վատ ենք վարում և անմեղ տեղը ձեր արիւնը թափում. դուք էլ, իհարկէ, մեզանից վախենում էք և խիստ ատում էք մեզ: Բայց գիտէ՞ք զրանում ով է մեղաւոր—ձեր շար շները. նրանք միշտ աշխատում են մեզ ջնջել, կոտորել, էհ, մենք էլ մեր վրէժը ձեզանից ենք հանում: Սկէք, լսեցէք մեզ, այդ շներից թողէք, հեռացէք. մենք ձեզ միշտ կըպաշտպանենք:



Յիմար ոչխարները հաւատացին նրանց և ծածուկ հեռացան շներից: Գայլերն էլ հէնց այդ էին ուզում. նրանք վրայ թափուեցան, անպաշտպան ոչխարներին խեղդեցին ու կերան:

40. ԱՂՈՒՔՄՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Խորամանկ աղուէսը, քաղցած-ծարաւ, փորը վեց-վեց անելով, ման էր գալիս: Նա տեսաւ, որ մի տեղ թակարդ է դրած և նրա վրայ էլ մի մեծ կտոր պանիր անցկացրած: Խորամանկն ուզում էր պանիրը ձեռք ձգել, բայց թակարդից էր վախում:

Աղուէսի բանն յաջողուեց: Հեռուից մի գայլ էր գալիս: Աղուէսն ինքն իրան ասաց.

—Այս շատ լաւ եղաւ. թակարդի գօրութիւնը այս յիմար գայլի վրայ կըփորձեմ:

Գայլը, մօտենալով աղուէսին և պանիրը տեսնելով, զարմացած հարցրեց.

—Աղուէս եղբայր, ի՛նչպէս է, որ պանիրը չես կերել:

—Այսօր մեզ պաս է—օրը ուրբաթ է, չեմ ուզում մեր պապական օրէնքը խախտել. եթէ ուզում ես, գայլ եղբայր, դու ա՛նուշ արա:

Գայլը՝ պանիրն մօտենալուն պէս՝ ընկաւ թակարդը, իսկ պանիրը մի կողմ թռաւ: Աղուէսն իսկոյն խլեց պանիրը և սկսեց հանգիստ անուշ անել:

—Տօ՛, անիրաւ աղուէս,—ասաց գայլը,—հապա ատում էիր, թէ պան է, օրը ուրբաթ է:

—է՛, բան չունիս, գայլ եղբայր, ուրբաթը քո գլխին եկաւ, ինձ համար այժմ շաբաթ է,—ասաց աղուէսն ու հեռացաւ:

41. ԿԱՔԱԼՆ ՈՒ ԱՂՈՒՅՍԸ

«Կա-կա-քալ, կա-քալ, կա-կա-քալ, կա-քալ»...

Ձայն տուաւ ծառից մի սիրուն կաքաւ,
 Իսկ ծառի տակին, մի փոքր դէսը՝
 Թուքը կուլ տուաւ սոված աղուէսը:
 — Պան, տունդ շինուի,— գոչեց զարմացած,—
 Իսկ ես այնպէս եմ եղել համոզուած,
 Որ կոկորդով ես դու միշտ ձայն հանում,
 Բայց սխալուած եմ եղել այդ բանում:
 Եւ ո՞վ է կարող անց կացնել մտքով,
 Որ դու, կաքաւիկ, երգում ես աչքով»:
 — Ո՛չ, սխալուում ես, խորամանկ աղուէս:
 — Ա՛խ, ի՞նչ ես ասում, աչքով տեսայ ես:
 Լաւ, թէ այդպէս է, այդ ծառից վեր եկ,
 Ասածս ճշտեմ, հաստատեմ մէկ-մէկ:
 Վեր եկ, աչքերդ փակեմ իմ թաթով,
 Տեսնեմ՝ կարո՞ղ ես երգել կոկորդով:
 — Է՛հ, էլ ինչ վեր գամ, քանի որ սուտ ես:
 Ուզում եմ՝ վեր գամ, որ դու ինձ ուտես:
 — Օ՛, ես էլ երբէք կաքաւ չեմ ուտում,
 Երգուել եմ արդէն ու տուել խոստում:
 Եթէ սրբազան երգումս քանդեմ,
 Ու երթամ տուած խոստումիս ընդդէմ,
 Էլ այն ժամանակ փրկութիւն չկայ,
 Կրմեռնեմ իսկոյն, Աստուած է վկայ:

Աղուէսի խօսքին կաքաւն հաւատաց,
 Թեքը բացեց, թռաւ դէպի ցած:
 Նենգ աղուէսն իսկոյն բացաւ իւր բերան,
 Հօփ արաւ յանկարծ ու բռնեց նրան:
 — Ա՛յ յիմար կաքաւ, խելքիդ ան անեմ,
 Միտդ վայելեմ, երթամ խանգ անեմ:

— Սման, աղուէս ջան, ըն ընչին ընդհան:
 — Էլ ու չ է արդէն, պրօ՛ել է քո բան:

Կաքաւը տեսաւ, որ էլ հնար չկայ,
 Եւ ճանը շուտով, ուր որ է կրգայ,
 — Ուզում եմ, ասաց, ի՞նչու չէրատակ,
 Քանի չեմ եղել անմեղ նահատակ,
 Սովորեցնել մի գեղեցիկ բան,
 Որ չմոռանաս դու ինձ յաւիտեան:
 Նախ քան ինձ կուտես, երեսդ շուռ տուր
 Ի՛չպի արևելք, չոքած մտիկ տուր
 Ու լարձր երգիր, իբրև մի գուսն:
 «Աստուած, տուր ինձ ոյժ համբերութեան»:
 Ապա դու հանգիստ վայելիր իմ միտ
 Ու էլ չես քաղցիլ ամբողջ վեց ամիս:

Շուռ գալ ու երգել հեշտ է ու յարմար,
 Այդ մի մեծ բան չէ աղուէսի համար:
 Ուտերև համար գոնէ կէս տարի
 Էլ գլոխը չի տալ նա սար ու քարի:
 Եւ հէկ որ շրջուեց, բերանը բացաւ,
 Կաքաւ յանկարծ թռաւ, հեռացաւ:
 Աղուէս խաբուած, ապշած ու շուար,
 Նայեց ի՛նչ ու զէն, էլ կաքաւ չկար:
 — Ա՛յ, լիւիդ դիպչի քո սովորեցրած
 Գեղեցի բանը,— ասաց զայրացած,
 Ախ ու խի արաւ ու քաղցած փորով
 Հեռացաւ, գնաց մօտակայ ձորով:

42. ՊԱՌԱՒՆ ՈՒ ԳԱՅԼԸ


Քաղցած գլը որսի էր ման գալիս: Գիւղի մօտով անցնելիս՝ յանկարծ լեց, որ մի խրճիթում երեխան լաց է լինում, իսկ պառաւ տան ասում էր նրան:

— Չայնդ կտրիր, թէ չէ քեզ գայլին կրտամ:

Գայլը կանգ առաւ և այլևս չհեռացաւ խրճիթի մօտից: Նա սպասում էր, որ պառաւը երեխային իրան տայ: Սպասեց, սպասեց և յանկարծ նրա ականջին հասաւ պառաւի ձայնը, որ այս անգամ ասում էր.

— Մի լար, գառնուկս, ես քեզ գայլին չեմ տալ. նա գայլ թէ չէ, իսկոյն կըսպանենը:

«Ինչպէս երևում է, այստեղ ինչ որ ասում են, նրա հակառակն են կատարում», — մտածեց գայլը և թողեց, հեռացաւ գիւղից:



43. ԾԵՐԱՅԱԾ ԳԱՅԼԸ

Չար գայլը ծերացել էր. այս պատճառով մերումը դրեց հաշտուել հովիւների հետ: Ամենից առաջ նա գնաց ներ որջի մօտերը բնակուող հովուի մօտ:

— Պարոն հովիւ, — ասաց նա մեղմ ձայնով. — դա ինձ անուանում ես արիւնարբու կենդանի. երդում եմ ստեղծողիս անունով, որ ես շատ բարեխիղճ եմ: Այո, երբեմն ընկնում եմ հօտերի մէջ, բայց այդ բաղցածութիւնիցս է: Գու ինձ կերակրիր, հաւատացնում եմ, միշտ շնորհակալ կըլինիս. կուշտ ամանակս ես շատ հանդարտ կենդանի եմ:

— Ի՞նչպէս հաւատամ, քեզ նոր չեմ ճանաչում: Գու երբ կուշտ կըլինես, քանի որ սաստիկ ազահ ես, — պատասխանեց հովիւը. — ուրիշ դուրս բաղխիր:

Գայլը գնաց մի ուրիշ հովուի մօտ:

— Գիտես, հովիւ եզրայր. իմ հաշուիս նայելով տարին ամե-

նարիչը տասը կարող էի թռցնել քո հօտից: Իհարկէ, դու գրանով շատ անհանդիստ կըլինիս: Եթէ կամենում ես հանդիստ ու խաղաղ քնել տանդ, մինչև անգամ առանց շուն պահելու, կարծեմ ուրախութեամբ կըհամաձայնես տարին միայն վեց գառը տալ ինձ:

— Վեց գառը վեց ոչխար է, — պատասխանեց հովիւը. — ասա, ամբողջ հօտն ես ուզում, էլ ի՞նչ...

— Հնդով էլ կըբաւականանամ, — ասաց գայլը հառաչելով:

— Ծաղրում ես, — վրայ բերեց հովիւը. — հինգ ոչխար, ասելը շատ հեշտ է...

— Չորսն էլ չես տայ, — հարցրեց գայլը վիզը ծռելով:

— Ինչեր ես խօսում, — ասաց հովիւը, մէկն էլ չեմ տայ. յիմար եմ, ինչ եմ, որ հարկ տամ թշնամուս:

Գայլը գնաց երրորդ հովուի մօտ:

— Բարեկամ, — ասաց, — դուք ինձ շատ վատ աչքով էք նայում. ինձ ձեր թշնամին էք համարում: Ըստ լաւ, ասենք թէ թշնամի եմ. ինչ կարող էք անել ինձ դուք, չար հովիւներ: Եթէ չես ուզում ամբողջ հօտդ ոչնչացնեմ, տարին միայն մի ոչխար տուր ինձ: Հովիւը ժպտաց:

— Ասա, խնդրեմ, ինչո՞ւ ես ծիծաղում, — ասաց գայլը:

— Ո՞չինչ, այնպէս. բայց ասա, տեսնեմ՝ քանի տարեկան ես, — հարցրեց հովիւը կատակի ձևով:

— Ի՞նչ կարիք կայ իմ տարիքն իմանալու, — ասաց գայլը. — ինչ է, ո՞ւժս ես ուզում չափել: Մի վախենալ, դեռ այնքան ոյժ ունիմ, որ հեշտութեամբ կարող եմ ընկնել հօտիդ մէջ, խեղդոտել գառնուկներիդ ու փախցնել:

— Գնա, գնա, լաւ, — պատասխանեց հովիւը ժպտալով, — բանեցրու ուժդ՝ որտեղ կամենաս. քո ատամներիդ կերակուր չկայ այստեղ:

Նա գնաց չորրորդ հովուի մօտ:

— Այ հովիւ, ձայն տուեց գայլը համարձակ, — լսել եմ, որ պահպան շունդ չարդ տարել է: Պահիր ինձ քեզ մօտ շանդ փոխա-

նակ և կարող ես բոլորովին ապահով լինել, որ այն ժամանակ մեր ցեղից ո՛չ որ չի համարձակուի խէթ աչքով նայել ոչխարնե-րից վրայ:

—Չնտ ես սխալում,—պատասխանեց հովիւր.—ո՞ր լիմարը կրճամաձայնուի գողին իւր տան մէջ պահել. շատ լաւ կանես, որ գլուխդ ողջ հեռանաս այստեղից:

—Ա՛խ, ծերութիւն,—բացադանչեց գայլը՝ քթից մուխ հանե-լով,—այս օրուան էլ արժանացայ:—Այսպէս խօսելով՝ նա գնաց մի այլ հովուի մօտ, որ կաթն էր կթում:

—Արդեօր ճանաչո՞ւմ ես ինձ,—հարցրեց նրան:

—Քեզ թէ չեմ ճանաչում, քեզ պէս շատերին ճանաչում եմ,—պատասխանեց հովիւր՝ ոտքի կանգնելով և կնճռելով իւր լայն ճակատը:

—Ինձպէսնեղին, սխալում ես,—ասաց գայլը.—ես բոլորովին ուրիշ տեսակ գայլ եմ. կապրեմ բարեկամաբար ո՛չ միայն քեզ հետ, այլ և ամբողջ հօտից. ո՛չ մի ոչխար ո՛չ կրբունեմ, ո՛չ կուտեմ. լաւ է:

—Ամենալաւ լաութիւնն է,—ասաց հովիւր խոժոռած զէմքով:

—Անգութ աշխարհ, շնր մարդիկ,—ասաց ինքն իրան գայլը հեռանալով,—ամեն կողմից ուզում են մեր ցեղը բնաջինջ անել, ոչնչացնել: Բայց մեր ո՞ր մեղքերի համար, ո՞ւմն ինչ վնաս ենք հասցնում. միթէ մեզ ապրուստ չէ հարկաւոր: Ո՞ւր գնամ, ո՞ւմից օգնութիւն խնդրեմ. մտում է միանգամից շունչս փչել. ինչ բանի կարող եմ պէտք գալ, երբ տեղիցս էլ չեմ կարող շարժուել:

—Այսպէս մտածելով՝ նա գնաց վերջին փորձն անելու:

—Բարի հովիւ,—ասաց գայլը ցաւալի ձայնով,—խղճա ինձ վրայ, մի կտոր միս տուր, ահա քաղցից մեռնում եմ:

—Ա՛խ, գու փո՛ւշ կենդանի,—ասաց հովիւր բարկացած:—Մո-ռացել ես, որ իմ գառը տարար անտառը՝ անուշ արիւր, պատճառ բերելով՝ իբր թէ այն խղճուկը քո ջուրը պղտորում էր:

Ահա քեզ մտի կտոր,—ասաց ու իւր ահագին դագանակը հաս-ցրեց գայլի մէջքին: Թշուառ գայլը յանկարծ մի ճիշ արձակեց, ոտքերը ձգեց ու շունչը տուեց...

Գ Բ Ը Ի ՈՐ Վ Ե Ր Թ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ի

28. Արտագրեցէք առանձին-առանձին նկութական և մտաւոր առար-կաներէ անունները:

Միտք: Կարագ: Եղունգ: Զանասիրութիւն: Բժշկութիւն: Ժա-ղիկ: Հող: Զուր: Հրեշտակ: Եռանդ: Վէճ: Մանգաղ: Արօր: Գու-թան: Գարուն: Ոյժ: Աշուն: Զութակ: Դուր: Մաստակ: Տակառ: Ժիժաղ: Հանգստութիւն: Հատիկ:

29. Արտագրեցէք «Ոչխարներն ու գայլերը» յօդուածը եզակի թուով:

30. Հետևեալ նախադասութիւններից արտագրեցէք ստորագեււները լրացուցել բառերի հետ: Ստորագեււլ և լրացուցել բառի մէջ հար-ցեր աւելացրէք:

Եղբայրս սպասում է ընկերոջը: Սաթննիկը ջուր բերեց եղ-բորը: Որսորդը հրացանով արջին սպանեց: Աշակերտը սովորում է դասը: Ուսուցիչը պատժեց աշակերտին: Դարբինը մուրճով եր-կաթ է ծեծում: Հայրս ինձ խաղալիք գնեց:

Օրինակ: — Սպասում է (ո՞ւմ) ընկերոջը, Բերեց (ի՞նչ) ջուր (ո՞ւմ) եղբորը:

44. Ա Ր Ա Գ Ի Լ

Ա.

Արագիւնները կանգնած էին իրանց բնի վրայ, գլուխները մէկ երկինք էին բարձրացնում, մէկ երկիր խոնարհում, երգում, կրկրլայցնում:

—Այդ ինձ են բարև տալիս,—ասում է Մարիամը:
—Չէ, ինձ,—հակառակում է Արսէնը:
—Երուսիդ էլ են բարևում, ամբողջ գիւղին էլ,—ասաց տա-տը և նրանց վէճը վերջացրեց:

—Տես, տատի, ծտերն ինչպէս ուրախացել են,—ասաց Ար-
սէնը,—ինչպէս քաղցր ծըլլելում են:

—Ուրախացել են, անուշիկս, ուրախացել են. չէք տեսնում,
քանի հազար ծտեր արագիլի բնի ցախերի արանքումն են իրանց
համար բուն շինել: Ծտերը լաւ գիտեն, որ արագիլի ահից ոչ
ուրուր, ոչ կատու և ոչ մի ուրիշ թշնամի չի կարող նրանց բը-
նին մօտենալ, նրանց ձուերը խմել կամ ճուտերն ուտել: Հէնց
դրա համար է, որ արագիլների գալով պատիկ ծտերն այնպէս
ուրախանում են:

Բ.

—Տատի,—հարցրեց մի օր Մարիամը պառաւին.—մեր գիւղը
արագիլներով լիքն է, այդքան կերակուր դրանք ո՞րտեղից են գտնում:


—Մեր դաշտերը, հոգիս, լիքն են օձերով. ճահիճների
գորտերն իրանց կրակրոցով գլուխ են տանում, արտերի մէջ
անպիտան մկները հազար տեղ ծակեր են բաց արել. եթէ արա-
գիլը չլինէր, մենք ցորենի երես չէինք տեսնիլ:

—Բա օձն արագիլին չի կծում:

—Չատ էլ ուզում է, շատ էլ հետը կուռի բռնուտ, բայց
միշտ յաղթւում է:

—Ի՞նչպէս:

—Արագիլը թուշելիս վերեւից տեսնում է օձին և իջնում, նրա
գլխին կտուցով խփում է: Օձը փշշացնում է, վրայ պրծնում,
աշխատում է արագիլի բաց ոտը կծել: Արագիլը իւր թևի ծայրն
է օձի բերանին մօտեցնում ու անդադար նրա գլխին կոցում:
Կոցում է, կոցում, այնքան կրտկրտալով խփում է, մինչև նրա
գլուխը ցրւում է: Օձը երկար ու ձիգ փուռում է դաշտի վրայ: Յետոյ
արագիլն օձի մէջտեղից բռնում է և բերում բունը, բաժին-բա-
ժին է անում, ձագերին ուտացնում, ինքն էլ կշտանում:



45. „ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ“

Վաղճւց, երբ մօտ էր երկրին երկինքը
Ու լսում էր մարդկանց դեռ Տէրն-Ինքը,
էն լաւ ժամանակ երկու մանուկներ
Ունէին մի շար, մի անսիրտ խորթ մէր:
—Կորէք, գնացէք, աշխատանք արէք.
Աշխատանք արէք ու եկէք, կերէք.
Ի՞նչ էք վեր թափել անգործ ու անբան,
Հասած տղերք էք հինգ-վեց տարեկան...

Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,
Ճիպոտներ տուաւ, զրկեց հորթերը:
Անհանգիստ հորթեր, ամառուան շոգ օր-
կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Նրանց յետեից՝ լալով, հեալով,
Փոքրիկ որբերը՝ քարէքար գալով
Վազ էին տալիս անտառի միջում,
Վազ էին տալիս ու իրար կանչում.

—Պօղոս, գտա՛ր:

—Չէէ:

—Պետրոս, գտա՛ր:

—Չէէ:

—Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ,

Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

Շատ որ ման եկան, խեղճերն յոգնեցին,
Եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին.

—Նանի, այ նանի, կորան հորթերը....

—Վայ, գետինն անցնէք, ճչաց խորթ մէրը,
Թող դուք կորչէիք հորթերի տեղակ
Անտակ ձորի մէջ, անժած քարի տակ:
Մի արջ պատահէր, մի գազան, մի գէլ,

Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...
 Դէ, յետ գնացէք, գնացէք, կորէք,
 Մինչև չգտնէք հորթերը, բերէք՝
 Աչքիս շերևաք, այ աչքիս փշեր,
 Թէ չէ կրսպանեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպտան էլ յետ իրանց թաթերին,
 Յոգնած ու սոված, արցունքն այտերին,
 Փոքրիկ որբերը՝ անտառի միջում
 Գիշերուայ կիսին լալիս են, կանչում:

— Պողոս, գտա՛ր:

— Չէէ:

— Պետրոս, գտա՛ր:

— Չէէ:

— Վայ-վայ վույ-վույ,

Վայ-վայ, վույ-վույ:

Անտէր հորթերը չկան ու չկան:
 Ճարները կորած՝ խեղճերը եկան,
 Լալով չորեցին:

— Տէր Աստուած, ասին,

Ի՛նչ կըլինի գթաս՝

Գոնէ թևեր տաս,

Թևեր տաս՝ թռչենք,

Թռչենք ու կորչենք,

Որ էլ չտեսնի մեզ մեր խորթ մէրը,

Մինչև որ գտնենք կորած հորթերը...

Չէնց ասին-չասին անմեղ բերանով,
 Աստուած որոտաց իւր գթոտ ձայնով:

— Ահա ձեզ թևեր, սիրուն երեխէք,

Թռչուններ գառէք, թռած ման եկէք,

Որ էլ չտեսնի ձեզ ձեր խորթ մէրը,

Մինչև որ գտնէք կորած հորթերը:

Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,
 Ծեղն ու ծղօտը արէք անկողին,
 Ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,
 Երբ որ դատարկուն եղաք ձեր տանից...

Այսպէս վերևից հէնց կանչեց Աստուած,
 Փոքրիկ որբերը փոխուեցին յանկարծ:

Ու թևեր առան

Թռչուններ դառան:

Ու թևեր առած,

Թռչուններ դառած

Դեռ մինչև էս օր,

Ընկած սար ու ձոր,

Ծըվում են, մնչում,

Մէկ մէկու կանչում:

— Պողոս, գտա՛ր:

— Չէէ:

— Պետրոս, գտա՛ր:


— Չէէ:

— Վայ-վայ, վույ-վույ,

Վայ-վայ, վույ-վույ:



46. ԳԱՅԼՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ



Գայլ մի ոչխար էր փախցրել և ազահ-ազահ լափում էր: Յանկարծ ոսկորի մի կտոր ցցուեց նրա կոկորդի մէջ և քիչ էր մնում, խեղդէր նրան: Նրա բաղդից, մի արագիլ էր թռչում մօտով. գայլը գլխով ոտքով մի կերպ հասկացրեց նրան թէ՛ «Կանց, արի, քեզ բան ունիմ ասելու»: Արագիլն իջաւ, մօտեցաւ գայլին:




— Արագիլ, սիրելիս, խնդրում եմ՝ կտուցովդ հանիր այս անիրաւ ոսկորը կոկորդիցս. այդ լաւութեանդ փոխարէն ինչ որ ուզես, միամիտ կաց, կրտսանաս ինձանից:

Եւ նա բաց արաւ բերանը. արագիլը իւր երկար կտուցը ներս տարաւ և ոսկորը հանեց:

— Դէհ, այժմ ինչով պէտք է վարձատրես ինձ, — հարցրեց նա գայլին:

Գայլը բարկութիւնից կատաղեց և գոռաց արագիլի վրայ:

— Ախ, դու, անպիտան թռչուն, դեռ վարձատրութիւն էլ ես խնդրում. չէ որ ես կարող էի ատամներովս այդ յիմար գլուխդ պոկել մարմնիցդ, սակայն այդ չարի: Էլ ուրիշ ինչ ես ուզում ինձանից: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ իսկոյն հեռանաս այստեղից, թէ չէ յետոյ կըփոշմանես...



47. ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆՈՒ ԵՐԳԸ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Գու գարնան սիրուն թռչնակ,
Գէպի ուր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:

— Ախ, թռիւր, ծիծեռնակ,
Ծնած տեղս — Աշտարակ.
Անդ շինիր քո բունը,
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալետր,
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէցօր:

Երբ տեսնես դու նրան,
Ինձնից շատ բարե արա.
Ասա, թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վրայ:

Գու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս:

Չուտով սառ հողի տակ
Կըպառկեմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Միշտ ցաւալի յիշատակ:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիւր արագ
Գէպի Հայոց երկիրը,
Ծնած տեղս — Աշտարակ:

48. ԳԱՅԼԸ ԵՒ ՇՈՒՆԸ

Նիհար, քաղցած գայլը՝ գիւղի մօտով անցնելիս՝ պատահեց մի գեր շան և հարցրեց նրան.

— Այ շուն, ասա, խնդրեմ, դուք ձեր կերակուրը սրտեղից էք ձարում:

— Մարդիկ են տալիս, — պատասխանեց շունը:
— Երևի դուք դժուար ծառայութիւն էք անում նրանց:
— Ո՛չ, — պատասխանեց շունը. — մեր գործը դժուար չէ: Մենք միայն գիշերները նրանց տունն ենք պահպանում:
— Ուրեմն միայն զրա համար են ձեզ կերակրում, — ասաց գայլը: — Զի՛ լինիլ, որ ես էլ գամ մարդկանց մօտ ծառայելու. թէ չէ մենք մեծ դժուարութեամբ ենք կերակուր ձեռք բերում:

— Ինչո՞ւ չէ, գնանք, — ասաց շունը. — Իմ տէրը քեզ էլ կրկե-
րակրէ:

Գայլը ուրախ-ուրախ վագեց շան յետևից: Բայց դուան մօտ
նա նկատեց, որ շան պարանոցի մազերը պոկուած են:

- Այդ ինչից է, — հարցրեց նա:
- Է՛հ, այնպէս, — պատասխանեց շունը:
- Ի՞նչպէս թէ այնպէս:

— Այնպէս, էլի, շղթայից է: Դու չգիտես, որ ցերեկները
ինձ շղթայով կապում են:

— Կապում են, — ասաց գայլն ու կանգ առաւ: — Ի՛նչ, ուրեմն
մնաս բարով: Աւելի լաւ է՝ ես միշտ նիհար, բայց ազատ լինիմ,
բանթէ փորիս համար ուրիշներին գերի դառնամ:

49. Լ Ո Ի Ս Ն Ա Ն Ա Չ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Բօղարը
Միշտ հաչում է լուսնի վրան.
Մի՞թէ պայծառ լուսնեակը
Մէկ վնաս է տալիս նրան:
— Ո՛չ, որդեակ իմ, ո՛չ թէ վնաս,
Այլ լոյս, միայն լոյս է տալիս.
Իսկ շանն, իբրև գայլի ցեղի
Լոյս գիշերը գիւր չի գալիս:
Բայց լուսինը խօս՝ չգիտէ,
Որ իւր վրայ հաչողներ կան.
Նա լուռ ու մունջ, բազ բոլորած,
Շարունակում է իւր ճամբան:
Մենք էլ, սրգեակ, լուսնի նման
Պէտք է լոյս տանք մութ աշխարհին
Եւ համարենք, թէ չենք լսում
Մեզ վրայ գուր հաչողներին:

Գ Բ Ե Ի Ո Ր Վ Ե Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

31. Դեռ ետևէլ նախադասութիւններն մէջ հարցերէն համապատասխան
լրացուցիչ բառեր աւելացրէք:

Գիւղացին վարում է (ի՞նչը) ինչո՞վ Կինը աւելեց
(ի՞նչը) (ինչո՞վ): Հօրեղբայրս (ո՞ւմ) ընծայեց (ի՞նչ).....
Արտաշէսը զրօնում է (ո՞ւմ հետ): Շուշանիկը նամակ ստացաւ
(ո՞ւմնից): Ատաղծագործը սեղան է շինում (ինչի՞ց): Շունը
հաշում է (ո՞ւմ վրայ): Մենք խօսում ենք (ո՞ւմ մասին):

32. Արտագրեցէք և ուր որ հարկաւոր է ենթակայ, ստորագեալ և
լրացուցիչ բառեր աւելացրէք:

Հարը է ածում: քշում է սայլը: Տատը հեքիաթ
.... քոյն է շինում: ներկում է տունը: Հացթուխը է
թխում: ժամացոյց է շինում: Շունը տունը: Աշակերտը
գրում է

33. Արտագրեցէք «Գայլը և շունը» յօդուածը յոգնակի թուով:

50. Գ Ա Յ Լ Ե Ի Ս Կ Ի Ի Ռ

Սկիւռը ծառի վրայ թռչկոտելիս յանկարծ վայր ընկաւ մի
գայլի վրայ, որ քնած էր ծառի տակին:



Գայլը վեր թուաւ, բռնեց
նրան և ուզում էր ուտել: Սկիւռն
սկսեց աղաչել.

— Թո՞ղ ինձ:

— Լաւ, — ասաց գայլը, — ես
քեզ կըթողնեմ, եթէ միայն ինձ
ասես, թէ պատճառն ինչ է, որ

ես միշտ տխուր-տրտում եմ, իսկ դուք, սկիւռներդ, այդպէս ու-
րախ էք և շարունակ թռչկոտում ու խաղում էք ծառերի վրայ:

— Առաջ թո՞ղ ինձ բարձրանամ ծառը, — ասաց սկիւռը, —
այնտեղից կըտամ քո պատասխանը. թէ չէ ես վախենում եմ
քեզանից:

Գայլը բաց թողեց: Սկիւռը ծառը բարձրացաւ և այնտեղից ասաց.

—Քո տխրութիւնը նրանից է, որ դու չար ես: Չարերը ուրախութիւնն չունին: Իսկ մենք ուրախ ենք նրան համար, որ բարի ենք և ոչ ոքի վատութիւնն չենք անում:

51. Ա. Գ. Ա. Հ. Ա. Ղ. Ո. Ի. Է. Ս. Ը.

Մի անգամ, ձմեռը, երեկոյեան դէմ, քաղցած աղուէսն անյաջող որսորդութիւնից տունն էր վերադառնում: Նրա փօրը վեց-վեց էր անում, ուտել էր ուզում. ամբողջ օրը մի մուկը, մի քնաթաթախ ազուս անգամ չկարողացաւ բռնել: Մի հին պարսպի մօտով անցնելիս՝ յանկարծ տեսաւ, որ պարսպի յետեր երկու շաղիկ նապաստակ նստած են ձիւնի վրայ:

—Այ լաւ բաղդ,— մտածեց աղուէսն ինքն իրան և թաք կացաւ պարսպի յետեր:— Այժմ էլ քաղցած փորով տունն չեմ գնայ: Եւ նա սկսեց ընտրել:

—Սրանցից որին ուտեմ: Չախ կողմինը մեծ է, աջինը — հաստիկ: Չախինը մտալի է երևում, աջինը կարծես նրանից աւելի շաղիկ է, նրան բռնելն էլ հեշտ է: Այդ այդպէս է, բայց եթէ այժմ այս հաստին բռնեմ, այն մեծին ուրիշ անգամ չեմ կարող ձեռք ձգել: Չէ, այս մեծից սկսեմ, իսկ հաստին միշտ էլ կարող եմ բռնել:

Այս ասելով՝ աղուէսն արդէն վճուել էր մեծ նապաստակի վրայ յարձակուել, բայց յանկարծ աչքն ընկաւ հաստիկին ու կրկին սկսեց մտածել.

—Ահ, այս հաստիկը պէտք է որ համ մտալի լինի, համ քնքոյշ: չէ, սրան բռնեմ:

Հէնց այդ ժամանակ նապաստակները տեսան աղուէսին:

—Աղուէսը, աղուէսը,— ձայն տուին իրար և քամու պէս այս ու այն կողմ փախան:

—Ա՛խ, անիրաւներ,— վշտացած գոչեց աղուէսը,— ես պէտք է այն մեծին ընտրած լինէի:— Եւ նա փախչող նապաստակների յետից շրթունքները լիզեց ու քաղցած տունն դարձաւ:

52. ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ԶԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Փրանսիայում, դաշտերի և անտառների մէջ, սիւներ են տնկած և այդ սիւների վրայ կպցրած են տախտակներ, որտեղ գրուած է.

«Ողնին կերակրուում է մկներով, խխուջներով և որդերով: Չսպանէք ողնիներին»:

«Խլուրդը միշտ զանազան վնասակար միջատներով, որդերով ու թրթուրներով է կերակրուում: Նրա ստամոքսում երբէք բուսեղէն կերակուր չէ գտնուած»:

«Թրթուրները մեծ վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունները չափազանց մեծ քանակութեամբ թրթուրներ են ոչնչացնում: Մանուկներ, ձուեր և ձագեր չհանէք թռչունների բներից: Չաւերէք նրանց բները»:

53. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՐՁԸ

Անտառի խորքում մեղուն իւր համար
Ծառի փշակում, գետնից ո՛չ բարձր,
Մի բուն էր շինել,
Մէջը ձագ հանել
Եւ անուշ մեղրով
Բճիճը լցրել:

Չգիտեմ ինչպէս, մի օր արջուկը
Առաւ այդ մեղրի անուշիկ հոտը.
Մըթմըթաց, փնթփնթաց,
Ծառն ի վեր կանգնեց
Եւ երկու թաթեր
Բնի մեջ կոխեց:

Մեղուն տրգտրգաց, տրգգացին ձագեր,
Բայց արջը չբաշեց իւր բրդոտ թաթեր.
Քանդեց ողջ բունը,

Ջարդեց խեղճ ձագեր,
Հանեց բճիճը,
Լափեց անհամբեր:

Մեղուն՝ երբ տեսաւ իրան ձագուկներ
Այս անգուլթ արջի ոտքի տակ ճզմուած՝
Իրողբուաց տխուր,
Խայթեց նրա աչք
Եւ ինքն էլ անշունչ
Ընկաւ ծառի տակ:

Գ Բ Ե Ի Ո Ր Վ Ե Ր Փ Ո Ւ Ք Ի Ի Ն Ն Ե Ը

34. Արտազօրեցէք հետեւեալ նախադասութիւնները և լրացուցիչ բառերի տակ գիծ քաշեցէք:

Ոգնին կերակրում է մկներով, խխունջներով եւ որդերով: Խլուրդն ուտում է որդեր եւ թրթուրներ: Թրթուրները վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունների թրթուրներին ոչնչացնում են:

35. Հետեւեալ գոյական անունների մօտ ո ռ պ ի ս ու թ է ւ ն ց ոյց տուող բառեր (ածական անուններ) աւելացրէք:

Բարձր (ի՞նչպիսի) տուն: Խելօք (ի՞նչպիսի) երեխայ ...: (ի՞նչպիսի) թռչուն: ... (ի՞նչպիսի) աշակերտ: ... (ի՞նչպիսի) մեղու: ... (ի՞նչպիսի) վարդ: ... (ի՞նչպիսի) գիշեր: ... (ի՞նչպիսի) գիրք: ... (ի՞նչպիսի) ժամացոյց: ... (ի՞նչպիսի) շուն:

36. Արտազօրեցէք հետեւեալ նախադասութիւնները և ո ռ ղ ի ջ (յատկացուցիչ) բառերի տակ գիծ քաշեցէք:

Պ ա յ ծ ա ու արեւը տաքացնում է երկիրը: Մենք մի հաւատարիմ շուն ունինք: Կոյր աղքատը ողորմութիւն է խնորում: Փոքրիկ երեխան յալիս է: Ուտուցիչը պատժում է չար աշակերտներին: Ես մի գեղեցիկ պատկերազարդ գիրք գնեցի: Չին ընտանի խոտակեր կենդանի է: Մանուշակը գեղեցիկ հոտաւետ ծաղիկ է: Աղամանողը թակագին քար է:

54. ՄԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Չերամը մետաքս էր շինում և գոյնգոյն կոկոնները կախտում կաղնու թարմ ճղներից կապած խուրճի վրայ, իսկ սարգը, տան մի անկիւնում քաշուած, իւր ցանցն էր հիւսում և ծիծաղում էր շերամի վրայ:

—Չերամ եղբայր,—ասում էր նա,—գու շատ դանդաղ ես տանում քո գործը և շինածդ էլ մի բանի նման չէ. իսկ ես, նայի՛ր, տես, ինչ գեղեցիկ բան եմ շինել և տես, ինչքան երկար են իմ թելերը:

Չերամը պատասխանեց.

—Սարգ եղբայր, դու գիտես, ի՞նչ է նշանակում բարութիւն:

—Ո՛չ, չգիտեմ:

—Այդ նրանից է, որ դու չար ես, և քո գործն էլ չարութեան գործ է: Ի՛նչ քո երկար թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս ու ծծես նրանց արիւնը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ բան է, քո բնութիւնից և խելքից վեր բան է:



55. ՇԵՐԱՄԻ ՈՐԴԸ

Գարնան սկզբին, հէնց որ թթենիք Բացում են իրանց տերևներ մանրիկ, Շերամի ձուից ելնում է որդը, Մի որդ աննշան, սևագոյն, փոքրիկ: Նայում ես նրան ու չես հաւատում,

Որ նա էլ ունի իրան նպատակ,
 Նա էլ է ուզում աշխարհում ապրել,
 Կեանքի քաղցր ու դառն օրերը տեսնել:
 Եւ ահա ընկած տերեւի վրայ՝
 Ուտում է, խժռում գիշեր ու ցերեկ.
 Չորս անգամ թմրում, իւր մորթը փոխում,
 Երեսուն օրուայ մէջ ձգւում, մեծանում:
 Երեսուն օրից էլ նա չի ուտում,
 Շուռ-մուռ է գալիս, մի անկիւն գտնում,
 Կերած տերեւից ամբարած հիւթը
 Բարակ թելի պէս բերանից թափում:
 Երեք օր-գիշեր նա այդ թելերից
 Գործում է իրան մի ամուր տնակ,
 Փակւում նրա մէջ, թմրում ու քնում,
 Տասնևութ օրից թիթեռի փոխուած
 Բերնի շողինքով տնակը ծակում,
 Ճերմակ թևերով լոյս աշխարհ թռչում.
 Եւ այդ թիթեռը երեք օրուայ մէջ
 Հազարից աւել ձուաններ թողած՝
 Ընկնում է անշունչ, մեռնում ու կորչում՝
 Իրան երկրաւոր պարտքը կատարած:
 Բայց ինչ են լինում տնակներ,
 Ճերմակ ու դեպին սիրուն բոժոժներ:
 Մարդիկ շատ վաղուց նրանց տաք ջրով
 Փափկացնում են, թելի ծայր գտնում,
 Ճախարակներով բանում ու մանում,
 Ու այդ մանածից գործարաններում
 Հազար մի տեսակ, թէ հաստ, թէ բարակ
 Մետաքսի ճոթեր գործում, ծախ հանում:
 Այդ իսկ ճոթերով պճնւում են միշտ
 Մեր հարուստ տիկնայք և օրիորդներ,
 Բայց երբէք նրանց մտքով չեն անցնում
 Այդ մետաքս շինող շերամի որդեր:

56. Մ Ր Ձ Ի Ի Ն Ն Ե Ր

Մի օր Արմենակը իրանց պատշգամբի սիւնի վրայ անթիւ,
 անհամար մրջիւններ տեսաւ: Նրանցից շատերը սիւնի գլխից ա-
 րագ արագ իրար յետեից ներքև էին շտապում, շատերն էլ ներ-
 քեից վերև էին բարձրանում: Նա երկար, ուշի ուշով դիտեց և
 նկատեց, որ երկու կողմից եկողները իրար հանդիպելիս մի փո-
 քրը կանգ էին առնում, գլուխ գլխի տալիս և յետոյ միասին իս-
 կոյն ներքև էին վերադառնում:
 — Էս ինչ բան է, — մտածեց Արմենակը, — թէ վերև են գնում,
 էլ ինչո՞ւ են վերադառնում:
 Հատ մտածեց, բայց ոչինչ չհասկացաւ: Հարցրեց հայրիկից:
 — Նրանք իրանց կամքով չեն վերադառնում, — ասաց հայրի-
 կը, — այլ վերեւից եկող ընկներներն են նրանց վերադարձնում:
 — Ի՞նչպէս, — հարցրեց Արմենակը:
 — Դու տեսնո՞ւմ ես, որ հանդիպելիս գլուխ գլխի են տալիս:
 — Այո, տեսնում եմ և շատ զարմանում: Ինչո՞ւ են այդպէս
 անում, հայրիկ:
 — Նրանք խօսում են:
 — Խօսո՞ւմ են:
 — Այո, իմ սիրելիս. ներքեից գնացողը հարցնում է վերեւից
 իջնողին՝ վերևում հօ վտանգ չկայ: Վերեւից եկողն էլ պատաս-
 խանում է՝ այո, կայ: Այս է պատճառը, որ վերև գնացողները
 ճանապարհը չեն շարունակում ու վերադառնում են:
 Դժուար հաւատաց Արմենակը և ուզեց անպատճառ իմա-
 նայ, թէ ինչ վտանգ կայ վերևում: Բարձրացաւ կտուրը, մօտե-
 ցաւ այն սիւնի գլխին, որտեղից մրջիւնները ներքև էին իջնում,
 և ինչ տեսնի: Սիւնի վերևում սարդը ցանց էր հիւսել, ինքն էլ
 մի կողմում կուչ եկել, այնտեղից շուտ-շուտ յարձակւում էր
 իջնող մրջիւնների վրայ, նրանց բռնում, իւր ցանցը քաշ տալիս,
 վրաներն ընկնում ու ծծում:
 Արմենակը մտածեց մի փորձ անել: Մարդի հիւսած ցանցը
 քանդեց, սարդին փախցրեց, ներքև իջաւ, էլի կանգնեց սիւնի
 առաջ ու դիտեց:

Մի քիչ յետոյ նա նկատեց, որ վերև գնացող մրջյունները թէև էլի գլուխ էին տալիս իջնողներէ հետ, բայց էլ չէին վերագառնում, այլ շարունակում էին իրանց ճանապարհը դէպի վեր։

Արմենակը շտապով վագեց հայրիկի մօտ, կանչելով։

— Հայրիկ, հայրիկ, ձիշտ որ՝ ինչ խելօք են եղել այս փոքրիկ մրջյունները։


Եւ հայրիկը նրան շատ ուրիշ զարմանալի բաներ պատմեց մրջյունների խելքի մասին։

57. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՐԾԻԻԸ

— Զատ ողորմելի ես դու, — ասաց մի օր հպարտ արծիւը համեստ մեղունին. — Նայելով որ ամբողջ կեանքումդ տանջուում

ես, բայց և այնպէս քեզ ոչ որ չի ճանաչում, որովհետև դուք մի փոքրիկ մեղրախորիսիսի վրայ հազար հոգով էք աշխատում։ Ո՞վ կարող է որոշել, թէ որ մասն է քո շինածը։

— Ինչիս է հարկաւոր այդ, — համեստութեամբ պատասխանեց մեղուն. — Ինչ օ-



գուտ, եթէ ճանաչեն ինձ։ Բաւական է, որ ճանաչում ու սիրում են մեր մեղրը և ես ինձ բազմաւոր եմ զգում, որ մեղրախորիսիսի մէջ մի կաթիլ էլ իմ մեղրից կայ։

— Հապա մէկ նայիր ինձ, — ասաց արծիւը. — հէնց որ ես երևում եմ երկնակամարի երեսին, իսկոյն բոլորը նկատում ու ճանաչում են ինձ. գազաններն ու թռչունները աչք չեն հեռացնում ինձանից. հովիւների քունն անգամ աչքերից փախչում է։ Ահա այդպէս բոլորը՝ թէ մեծ և թէ փոքր, լաւ ճանաչում են ինձ։

— Եյո՛, ճանաչում են, որովհետև վախենում են քեզանից, — ասաց մեղուն։

ԳՐԵՒՈՐ ՎՅՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

37. Հետևեալ նախադասութիւնների մէջ աւելացո՛՛ք ո՛ր ո՛չ ի՛չ (յասակացոցի) բառեր և նրանց տակ գե՛ծ քաշեցէք։

Հպարտ արծիւը խօսեց համեստ մեղունի հետ։ ... սարդը ցանց է հիւսում։ ... աղուէսը հաւ փախցրեց։ Գայլը ... կենդանի է։ ... նապաստակը ... խտտ է արածում։ Կովն ... կենդանի է։ Աստուած պատժում է ... մարդկանց։

38. Արտագրեցէք և պատկան ելու թիւն ցոյց առող որոշէ (յատկացոցի) բառերի տակ գե՛ծ քաշեցէք։

Իմ (ո՞ւմ) հայրը իւր (ո՞ւմ) ծին ծախեց։ Վարդի (ի՞նչի) հոտն ախորժելի է։ Իշի (ո՞ւմ) աղանջներն նրկար են։ Նրա (ո՞ւմ) եղբայրը մեր (ո՞ւմ) հարնանի (ո՞ւմ) տանն է։ Արծիւը իւր (ո՞ւմ) քունը հիւսում է ըարձր ժայռերի (ի՞նչի) կատարին։ Մեր (ո՞ւմ) տան (ի՞նչի) կտուրը հողով է ծածկուած

39. Գրեցէք մի քանի նախադասութիւն լրացուցի և որոշէ (յասակացոցի) բառերով։

58. Մ Ա Ր Դ Ը Ե Ի Օ Ձ Ը

(Հ ե ր ի ս թ)

Ա.

Մի ձիււոր, երկար նիզակը ձեռին, կամաց-կամաց առաջ էր գնում դաշտի միջով։ Ճանապարհից ոչ հեռու նա նկատեց մի խարոյկ. այնտեղ թէև կրակ արդէն չկար, բայց տաք ածուխներէ վրայ կծկուած թշշում էր մի ահագին օձ։ Օձը տեսաւ մարդուն և ազաչեց։

— Մարդ Աստուծոյ, օգնիր, ազատիր ինձ մահից։

Մարդը խղճաց օձին և իւր երկար նիզակը մեկնեց դէպի խարոյկը. օձը նրա վրայով վեր բարձրացաւ թէ չէ, փաթաթուեց նրա պարանոցով և սկսեց սաստիկ սեղմել։

— Ի՞նչ ես անում, — հազիւ շշնջաց մարդը։

— Մի՛թէ չես զգում, թէ ինչ եմ անում, — պատասխանեց օձը. — ես կամենում եմ քեզ խեղդել։

— Ի՞նչ, ողորմած Աստուած: 2է որ ես քեզ մահից փրկեցի:
— Ճիշտ է, բայց աշխահումս միշտ լաւութեան դէմ վատութիւն են գործում, ես էլ այդպէս պէտք է անեմ:

— 2է, օձ, — վրայ բերեց մարդը. — այդ ճշմարիտ չէ, բոլորն այդպէս չեն, միայն դու ես այդպիսի անարդար բան բռնում:

— 2է, միայն ես չեմ, բոլորն էլ այդպէս են, — Ֆշշաց օձը և աւելի պինդ փաթաթուեց նրա պարանոցով:

— Աղաչում եմ, բաց թող կոկորդս, — խնդրեց մարդը, — լսիր, թէ ինչ եմ ասում:

Օձը մի քիչ թոյլ թողեց:

— Երեք հոգու հարցնենք, եթէ ասածդ ճիշտ է, այն ժամանակ ինչ ուզում ես, արա, — ասաց մարդը:

— Գէ՛հ, լաւ, տեսնենք, — համաձայնուեց օձը:

Բ.

Առաջ գնացին: Օձն այնպէս պինդ էր փաթաթուել մարդու պարանոցով, որ խեղճը դժուարութեամբ էր շունչ քաշում: Մօտեցան մի առուակի և կանգ առան:

— Լսիր, այ մաքուր առուակ, — ասաց մարդը. — ես կրակից ազատեցի այս օձին, իսկ սա՛ փոխանակ շնորհակալ լինելու՛ կամենում է ինձ խեղդել: Ասում է, թէ աշխարհիս մէջ միշտ լաւութեան դէմ վատութիւն են անում: Ճշմարիտ է:

— Ճշմարիտ է, — պատասխանեց առուակը. — ահա, տես, որքան վճիտ ու մաքուր է իմ ջուրը: Գալիս են ինձ մօտ մարդիկ իրանց ձիերով, ուղտերով, և ես նրանց բոլորին թարմ, մաքուր ջուր եմ տալիս: Եթէ ես չլինիմ, նրանք ծարաւից կրմնանեն այս ամառի դաշտում: Բայց գիտես, նրանք ինչպէս են դուրս գալիս իմ լաւութեան տակից: Հեռանալիս՝ ամեն տեսակ աղբ ու կեղտով ջուրս կեղտոտում, փչացնում են:

Այս որ լսեց օձը, սկսեց աւելի պինդ սեղմել մարդու կոկորդը: Առաջ գնացին:

Գ.

Ահա նրանք հասան մի բարձր ծառի և կանգ առան: Մարդը պատմեց նրան, թէ գործն ինչու՞մն է: Ծառն ասաց.

— Ճշմարիտ է ասում օձը: Եւ ահա, թէ ինչու: Գու ինքդ էլ լաւ գիտես, որ այս դաշտում ճանապարհորդները, բացի իմ ստուերից, ուրիշ տեղ չունին հանգստանալու: Բայց նրանք հանգստանալուց և իմ պտուղներս վայելելուց յետոյ՝ տերևներս պոկոտում, ճղներս կտրատում, կեղևս քերթում են և իրանց համար կրակ անում: Մի օր ինձ էլ, միւս քոյրերիս նման, պէտք է արմատիցս կտրեն, գետնին տապալեն: Ահա այս է նրանց վարմունքը իմ լաւութեան դէմ:

Օձն աւելի պինդ սեղմեց մարդու կոկորդը: Խեղճն այլևս ոչ կարող էր խօսել, ոչ շունչ քաշել, այլ միայն խռխրուացնում էր: Յանկարծ նա նկատեց, որ հեռուից մի գայլ է վազում: Մարդը ձեռքով նշան արաւ օձին: Օձը քիչ բաց թողեց նրա կոկորդը:

— Սպասիր, գայլ, — կանչեց մարդը. — քեզ բան ունիմ ասելու:

— Լա՛ւ, ասա՛, միայն ինձ շատ մի մօտենալ, — ասաց վախկոտ գայլը և կանգ առաւ:

Դ.

Մարդն ու օձը մօտեցան գայլին և պատմեցին բոլորը:

— Ուրեմն դու օձին կրակից ազատել ես, — հարցրեց գայլը մարդուն: — Դա մի քիչ դժուար հաւատարու բան է:

Մարդն սկսեց մէկ-մէկ պատմել, թէ ինչպէս էր եղել:

— Ո՛չ, ո՛չ, — պատասխանեց նրան գայլը. — պատմելն աւելորդ է. աւելի լաւ է՝ ցոյց տո՛ւր, թէ ինչպէս արիր այդ:

Մարդը նիզակը մեկնեց դէպի գետին և օձը նրա վրայով ցած սողաց:

— Գէ՛հ, այժմ ինչ կասես, — հարցրեց գայլին:

— Թշնամիդ ոտներիդ տակ է և դու դեռ հարցնում ես, թէ ինչ պէտք է անես: Սպանիր նրան նիզակովդ, — ասաց գայլը մարդուն:

— Ո՛չ, — պատասխանեց մարդը. — միայն զազաններն են այդպէս վարւում, իսկ մեզ Աստուած պատուիրում է սիրել մեր թըշնամիներին և ներել նրանց: Մնաս բարև, օձ, ողջ կաց և միտք պահիր այս: — Ասաց մարդը և փախաւ, օձի ձեռքից ազատուեց:

59. Մ Ա Ր Դ Ը

(Ա ն ա Կ)

Չգիտեմ ինչպէս, որ մի մարդու ծոց
Մի անգամ մտաւ մի գաժան չար օձ:
Չուլալուեց դէպ վեր, փաթաթուեց վզին,
Գլուխն ականջի մօտ՝ պոչը դրեց ուսին:

Միայն օձի տեսքն սարսուռ է բերում,
Ուր մնաց զգալն նրա մահառիթ թոյն:
Օձը սուլում էր թոյնը բերանին,
Մարդը դողում էր մահուան եզերքին:

Մօտիկ, ոչ հեռու, նիհար, պառաւ ձի
Հագիւ շարժում էր գլուխն ու ազի.
Մի կողմից ճանճերն, միւս կողմից բօռերն
Ծծում էին ձիու վերջին ուժերն:

«Չի, պատուական ձի,
Ինձ մահից փրկի», —

Ասում էր մարդը լալագին ձայնով,
Իւր օրհասական վիճակը ցոյց տալով:
Չին մտիկ արեց, գլուխը շարժեց,
Իւր դժբաղդութիւնն պատմել սկսեց.

«Երբ ջահել էի, ոյժս տեղն էր,
Աշխատում էի ցերեկ ու գիշեր,
Մարդիկ խնամում, ինձ պահում էին,
Այն ժամանակ ես ունէի մեծ զին:
Եկաւ ժամանակ, ծերութիւնն յաղթեց,
Ոտներիս ուժը, աչքիս լոյս պակսեց՝
Գոմից, ախոռից ինձ դուրս քաշեցին
Եւ սպասում են մահուանս օրին,
Որ կաշիս քերթեն, սմբակներս տանեն
Եւ շուկաներում վաճառքի հանեն:

Ես քեզ օգնելու չունիմ ոյժ ու սիրտ,
Այդու ապերախտ և անխիղճ մարդ բիրտ:
Թող ուրեմն օձը քանի ոյժ ունի՝
Քեզ չխնայի, վրէժս հանի»:

Քիչ հեռու ընկած անխնամ, անտէր
Մի մատակ գոմէջ ծանր տնքում էր:

«Մատակ, գոնէ դու
Եղիր ձեռնատու», —

Ասում էր մարդը լալագին ձայնով,
Իւր օրհասական վիճակն ցոյց տալով:

«Բնաւ, քաւ լիցի, որ ես մի մարդու
Աշխարհիս միջին լինիմ ձեռնատու:
Երբ ջահել էի և տարին մի ձագ
Տալիս էի ես ամեն ժամանակ՝
Իրիկուն, առաւօտ սիրուն տանտիկին
Գալիս էր մօտս կովկիթը ձեռքին:
Չագուկս առողջ, կաթս իւղայի
Մարդկանց սրտերին դիւր էին գալի.
Կար պարարտ արօտ, խնամք սիրառատ,
Իսկ ձմեռները և՛ յարգ, և՛ խոտ շատ:
Այդ երանելի ժամանակն անցաւ,
Մոռացաւ բոլորն տէրս անիրաւ,
Ինձ դուրս քշեցին գոմից և բակից,
Ծերութեանս էլ չեն բնաւ կարեկից.
Այժմ ծերացած, այս դաշտի միջին՝
Սպասում եմ ես սև օրիս վերջին.
Մահուանս ժամին մէկ էլ կրխմբուեն՝
Որ անգուլթ ձեռքով իմ կաշին քերթեն»:

«Ես քեզ օգնելու չունիմ ոյժ ու սիրտ,
Այդու ապերախտ և անխիղճ մարդ բիրտ»:

«Թող ուրեմն օձը քանի ոյժ ունի՝
Քեզ չխնայի, վրէժս հանի»:

Գնում է մարդը փաթոյթը վզին՝
Մահուան տագնապի օրհասի միջին.
Ահա մի աղուէս անցնում է դանդաղ,
Մտածում գտնել մի լաւ վառէկ շաղ:

Դիւր եկաւ մարդուն աղուէսի մորթին,
Ազահ է միշտ, միշտ մեր աղամորդին:

«Բարեկամ, հոգիս, աղուէս, այ աղուէս,
Գթու՞թիւն արա՛, մի ճար ունիս՝ տես»:

Աղուէսը խղճաց թշուառի վրայ,
Ուզեցաւ օգնել՝ որքան հնար կայ:
Անկասկած օձը շատ իմաստուն է,
Բայց աղուէսն էլ նրանից պակաս չէ.
Խորամանկութիւն ուզեց բանացնել
Եւ մեր չար օձին լաւ սառցի քաշել:

«Այս խեղճ օձին դու, այ անիրաւ մարդ,
Փաթաթել ես վիզդ՝ որպէս մի լաւ գարդ.
Դեռ գանգատում ես, օգնութիւն խնդրում,
Օձի գլխի տակ փափուկ բարձ դնում:
Ես չեմ հաւատում, որ օձն ինքն իրան
Բարձրանար, հասնէր քո վզի վրան.
Եթէ ասածդ ճիշտ է ու իրաւ՝
Թող օձն արձակուի, այ դու անիրաւ,
Եւ աչքիս առաջ նորից բարձրանայ,
Եւ նորից վիզդ պինդ փաթաթուի նա»:

Ասաց աղուէսը, հեզնութեամբ նայեց,
Եւ խելօք օձին շոյել սկսեց:
Օձը կամեցաւ շնորհքը ցոյց տալ,
Աղուէսի գովքին արժանի դառնալ.
Մի վայրկեանի մէջ ոլորքն յետ տուեց,

Եւ մարդու վզից վար, գետին ցատկեց:
* Ազատուած մարդը միջոց շտուեց
Եւ օձի գլուխն իսկոյն ջախջախեց:
Աղուէսի մորթին նա չմոռացաւ,
Հանել այդ մորթին եղաւ նրա ցաւ:

«Աղուէս, սիրելիս, դու ինձ կեանք տուիր,
Ինձ ապերախտ մարդ, խնդրեմ, մի՛ կարծիր.
Կաց այստեղ մի քիչ, փոքր ինչ համբերիր,
Մի փոքրիկ նուէր ինձնից ընդունիր.
Գնամ տուն, բերեմ քեզ վառէկ սիրուն.
Քոնն է այսուհետ իմ ողջ հաւաքուն»:

Ասաց մարդն և շուտ դէպ տուն շտապեց,
Թագի, թուլայով նորից դաշտ վազեց:
Գլխին գալիքը աղուէսն երբ տեսաւ՝
Փախաւ մտաւ բունն, այնտեղ շունչ առաւ.
Խոր հոգոց հանեց, արածը փոշմանեց,
Մարդուն «այլերախտ» մակդիրը կնքեց.
Անէճք ու նզով կարգաց ամենին,
Ով որ լաւութիւն կանի մարդերին:

60. ՊԱՐՏԻԶՊԱՆՆ ՈՒ ԻՒՐ ՈՐԴԻՔԸ

Մի ծերունի պարտիզպան շարունակ խրատում էր իւր որդոցը, որ աշխատասէր լինին, բայց որդիքը ակամօ չէին դնում նրան: Երբ ծերունին զգաց, որ մահը մօտ է, կանչեց որդոցն ու ասաց նրանց.

—Սիրելի գաւակներս, իմ ունեցած-չունեցածս այս տունն ու պարտէզն է: Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ: Բայց պարտիզում գանձ կայ թաղած: Փորեցիք և անշուշտ կրկանէք:
Ծերունու մահից յետոյ որդիքն սկսեցին փոքրիկ պարտէզը: Փորեցին, փորեցին, ոչինչ չգտան. բայց հետեւեալ տարին

պարտիզի ծառերն առատ պտուղ տուին: Այդ ժամանակ միայն նրանք հասկացան, թէ ինչ գանձի մասին էր ասում հայրը, և այնուհետև սկսեցին ջանասիրութեամբ աշխատել ու շուտով անձ հարստութեան տէր դարձան:

61. Բ Ո Ս Տ Ա Ն Չ Ի

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում Գետնի երեսից, այրում, տապալում: Ո՛չ շունն է հաչում, ո՛չ ճիճին երգում, Գորտն էլ է լռել, էլ չի կրկնում:

Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել, Իրանց բներում լռուել, պապանձուել: Միայն մի հատիկ մարգ է երևում Խորընկած դաշտում, առուի եզերքում:

Կանգնած է մարդը արևի տակին, Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին: Մի շապիկ միայն ունի նա հագին Եւ մի սպիտակ թասակ կայ գլխին:

— Բայց ի՞նչ մարգ է նա և ի՞նչ է շինում, Արևի տակին ինչո՞ւ է այրում:

— Նա բոսսանի է, բոսսան է ջրում, Սեխն ու ձմերուկը նա է հասցնում:



62. Ծ Ա Ռ Ե Ր Ի Վ Է Ճ Ը

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ իրանից ո՞րն է լաւը: Կաղնին ասաց.

— Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս շատ խորն է թաղուած գետնի մէջ, բունս հաստ է, գազաթս մինչև երկինք է հասնում. իմ տերևները շատ գեղեցիկ են, իսկ ճղներս կարծես երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհուում, մրրկի առաջ չեմ թերւում:

Խնձորերին լսեց կաղնու խօսքերն ու ասաց.

— Չատ էլ մի պարծենար, սիրելի կաղնի, որ դու այդքան մեծ ես և հաստ. դու այս ասան, թէ քո պտուղներն ո՞վ է գործածում՝ բացի խոզերից. իսկ իմ կարմիր խնձորն արքայական սեղանների վրայ անգամ տեղ ունի:

Լսում է մայրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում.

— Սպասեցէք մի քիչ, շուտով կրգայ ձմեռը և դուք երկուսդ էլ կրմբերկանաք, իսկ ինձ վրայ այնուամենայնիւ կրմնան իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկրներում ապրել անկարելի է. ինձանով մարդիկ բնակարաններ են շինում և իրանց վառարանները վառում:

Գ Ի Ը Ի Ո Ր Վ Ե Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

40. Արտագրեցէք և տեղ ցոյց տուող պարագայական բառերէ տակ գիծ քաշեցէք:

Աշակերտը գնում է (ո՞ւր) ուսումնարան: Պարտիզում (ո՞րտեղ) գեղեցիկ ծառեր կան: Աստղերը փայլում են (ո՞րտեղ) երկնքում: Եղբայրս եկաւ (ո՞րտեղից) Տփլիսից: Հայրս գնաց (ո՞ւր) եկեղեցի: Աշակերտները վերադառնում են (ո՞րտեղից) դպրոցից: Ձկները լողում են (ո՞րտեղ) ջրում: Շոգենաւը լողում է (ո՞րտեղ) ծովի երեսին:

41. Արտագրեցէք և հարցերին համապատասխան տեղ ցոյց տուող պարագայական բառեր աւելացրէք:

Գիղացիները աշխատում են (ո՞րտեղ) ...: Մարդիկ ընակում

են (ո՞րտեղ) ...: Մեղդունները թռչում են (ո՞րտեղից) ...: (ո՞ւր) ...: Կարմիր արևը բարձրացաւ (ո՞ւր) ...: ... (որտեղ) շատ թռչուններ են ընկալում: ... (որտեղ) մարդիկ աղօթում են Աստծուն:

42. Հարցերին նայելով լրացրէք հետևեալ համառօտ նախադասութիւնները:

Ես գրեցի:— Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞ւմ: Ո՞րտեղ:
Քոյրս գնաց:— Ո՞ւմ քոյրը: Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞ւմ համար:
Հայրը գնաց:— Ո՞ւմ հայրը: Ո՞ւմ հետ: Ո՞րտեղից: Ո՞ւր:
Ուսուցիչը հարցնում է: Ո՞ւմ ուսուցիչը: Ի՞նչ: Ո՞ւմ: Ո՞րտեղ:
Մանուկը խաղում է:— Ո՞րտեղ: Ո՞ւմ հետ:

Օրինակ:— Դպրոցում ես երկար նամակ գրեցի քրոջս:

43. Արտագրեցէք և ժամանակ ցոյց տուող պարագայական բառերի տակ գեծ քաշեցէք:

Չմեռն (ե՞րբ) սաստիկ ձիւնը ծածկում է երկրի երեսը: Գիշերները (ե՞րբ) մարդիկ հանգստանում են ցերեկուայ աշխատանքից: Օրը տևում է (ո՞րքան ժամանակ) քսանութորս ժամ: Ամառն (ե՞րբ) առաւօտից մինչև երեկոյ (ո՞ր ժամանակից մինչև ե՞րբ) գեղազիլը աշխատում են դաշտում:

44. Գրեցէք հինգ նախադասութիւն տեղ ցոյց տուող պարագայական բառերով: Ստորագեալի և պարագայական բառի մէջ *ո՞ւր*, *ո՞րտեղ*, *ո՞րտեղից* հարցերն աւելացրէք:

45. Գրեցէք հինգ նախադասութիւն ժամանակ ցոյց տուող պարագայական բառերով: Ստորագեալի և պարագայական բառի մէջ *ե՞րբ*, *ո՞րքան* ժամանակ, *ո՞ր ժամանակից* մինչև *ե՞րբ* հարցերն աւելացրէք:

63. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՅԻՆԸ

Ժառերն անտառում, երբ շատ նեղացան
Կացնի ձեռիցը և էլ չիմացան,
Ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն,
Խորհուրդ արին, որ մի հնար գտնեն:
— Կացինն ո՞վ է, որ մեզ կարողանայ
«Զօռ անել, յաղթել, ի՞նչ մեծ բան է նա.

Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.—
«Մենք որ կոթ չտանք, կացինն ինչ է, որ
«Յանդգնի անել մեզ կտոր-կտոր:

«Թող իմացողն ինքն իմանայ
«Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.
«Ով որ կոթ կտայ պողպատէ կացնին,
«Թող հոգոցն ասէ առաջ իւր անձին»:

64. ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԵՆԻ

Մի պարտիզապան երկու որդի ունէր: Մայիս ամսին հայրը նրանց մի-մի խնձորենի ընծայեց: Երկու ծառերն էլ միաչափ և միատեսակ էին, միայն իրարից մի քիչ հեռու էին տնկած պարտիզում:

Մեծ որդին, որ մի աշխատասէր պատանի էր, սաստիկ ուրախացաւ հօր պարգևի վրայ և իսկոյն սկսեց ամեն աշխատութիւն ու խնամք գործ գնել, որ ծառը լաւ աճէ, գօրանայ. նա ծառի վրայից թրթուրները հեռացրեց, չորս կողմի հողը լաւ փափկացրեց, որ օդն ու խոնաւութիւնը մինչև նրա արմատներն հասնեն:

Իսկ կրտսեր որդին, որ սաստիկ ծոյլ էր և անուշադիր, բոլորովին մոռացաւ իւր խնձորենին և սեպտեմբեր ամսին միայն, երբ բոլորն էլ արդէն սկսել էին խնձորները ժողովել, նրա միտն ընկաւ ծառը: Բայց *որքան* զարմացաւ նա, երբ ծառին մօտենալով, ոչ մի խնձոր չգտաւ նրա վրայ. պտուղների մի մասը դեռ խակ ժամանակ թրթուրներն էին կերել, իսկ միւս մասը բամբին էր թափել, փչացրել, այնինչ եղբօր խնձորենու վրայ կարմիր, գեղեցիկ պտուղները հեռուից անգամ երևում էին: Արտասուքն աչքերին մանուկը վազեց հօր մօտ և զանգատուեց, թէ ինչո՞ւ էր նա իրան վատ և անպտուղ ծառ ընծայել, իսկ եղբօրը—լաւ և պողպատուն:

— 2եզ երկսիզ էլ ես միևնոյն տեսակ խնձորենի էի նուիրել, — պատասխանեց հայրը, — բայց քո եղբայրը ոչ մի աշխատութիւն և խնամք չխնայեց իւր ծառի համար, այնինչ դու ծուլացար և ամենևին ուշադրութիւն չդարձրիր քոնի վրայ:



65. ԽՈՉԸ ԿԱՂՆԻ ԾԱՌԻ ՏԱԿ

Խոզը՝ հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը, գլուխը կախած՝
Մինչև կոկորդը կերաւ, լցուեցաւ,
Ապա կաղնու տակ հանգիստ քնեցաւ:

Յետոյ զարթնելով՝ բացաւ աչքերը
Եւ բուժ կնճիթով սկսաւ փորել
Այն կաղնի ծառի հաստ արմատները,
Որից այդ ժամին սնունդ էր առել:

— 2^է որ այդ բանը ծառին վրաս է, —
Նրան վերեկից ազուաւը կասէ.
«Եթէ այդպիսով արմատը բանաս,
«Նա կը չորանայ, այդ լաւ իմանաս»:

— Իսկ ինձ ի՞նչ վրաս, թէ կը չորանայ, —
Յածից ասում է նրան խոզն ազահ.
«Ես զրա մասին բնաւ չեմ ցաւում,
«Կաղինն է իմս, նա է գիրացնում»:

Ծառը բարձրիցը՝ «Ապերախա, — ասաց,
«Ուստի՞ ես թափուում կաղինները ցած.
«Գէթ կարենայիր մի վերև նայել
«Եւ կոյր աչքովդ այդ բանն ստուգել»:

66. ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Մի ամառամ Աղբիան կայսրը զրօսնելիս պատահեց մի զառամեալ ծերունու, որ մի մատող թղենի էր տնկում, և ասաց նրան.
— Եթէ դու երիտասարդութիւնդ անգործ անցկացրած չիինէիր, այժմ ստիպուած չէիր լինիլ այդ զառամեալ հասակումդ աշխատել:

— Մանկութիւնիցս սկսած՝ ես ծոյլ չեմ եղել, տէր թագաւոր, — պատասխանեց ծերունին, — և ահա մինչև ծերութիւնս էլ աշխատում եմ, ինչքան որ կարող եմ: Աստուած սիրում է աշխատանքը:

— Քանի տարեկան ես, — հարցրեց կայսրը:

— Մօտ հարիւր, — պատասխանեց նա:

— Ի՞նչ, — բացազանչեց կայսրը, — և այդ հասակումդ դեռ ծառեր ես տնկում: Միթէ միտք ունիս զբանց պտուղները վայելել:

— Յոյս ունիմ, — պատասխանեց ծերունին: — Իսկ եթէ Աստուած այդ չկամենայ, գոնէ ուրիշները կը վայելեն և շնոհակալ կըլինին ինձանից. չէ որ ես էլ իմ հայրերի աշխատանքն եմ վայելել:

Այս պատասխանը դիւր եկաւ կայսրը:

— Լաւ, — ասաց նա. — եթէ դու բաղդ կունենաս այդ ծառի պտուղները քաղելու, իմաց տուր ինձ:

Բ.

Անցաւ մի քանի տարի: Ծերունին դեռ ապրում էր և շարունակում խնամել իւր պարտէզը: Ծառը մեծացաւ, ծածկուեց ծաղիկներով և վերջապէս զարգարուեց պտուղներով:

Ծերունին քաղեց պտուղները, ընտրեց նրանցից ամենալա-
ւերը, դարսեց կողովի մէջ և տարաւ պալատը:

Կայսրը հեռուից նկատեց ծերունուն և հրամայեց ներս
կանչել:

— Ի՞նչ ես կամենում, — հարցրեց նա:

— Միքանի տարի սրանից առաջ, — ասաց ծերունին, — եթէ
մտաբերում է ձերդ մեծութիւնը, դուք տեսաք մի ծերունու, որ
իւր պարտիզում մի մատաղ ծառ էր տնկում: Դուք այն ժամա-
նակ ցանկութիւն յայտնեցիք, որ եթէ այդ ծերունուն յաջողուի
քաղել այդ ծառի պտուղները, ձեզ իմաց տրուի: Ես այն ծերու-
նին եմ և ահա իմ աշխատանքի պտուղը:

Կայսրը սիրով ընդունեց պտուղները և մեծարեց ծերունուն:

ԳՐԵՒՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

46. Հատեալ նախագաստութիւնների մէջ հարցերն համապատաս-
խան որոշէ (յատկացուցիչ), լրացուցիչ և պարագայական բառեր աւե-
լացրէք:

Վայրենի այծը արածում է (ո՞րտեղ) ...: Ես (ե՞րբ) ...: Կըզամ
(ո՞ւր): ... (ի՞նչպիսի) մանուկները արժանի են (ի՞նչի): ... (ե՞րբ)
մեզ մօտ հիւրեր կըլինին: Բոյրս (ե՞րբ) ... (ո՞րտեղ) ... գնաց մի
(ի՞նչ) ...: Մեր դպրոցում պարապմունքները տեսում են (ո՞ր ժա-
մանակից մինչեւ (ե՞րբ) ...: Ծիծեռնակները (ե՞րբ) ... հեռանում
են (դէպի ո՞ւր) ...:

47. Հետեալ նախագաստութիւններից արտագրեցէք ստորագեււներն
ու գործողութեան կերպը ցոյց տուող պարագայական բառերը երանց
հարցերով:

Աշխատասէր մանուկը մ'իշտ իւր դասերը լաւ (ի՞նչպէս) է
պատրաստում: Երուանդը քարձր ծայնով (ի՞նչպէս) գերք է կար-
դում: Ոսուցիչը խիստ կերպով (ի՞նչպէս) պատժում է ծոյլ աշա-
կերտին: Աստուած ամենիմաստ կերպով (ի՞նչ կերպով) կարգադրել
է ամեն բան: Խեղճ երեխան ուշադրութեամբ (ի՞նչպէս) լսում
է մեծերի խրատները:

Օրինակ: — Պատրաստում է (ի՞նչպէս) լաւ:

67. Ա Ռ Ո Ի Ա Կ

Լերկ քարաժայռից մի վճիտ առուակ
Բղխում է մեղմիկ՝ խոխոջ հանելով:
Խոր ձորերով անցնում են արագ
Փրփրած ալիքներն արծաթի փայլով:

Յառաջ է վազում քաղցր շուկով,
Դաշտեր, արօտներ և մարգեր մտնում
Ու քչքչալով, վեր-վար ոստնելով՝
Գարնան կենսատու զալուստն աւետում:

68. ԱՆՏԱՌԸ ԵՒ ԱՌՈՒՍԿԸ

Փոքրիկ առուակը, որ խոխոջելով հոսում էր խիտ անտառի
միջից, մի օր սկսեց տրտնջալ իւր վիճակի վրայ:



— Ի՞նչ դժբաղին եմ ես, — ասում էր նա. — այս կղզուկի ան-
տառը ծածկում է ինձանից պարզ երկինքը և Մթոյլ չի տալիս,

որ արեգակի պայծառ ճառագայթներն ու գովաշար քամին ազատ խաղան ջրերին հետ: Ա՛խ, ո՛ւր էր, թէ մարդիկ կտրատէին, ոչնչացնէին այս զգուելի անտառը:

— Սիրելի գաւակս, — հանդարտ պատասխանեց անտառը, — դու դեռ փոքր ես և չես հասկանում, որ իմ ստուերը պաշտպանում է քեզ արեգակից և քամուց. եթէ իմ այս պաշտպանութիւնը չլինէր, դու արդէն չորացած կըլինէիր նրանց ներգործութիւնից: Դեռ սպասիր, գորացիր իմ ստուերի տակ և երբ որ կըմեծանաս, այն ժամանակ հոսիր դէպի ընդարձակ դաշտը և աներկիւղ խաղա՛ս փայլուն արեգակի և գորեղ քամու հետ:

69. Բ Ա Ր Ի Գ Ո Ր Ծ

Մարի լանջում, ժայռի տակ,
Ջուր էր բղխում սառնորակ
Եւ ցրուելով խոտերում,
Իգուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գոռոզ
Չինեց հովին ու տարաւ,
Խաղ ասելով նա անուշ,
Ջրեց հօտը իւր ծարաւ:

Ապա թէ իւր օրհնանքը
Մաղթեց մարդը այն բարի.
— Քո շինողիդ օր-կեանքը
Ջրի նման երկարի:

70. ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵԻԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային գօրեղ քամին վէճ բաց արին, թէ նրանցից որն է ուժեղ: Երկար վիճելուց յետոյ, նրանք վերջապէս վճռեցին իրանց ոյժը փորձել այն ճանապարհորդի

Պախրէն անցաւ այն սարից,
Չողից հանած չոր լեզուն,
Կուշտ-կուշտ խմեց աղբիւրից,
Ապա նայեց Աստըծուն:

Անցուորն եկաւ տօթակէզ,
Սառն աղբիւրը որ տեսաւ,
Գլխարկն առաւ ու չոքեց,
Խմեց, սիրտը հովացաւ:

վրայ, որը նոյն ժամին ձիով անցնում էր մօտից: — «Նայիր, թէ ինչպէս կըյարձակուեմ նրա վրայ, — ասաց քամին, — և մի ակնթարթում կըխլեմ նրա վերարկուն»: — Այս ասաց թէ չէ, սկսեց փչել՝ որքան ոյժը կտրում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վերարկուի մէջ և աւելի շտապով շարունակում իւր ճանապարհը: Քամին բարկացաւ, կատաղեցաւ և անձրև ու ձիւն թափեց ճանապարհորդի վրայ: Անիծելով քամուն՝ նա վերարկուի թևերը հագաւ, վրայից էլ գօտին կապեց: Նոր հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել: Տեսնելով իւր հակառակորդի անգօրութիւնը, արեգակը ժպտաց, դուրս նայեց ամպերի յետևից, տաքացրեց երկիրը, դրա հետ էլ մեր խեղճ, սառած ճանապարհորդին: Արեգակի ճառագայթներից տաքացած՝ նա սիրտ առաւ, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին: — Տեսնում ես, — ասաց այն ժամանակ հեզիկ արևը բարկացկոտ քամուն. — քաղցրութեամբ և բարութեամբ աւելի բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ:

71. Ք Ո Յ Ր Ե Ի Ե Ղ Բ Ա Յ Ր

(Առանդորթիւն)

— Սիրուն արև, դու իմ քոյրս ես,
Մեր մէջ չկայ խորթ-մօրի,
Դու թեկ ունիս, ասեղ ունիս,
Եկ, ինձ համար շոր կարի:

Քո խնամքը տարածել ես
Արար աշխարհի վրայ,
Բայց մինուճար բո եղբայրն ես
Դու մոռացել աշկարայ:

Գիշերները ես մըսում եմ,
Քոյրիկ, մերկ եմ, ամօթ է.
Էլ ո՞վ ունիմ, որ բան ասեմ,
Ո՞վ քեզանից ինձ մօտ է:

— Անոյշ եղբայր, անոյշ լուսին,
Հոգիս դուրս դայ քեզ համար.
Դու կարծում ես, թէ քո մասին
Չեմ մտածում անդադար:

Ես կուզէի, որ քո բօյին
Չոր կարէի խշխշան.
Որ դու երկնի վառ աստղերին
Չերևայիր աննշան:

Ծիածանի վառ գոյներից
Չեէի քեզ պատմուճան
Եւ ոսկեթել իմ մագերից
Կարէի այն, եղբայր ջան:

Իմ շնորհքը և իմ սէրը
Ցոյց տայի քեզ, իմ լուսին,
Որ թէ մարդը, թէ աստղերը
Չարմանային միասին:

Բայց ինչ անեմ, հասակ չունիս,
Քոյդ չափի տակ չի գալ:
Մէկ տեսնում եմ-դանկի մէջք ես,
Մէկ էլ տեսար—դարձար կալ:

Կերպարաներդ միշտ փոխում ես,
Լքումեղ առնում և նորում,
Կէսդ կորցրած՝ երևում ես
Գիշերային խաւարում:

Գնա՛, եղբայր, մի ամաչիր,
Մերկ են նոյնպէս աստղերը:
Եւ ո՛չ որի մի գանգատուիր,
Որ շոր չարեց քո քոյրը:

Գ Բ Ը Ի Ո Ր Վ Ե Բ Փ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Լ Ր

48. Լուծեցէք հետևեալ նախադասութիւնները:

Բարի Սիմէօնը երէկ դաշտ էր գնացել: Արամն այսօր անտառից շոր ցախ քերեց: Մեր ուսուցիչը դասի ժամանակ մանրամասն պատմեց երկրի մասին:

Օրինակ:—Բարի Սիմէօնը երէկ դաշտն էր գնացել—սա մի ընդարձակ նախադասութիւն է: Ո՞վ էր գնացել: Սիմէօնը—ննջակայ է: Սիմէօնը ի՞նչ էր արել: Գնացել էր—ստորոգեալ է, նայլն:

49. Արտագրեցէք և գործողութեան պատճառն ու նպատակը ցոյց տուող պարագայական բառերի տակ գեծ քաշեցէք:

Ձիւնը հարուում է (ինչի՞ց) տաքութիւնից: Մոմը հարուում է (ինչի՞ց) կրակից: Բերանս պապակում է (ինչի՞ց) ծարաւից: Գրքերը տպում են (ինչո՞ն համար) կարդալու համար: Ես այսօր տանից դուրս չեկայ (ի՞նչ պատճառով) հիւանդութեան պատճառով: Ես կարմրեցայ (ինչի՞ց) ամօթից: Շատ քաղաքներ ամայի են դառնում (ինչի՞ց) ժանդախտից:

50. Լրացեցէք հետևեալ նախադասութիւնները:

Նորեղբայրս վերադարձաւ:—Ո՞ւմ հօրեղբայրը: Ե՞րբ: Ո՞րտեղից, ինչո՞վ: ինչո՞ն համար:

Շունը խաղում է:—Ի՞նչպիսի շունը, ի՞նչպէս: Ո՞րտեղ: Ո՞ւմ հետ:

51. Լուծեցէք ձեր կազմած նախադասութիւնները:

72. Կ Ր Ա Կ

Սիմէօնը գնաց դաշտը: Չատ ցուրտ էր և անձրև էր գալիս: Նա դողդողում էր ամբողջ մարմնով: Սիմէօնը մտաւ անտառը, չոր ցախ հաւաքեց, գրպանից հանեց լուցկին և կրակ արաւ: Այնտեղ նա տաքացաւ, շորերը շորացրեց և հետը վերցրած հացը կերաւ, կշտացաւ:

Կրակի առաջ նստած՝ Սիմէօնը մտածում էր:

—Ի՞նչ լաւ բան է կրակը. առանց նրան ո՛չ կերակուր կարելի է եփել, ո՛չ տաքանալ: Տես, թէ որքան գործ է շինում դարբնանոցում և գործարաններում: Եթէ կրակը չլինէր, մենք երկաթից ինչպէս պէտք է պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ չինէինք: Աշմարիտ է, թէև երբեմն մենք կրակից վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անդգուշութիւնից, մեր յիմար անհոգութիւնից է պատահում:

73. Գ Ա Ր Բ Ի Ն

Կուանը ձեռքին, գնդանն առաջին,
Քիթ, երես մրոտ, գարբնոցի միջին
Կաշուէ գոգնոցը առաջը կապած՝
Լուիկ կանգնած է մեր խաչօ դարբին:

Փուքսը փո՛ւհ-հա-փո՛ւհ փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր դէսուղէն փոում:
Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝
Սաստիկ տաքիցը վառւում, կարմրում:

Խաչօն հանում է երկաթի շերտը,
Չնդանի վրայ կռանով ծեծում,
Շինում նրանից պայտ մեխ ու կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թըշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փոում տաք-տաք գոլորշին,

Կրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև պատրաստուած շարտուում գետին:

Այսպէս ամբողջ օր մեր դարբին խաչօն՝
Կրակի առաջ, այն կեղտ ու մուրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար,
Կուչ-ձիգ անելով իւր կեանքն է մաշում:

74. Ե Ր Կ Ո Ի Խ Ո Փ

Միևնոյն երկաթի կտորից և միևնոյն արհեստանոցում շինուած էին երկու խոփ: Նրանցից մէկը գնեց մի երկրագործ և սկսեց գործածել նրան, իսկ միւսը երկար ժամանակ բոլորովին անօգուտ ընկած էր վաճառականի խանութում: Պատահեցաւ, որ միքանի ժանանակից յետոյ երկու ընկերները դարձեալ տեսան իրար: Երկրագործի մօտ եղած խոփն արծաթի պէս պսպղում էր և առաջուանից աւելի գեղեցկացել էր, իսկ միւսը սևացել էր ու ժանգոտել:

— Ասա, խնդրեմ, — հարցրեց ժանգոտած խոփը իւր ընկերին. — այդ ինչիցն է, որ դու այդպէս փայլում ես, իսկ ես այսպէս սևացել եմ ու ժանգոտել:

— Աշխատելուց, սիրելիս, — պատասխանեց միւսը. — իսկ դու որ ժանգոտել և առաջուանից աւելի վատացել ես, այդ էլ նրանից է, որ այսքան ժամանակ կողքիդ ընկած՝ ոչինչ չես արել:

75. Ե Ր Կ Ո Ի Ք Ո Յ Ր

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալևոր.
Մեծ ծով էր պատել նրա աշխարհը.
«Ոսկի» ասացին գիտունք այն դարը:

Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ:

Մի օր տգեղը ասում է միւսին.
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին:

Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը յետնից ոխ պահած սրտում.
Հագիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
— Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից.
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Մ. ու, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ»:

— Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կըտամ քեզ ոսկի պսակ պատուական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ»:

— Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ,
Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ»:
Տգեղի սիրտը դառել էր ժեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:

Չկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան,
Ջրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Չորացրեց նրա մարմնի ողջ հիւթը:
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք, տաւիղը ձեռքին:

Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջև բաղցրաձայն երգեց.

«Հնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական,
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
«Լսէ, ժողովուրդ, լսէ անխոռով,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»:

Միւս օրը դահլիճը խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին.
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

ԳՐԵԻՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

52. Հետևեալ նախադասութիւններից արտաբերեցէք բոլոր ստորագեալները պարագայական բառերի հետ. Ստորագեալի և պարագայական բառերի մէջ հարցեր աւելացրէք:

Մանուկները սովորում են ուսումնարանում: Գարնանը տար երկրներից երգող թռչունները վերադառնում են իրանց ընտրը: Գարնանից մինչև աշուն գիւղացիք դաշտային աշխատանքով են պարապում: Արաղաղները առատօտներն ու երեկոնները ըսրճրաձայն կանչում են:

Օրինակ.—Սովորում են (ո՞րտեղ) ուսումնարանում:

53. Գրեցէք ձեզանից հինգ ընդարձակ նախադասութիւն լրացուցել, որոշել, յատկացուցել և պարագայական բառերով:

54. Արտաբերեցէք հետևեալ նախադասութիւնները և կոչական բառերի տակ գիծ քաշեցէք:

Երթանք ծովի ափ, քոյրի՛կ, միասին. քոյրի՛կ, մի թողնի՛ւ ղու ինձ անտերունջ: Հնչէ՛, ի՞մ տաւիղ, հնչէ՛ համարձակ. Լսէ, իմ ծնող, լսէ՛, սիրական, հարազատ քոյրս խլեց իմ փեսան: Լսէ՛, ժողովուրդ, լսէ՛ անխոռով, հարազատ քոյրս գլորեց ինձ ծով:

76. ՄԱՐԴԸ ԵՒ ՀՐԷՇԸ

(Հ երիւթ)

Ա.

Շատ տարի առաջ, հին ժամանակը,
Երբ հրաշքներով լի էր աշխարհքը՝
Իւր ամուսինով և զաւակներով
Ապրում էր մի մարդ իւր առուտուրով:
Ուրախ ու զուարթ էր նրա կեանքը,
Պատճառ՝ միշտ ոսկով լի էր քսակը.
Բայց յանկարծ բաղդը երեսը դարձրեց,
Եւ մեր խեղճ մարդը բոլորը կորցրեց.
Ուրախ կեանք, և՛ փառք, և՛ հարստութիւն,
Եւ նրանց հետ էլ քաղցր առողջութիւն.
Ընկաւ անկողին, խիստ հիւանդացաւ,
Ոյժ ու զօրութիւն նրանից հեռացաւ.
Չէր կարողանում ոտի վրայ կանգնել,
Մինչև որ նրան իւր կինը չօգնէր:

Դժբախտ, տարաբախտ նրա խեղճ կինը
Ստիպուեց կերակրել այժմ իւր տունը.
Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր,
Որ իւր որդիքը սովից ազատէր:
Ամիս ամսի վրայ այսպէս անցկացաւ,
Վերջապէս կինը խալաւ ձանձրացաւ:
«Ի՞նչ ես վայր ընկել, — ասում էր մարդուն, —
Գլխիս ցաւ դառել, խլել ես իմ քուն.
Մինչև ե՞րբ պէտք է այսպէս չարչարուեմ,
Կեանքս մաշելով ես քեզ կերակրեմ.

Վեր կաց, մարդ ես, գնա, գլուխդ քարին տուր,
Եւ որդոցդ համար ճարէ կերակուր»:

Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը.

— Բաւական է ինձ իմ դառը վիշտը.
Քանի ունէի, երբ բան խնայեցի,
Առողջ ժամանակ երբ ծոյլ մնացի.
Իսկ այժմ աղքատ եմ և մարմնով տկար,
Խղճա՛, մի՛ տանջիր դու ինձ անդադար:
Բայց կիրք երկար էլ չհամբերեց
Եւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց.
«Գնա՛, ուր կուգես, գլխիցս հեռացիր.
Դու իմ խեղճ անձը լաւ շարշարեցիր.
Ինչքան էլ կուգէ լաս ու աղաչես,
էլ տուն չեմ թողնի՛ քանի աղքատ ես»:
— Լա՛ւ, — ասաց մարդը ճայնով տխրագին, —
Կերթամ, կըկորչեմ, ո՛վ դու անգութ կին.
Կտոր հաց գոնէ տուր հետս առնեմ,
Որ ճանապարհին քաղցած չմեռնեմ:

Բ.

Կինը դուրս բերեց, տուեց երկու հաց,
Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ, գնաց,
Իւր շար բաղդիցը գանգատ անելով,
Թողեց իւր տունը անհաստատ քայլով:
Ինքն էլ չգիտէր, թէ ո՛ւր էր գնում,
Միայն միշտ առաջ քայլում էր տրտում.
Վերջը դադրելով մի քարի վրայ
Նստեց, որ սակաւ մի հանգստանայ:
Այնտեղ նկատեց, որ ճանապարհին
Նրանից ոչ հեռու ընկած էր գետնին
Մի մագից հիւսած երկար սև պարան,
Որ նա վեր առաւ՝ ասելով այս բան.
«Սա ինքն ըստ ինքեան մի չնչին բան է,
Բայց խեղճիս համար շատ թանկագին է»:

Այսպէս ասելով պարանը փաթաթեց
Եւ իբրև թանկ բան ծոցումը պահեց:
Յետոյ՛ սակաւ ինչ հացով ու ջրով
Իւր տկար մարմնին գորութիւն տալով
Նարից վեր կացաւ, կամացուկ քայլով
Առաջ ընթացաւ նոյն ճանապարհով:

Այդպիսով անցաւ նա բաւական տեղ,
Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,
Ուր անցկենալիս՝ տեսաւ շատ հաւեր:
Հաւերից մինը հանդարտ նստած էր
Կիտած աղբի վրայ ու ձու էր ածում:
Եւ մեր խեղճ մարդը դրեց իւր մտքում,
Որ բռնէ նրան ու հետը տանէ,
Միքանի շահով քաղաքում ծախէ:
Ահա այս մտքով նա կամաց-կամաց,
Չու ածող հաւին զգոյշ մօտ գնաց,
Բայց հէնց որ այն կողմ իւր ձեռքը մեկնեց,
Վեր թռաւ հաւը և մէկ ձու թողեց:
Իսկոյն վեր առաւ թողած ձուն մարդը,
Դրեց զրպանը, օրհնեց իւր բաղդը.
— Է՛հ, փա՛ռք Աստուծոյ, ասաց ինքն իրան,
Այս մէկ հաւի ձուն, սա էլ է մէկ բան:
Էլի առաջ գնաց մի կարճ ժամանակ,
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ գետակ,
Որ դուրս էր բղխում մօտիկ անտառից,
Մերթ հանդարտ գնալով մերթ փրփրալից:
Յոգնած, վաստակած՝ մեր մեղաւորը
Շատ ուրախացաւ՝ երբ տեսաւ ջուրը.
Իսկոյն մօտ գնաց, որ պարզ ցուրտ ջրով
Փոքր ինչ հովանայ, մէջ լողնալով:
Զրի աւազոտ ափերի վրայ,
Նստոտած էին միքանի կրիայ.
Մօտեցող մարդուն երբ նրանք տեսան՝
Շտապով վազեցին, ջուրը թափուեցան:

Միւսները պէս շուտ հասնել ջրին
 Չյաջողուեցաւ նրանցից մէկին:
 Մարդը մօտ գնաց, վեր առաւ նրան,
 Իւր գրպանի մէջ տուեց բնակարան:
 Ինքն էլ լողացաւ, հագաւ շորերը,
 Եւ յետոյ գնաց դէպի անտառը,
 Որ շատ հեռու չէր, և մի ժամի մէջ
 Արդէն գնում էր խիտ անտառի մէջ:

Գ.

Շատ գնաց թէ քիչ՝ վերջապէս նստեց
 Մի աղբիւրի մօտ և շատ մտածեց,
 Թէ ինչպէս անէ, որ իւր խղճալի,
 Անբաղդ գրութիւնը ուղղէ մի կերպի:
 Յանկարծ դրդաց բոլոր անտառը,
 Թնդաց, որոտաց հովիտ ու լեռներ,
 Եւ հանդէպ լեռան սև ու մութ այրից
 Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից
 Բնակուում էր այնտեղ և սպանում, լափում՝
 Ով այրի մօտով անցնել չէր վախում...
 Ահա այդ հրէշը դուրս եկաւ այրից
 Ու խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.
 «Բարով քեզ, բարով, դու համեղ կտոր,
 Որին կրնդունէ իմ պատուական փոր.
 Արդէն կըլինի մի ամբողջ ամիս,
 Որ ես չեմ կերել մարդու անուշ միս»:
 —Այդ ի՞նչ խօսքեր են, գարշելի՛ գազան,
 Դու յանդգնում ես ասել ինձ այդ բան.
 Ապա այդտեղ կաց և դու կըտեսնես,
 Ո՛ւր կըշարտեմ մարմնիդ երկու կէս:
 Ասաց ու անվախ մօտ գնաց հրէշին
 Եւ խիստ բարկացած նայեց երեսին:
 «Ոչ որ մինչև այժմ, — գոչեց գազանը, —

Չէ համարձակուել ասել այդ բանը
 Ինձ, որի ձեռքից դեռ մինչև այսօր
 Ազատ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր:
 Բայց որովհետև մեծ-մեծ բրդում ես՝
 Արի մեր ոյժը փորձենք դու և ես.
 Ե՛կ, գօտեմարտենք, և ով որ յաղթուի՝
 Թող նա յաղթողին կերակուր լինի»:
 —Թէպէտ այդ բանում ես քեզ կըյաղթեմ
 Եւ մինչև վիզդ գետին կըխրեմ,
 Բայց քեզ կարող եմ ես դեռ աւելի
 Հասարակ կերպով յաղթել, գարշելի:
 «Լաւ, համաձայն եմ, ցոյց տուր շնորհքդ
 Եւ իսկոյն և եթ կատարէ խօսքդ»:
 —Ի՞նչ ես շտապում, ասաց նրան մարդը,
 Երեք բան կանեմ, թէ կանես հատը՝
 Ես այն ժամանակ քեզնից յաղթուած եմ,
 Իսկ եթէ չանես՝ գլուխդ կըշարդեմ.
 Մէկ մազ ես հանեմ, մէկը դու հանէ,
 Չափենք ու տեսնենք, ում մազն երկայն է,
 Եւ ով աւելի երկայն մազ ունի՝
 Թող նա մեր մէջ յաղթողը լինի:
 Թէ որ կարենաս ինձ պէս չոր քարից
 Գոյն-գոյն ջուր քամել՝ դու յաղթել ես ինձ:
 Եւ ում մարմնի վրայ մեծ միջատ լինի՝
 Թող որ նա միւսի գլուխը շարդի:
 «Լաւ», ասաց հրէշը ու մի մազ հանեց
 Եւ ուրախ-ուրախ մարդուն դէմ արեց:
 —Ա՛յդ է, — ասաց սա, — և ծոցից հանեց
 Գտած պարանը հիւսած սև մազից:
 Հրէշն, երբ տեսաւ հիւսած պարանը՝
 Ահից, զարմանքից բաց մնաց բերանը,
 Բայց իսկոյն և եթ նորից սիրտ առաւ
 Ու խիստ կատաղած մի քար վեր առաւ
 Եւ երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց,

Որ աւագի պէս նրան փշրտեց:
 Մարդն էլ իւր կողմից մէկ քար վերցրեց
 Ու հրէշից ծածուկ գրպանից հանեց
 Հաւից խլած ձուկն և հէնց որ սեղմեց՝
 Իսկոյն երկու գոյն հիւթը դուրս ծորեց:
 «Այդ երկու փորձով, — կանչեց հրէշը, —
 Դու ինձ յաղթեցիր. ցոյց տուր ուրիշը»:
 Մարդը դուրս հանեց գրպանից կրիան.
 — Ահա միջատս, — ասաց. — գարշ գազան,
 Ցոյց տուր ինձ իսկոյն սրա հատը տեսնեմ,
 Թէ չէ՛ յիմար գլուխդ երկու կէս կանեմ...
 Ուր ես փախչում, էյ, չէ, կաց, սիրելի...
 Կաց, որ ընդունես մահ սարսափելի...
 Բայց լաւ իմացիր, ուր կուզէ գնաս՝
 Երբէք ինձանից չես մնայ անփաս:

Գ.

Իբրաւ որ՝ հրէշը սաստիկ զարմացած
 Մարդու արարքից՝ իսկոյն փախաւ, գնաց:
 Սա էլ այն կուզէր: Ուրախ մտաւ այրը,
 Անցաւ մի ծայրից մինչև միւս ծայրը,
 Տեսաւ լի արկղներ ոսկով, արծաթով,
 Գոյն-գոյն ակներով, մարգարիտներով.
 Ախոռների մէջ սիրուն ձիաններ
 Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ:
 Նա էլ ժամանակը գուր չկորցրեց,
 Գտած գանձերը ձիերին բարձեց,
 Դուրս եկաւ այրից, փառք տուեց Աստուծոյ
 Եւ պատրաստուեմ էր դառնալ գէպի տուն,
 Երբ յանկարծ տեսաւ հեռուից հրէշին
 Վազելիս գէպ այր, մի աղուէս ուսին:

Ե.

Բայց թող դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ,
 Որ հրէշը յանկարծ կրկին յետ դառաւ:
 Մարդուց փախչելով՝ կարճ միջոցի մէջ
 Հասաւ հեալով մինչ անտառի վերջ,
 Ուր մի կաղ աղուէս պատահեց նրան
 Ու գլուխ տալով ասաց նա այս բան.
 «Բարով քեզ, բարով, իշխան ահաւոր,
 Դու մեր անտառի հզօր թագաւոր.
 Բայց ինչի՞, ասա, այդպէս տրտում ես,
 Խնդրում եմ վիշտդ ծառայիդ յայտնես.
 Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք գալ
 Եւ քո տրամութեան շուտով փախճան տալ:
 Հրէշը կարճ կերպով, միքանի խօսքով
 Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով
 Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,
 Յաղթուած մի մարդուց՝ իրանից զօրեղ:
 «Այդ ի՞նչ եմ լսում, — կանչեց աղուէսը. —
 Թոյլ, անզօր մարդուց ո՞նց պիտ քեզպէսը
 Փախչի, փախենայ, թողնէ տունը, գնայ:
 Ասա, ի՞նչ կասէ, ով այդ իմանայ:
 Հաւատան ինձ տէր, նա քեզ խաբել է,
 Իւր հնարքներով աչքդ կապել է.
 Ե՛կ, դու ինձ լսիր, իսկոյն յետ դարձիր,
 Ձեռք ընկած որսը գուր մի կորցնիր.
 Քանի դեռ ուշ չէ՛ շուտ արա՛, գնանք,
 Գիտեմ, պատուական ընթրիք կունենանք.
 Շատ ցանկանում եմ մարդու միս ուտել,
 Պատճառ՝ այս ոտս մարդիկ են կոտրել»:
 Աղուէսի խօսքերն հրէշը լսելով՝
 Իսկոյն յետ դարձաւ, արագ քայլերով
 Վազեց գէպի այր: Բայց ճանապարհին
 Աղուէսն յետ մնաց և խնդրեց հրէշին,

Որ յետ չթողնէ իւր կող ծառային,
 Շատ ծանր բեռ չէ, շալակէ ուսին:
 Այդպէս շալակած, ինչպէս փոքր առաջ
 Արդէն ասացի, հրէշը քաջ-քաջ
 Եւ արագաքայլ դէպ այրն էր վազում,
 Ուր մարդը կանգնած նրան էր սպասում:
 Սա մի բոպէում իւր կտրուկ խելքով
 Արդէն որոշեց թէ ինչ հնարքով
 Այս երկրորդ անգամ ազատուի հրէշից,
 Եւ այս պատճառով գոչեց հեռուից.
 —Ա՛յ, դու խաբեբայ, անպիտան աղուէս,
 Այսօր ինձանից անշուշտ մահ կառնես.
 Հաւանոցումս քեզ որ բռնեցի՝
 Այն պայմանով միայն կեանքդ ինայեցի,
 Որ դու ինձ համար երկու հրէշ բերես.
 Դու էլ խոստացար: Այժմ, սևերես,
 Այսքան սպասեցի, միայն մէկն ես բերում.
 Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում»:
 Հրէշն երբ լսեց մարդու խօսքերը՝
 Բիզ-բիզ կանգնեցան նրա մազերը.
 «Որո՞ւմանկ աղուէս, — որոտաց, — մեռիր,
 Դու միայն անց մտքով ինձ այստեղ բերիր,
 Որ երկրորդ անգամ սրա ձեռքը մատնես,
 Որից մէկ անգամ հազիւ պրծայ ես»:
 Ասաց ու բռնեց աղուէսի ոտից
 Եւ սաստիկ ոյժով նետեց իրանից,
 Իսկ ինքը փախաւ: Մարդը ազատորեց,
 Ծունկ չոքեց իսկոյն, Տիրոջ փառք տուեց:
 Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ-գուարթ,
 Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ.
 Բարձած ձիաններն գտած գանձերով
 Իրարու կապեց և ուրախ սրտով
 Հեծաւ ձիու վրայ ու կամաց-կամաց
 Առաջ քշելով դէպի տուն գնաց...

ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

77. Չ Ի Ի Ն

—Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ կըզայ պող ձիւնը,
 Նորից ամիսներ պիտ' մնամ տանը,
 Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ,
 Հոտոտ ծաղիկին պիտ' մնամ կարօտ:

—Ձիւնը որ կըզայ երկնքէն ի վար,
 Իմացիր—մեծ բաղդ է մարդուս համար.
 Վերմակի պէս տաք կըծածկէ գետին,
 Որ բոյսի արմատն դիմանայ ցրտին:
 Նա հողին կըտայ հիւթ, պարարտութիւն,
 Իաշտին ու արտին մեծ առատութիւն.
 Մի տրտնջալ, մարդ, դու բնութենէն.
 Թէ տաք և թէ ցուրտ մեզ միշտ օգուտ են:

78. Չ Մ Ե Ռ Ը

Ձմեռը արեգակը երկար չի մնում երկնակամարի վրայ և շատ քիչ էլ տաքացնում է, այդ պատճառով ձմրան օրերը կարճ են լինում և ցուրտ: Մարդիկ վառում են վառարանները, որ իրանց բնակարանները տաքացնեն, իսկ տանից դուրս գալիս՝ տաք հա-

գուտներ են հագնում: Գետինը ծածկում է ձիւնով, իսկ գետերը, առուակներն ու լճերը—սառուցով: Գետերի սառույցը երբեմն այնքան հաստ է լինում, որ նրա վրայով անց ու դարձ են անում մարդիկ և սահնակներ: Ծառերն ու թփերը մերկացած են լինում իրանց տերևներից, թռչուններից շատերը հեռանում, գնում են տաք երկիրներ, գազանները քաշում են իրանց բները, իսկ միջատների հոտը կտրում է բոլորովին:

79. Չ Մ Ե Ռ


Չմեռ եկաւ՝ սաստիկ եղանակ,
Ալևոր ծերուկ՝ մազերով ճերմակ.
Դաշտեր ու ձորեր ծածկեց սաւանով,
Գետեր, առուներ պատեց սառուցով:

Է՛լ չեն երևում ծիծառ ու սոխակ,
Չուել է, փախել ամեն մի թռչնակ.
Բոլոր գազաններ որջերը մտել,
Ամենքն ապահով տեղ են ծուլարել:

Շատերին, այն, անգունդ գլորեց,
Համակ աշխարհը ամուր շղթայեց.
Է՛լ առաջուայ պէս գործօն զիւղացիք
Դաշտում, արտերում չեն թափում քրտինք:

Ահա՛ ձիւնապատ թափանցիկ անտառ,
Ինչպէս մի մանուկ աշխոյժ ու կայտառ՝
Քօղի տակ ծածկուած ոյժ է կազգուրում,
Կենսաբեր գարնան գալուն սպասում:

Երեք ամսից յետ կարթնանայ պարտէզ,
Թռչունները կրգան կրկին նոր հանդէս.
Ուրախ կըզարկի սիրտը մարդկութեան,
Կրժպտայ համեստ մանուշակ բնութեան:



Չ Մ Ե Ռ

80. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՁՄԵՌ ԺԱՄԱՆԱԿ

Ձմեռը գալիս է թէ չէ, դաշտերն ու անտառները դատարկուում, մերկ անապատի կերպարանք են ընդունում: Գեղեցիկ երգող թռչունները թողնում են իրանց բները և հեռանում դէպի տաք երկրներ, զրկելով մեզ իրանց քաղցր երգերից: Մեզ հետ ձմեռելու են մնում միայն ագռաւները, կաշաղակներն ու ճնճողկները, բայց նրանք էլ մօտենում են մարդկանց բնակարաններին:

Գազանները թէև չեն փախչում ձմեռուայ երեսից, սակայն նրանք քաշուում-մտնում են իրան որջերն ու բները: Արջը և ոգնին սաստիկ ցրտից թմրում, ննջում են մինչև գարնան սկիզբը: Խորամանկ աղուէսը և քաղցած գայլը դէսուդէն են ընկնում մի բան ճանկելու համար, իսկ մոխրագոյն նապաստակը ցատկոտելով է տաքանում:

Ընտանի կենդանիներն, իհարկէ, ցրտից և քաղցից կրկուտորուէին ձմեռը, եթէ մարդիկ նրանց համար տաք գոմեր և յարմար կերակուր չպատրաստէին, նրանց հոգսը չքաշէին:

ԳՐԵՒՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

55. Գրեցէք հետևեալ գործողութիւն և դրութիւն ցոյց տուող բառերը (բայ):

Խմել: Հագնել: Կանգնել: Գնալ: Մնալ: Նստել: Խաղալ: Կարդալ: Գրել: Նայել: Տեսնել: Ուշանալ: Շտապել: Բարձրանալ: Մօտենալ:

56. Արտագրեցէք «Կ ե ն դ ա ն ի ն ե ռ ի բ ն ա կ ա ռ ա ն ն ե ռ ը ձ մ ե ո ժ ա մ ա ն ա կ յ յօդուածից բոլոր բ ա յ ե ռ ը»:

Օրինակ:—Գալիս է: Դատարկում էր:

57. Արտագրեցէք հետևեալ բ ա յ ե ռ ն իրանց սկզբնական ձևով:

Կարդացի—կարդալ: Մտում եմ—մնալ: Կածէ — Ընեցի—.....: Կանչեցին Պատրաստում ես—.....: Կրքշեմ—.....: Ստիպում են—.....: Կերայ—.....: Կերակրի՛ր—.....: Ընկնում էր—.....: Թռչկոտեցին—...: Լուսացաւ—.....: Օրհնեց—.....: Անցնում էր—.....: Կըթրսի—.....

81. Մ Շ Ա Կ

Բեռը թիկունքին,
Մէջքից կռացած՝
Գնում է մշակը
Թուրը ցամաքած:

Ծլլում է քրտինքը
Փոշոտ երեսից,
Չռուել են աչքերը
Խիստ ծանր բեռից:

Դողում են ոտքերը,
Ոյժ չկայ վրան.
Կոտրւում է մէջքը,
Ոյժ տուէք նրան:

—Է՛հ, թող կոտորուի,
Ի՞նչ եմ հոգս անում.
Չէ՞ որ հինգ կոպէկ
Վարձ եմ վճարում:

82. Ա Ղ Ք Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Ձմեռը բոլորն էլ տաք և կուշտ չեն լինում: Գիւղերում և քաղաքներում շատ աղքատներ կան, որոնք ոչ տաք բնակարան ունին և ոչ էլ ուտելու չոր հացի կտոր: Յուրտն ու քաղցածութիւնը ստիպում են աղքատին դուրս գալ տանից. թափառում է թշուառ ծերունին փողոցից-փողոց, տանից-տուն՝ Գրիստոսի սիրուն մի կտոր հաց մուրալու: Խեղճը չունի տաք հագուստ, նրա վերարկուն պատառոտած է, տրեխները ծակծկուած: Յուրտն անխնայ անցնում է նրա ոսկորները, ձայնը դողդողում է, աչքերից արտասուքի կաթիլներ են գլորւում, ձեռներն ու ոտները ցրտից սառել, փետացել են... Ողորմեցէք այդ թշուառին: Թոյլ մի տաք, որ նա այդ ծեր հասակում մեռնի սովատանջ մահով: Տաքացրէք, կերակրեցէք, ողորմութիւն տուէք նրան և նա միշտ կօրննէ՛ ձեզ՝ ձեր բարերարութեան համար:

83. Թ Ռ Չ Ո Ի Ն

Մի ձմրան օր էր, փչում էր քամին,
Չիւնի քուլէքը ամեն տեղ ծածկում.
Մարդ և անասուն ցրտի երեսից
Փախչում են, մտնում, տան մէջը փակւում:

Իմ պատուհանին, որ պինդ փակուած էր,
Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.
Նա դողդողում էր, թևերը շարժում
եւ իւր կտուցով խփում ապակուն:

Տեսնելով թռչնի այս դառն վիճակ,
Յուզուեց իմ սիրտը, գլխացի վրան.
2[Թողի երկար տանջուել այն ցրտում,
Իսկոյն սենեակս առայ ես նրան:

Դադարեց ձիւնը, հանգարտուեց քամին,
Իմ սիրուն թռչնակը նորից ոյժ առաւ,
Ուղղեց թևերը, սաւառնեց օդում
եւ մի քաղցր երգ երգել սկսաւ:

Անուշ էր երգը, մեղմ ու գրաւիչ,
Նա շարժեց իմ սիրտ, ազդեց իմ հոգուն.
Բռնեցի նրան, դրի վանդակում,
Որ գոհ չգնայ կատաղի քամուն:

Բայց մի ժամ չանցած, նա տխուր-տրտում
Գլուխը կախեց, արձակեց մի ճիչ.
Մօտեցայ նրան, նա յետ-յետ քաշուեց,
Կասես՝ ես նրան լինէի դահիճ:

— Այն, դժուար է, — ասացի նրան, —
«Աննաման երգիչ, սիրելի թռչնակ,
«Ընկերից զատուած, քո բնից հեռու
«Վարել քեզ այսպէս բանդարկեալի կեանք:

«Ահա կրբանամ քո բանդի դուռը,
«Թողիք գէպի դաշտ եւ կամ խոր անտառ,
«Գտիր բնկերիդ, սիրէ քո բունը.
«Մահ ու գերութիւն մի է քեզ համար»:

84. ԳԱՐՆԱՆ ՍԿԶԲԻՆ

Հրաշալի եղանակ է այսօր: Դուրսը տաք է և պարզ, արե-
զակը ուրախ-գուարթ խաղում է հալած ձեան հետ, ջրի կաթիլ-
ները պսպղում են նրա ճառագայթների տակ. խոնաւ գեանի
երեսից զոլորշի է բարձրանում: Փոքրիկ ճնճղուկները զժուածի
նման աղմկում են կտուրի վրայ... Ահա այնտեղ թռչկոտում է
նրանցից մէկը. նա աղաղակում է, — նրա ձայնի ամեն մի հնչիւ-
նը, նրա փոքրիկ մարմնի ամեն մի անդամն առողջութիւն և ոյժ
է արտաշնչում:

85. ՀՐԱԻԷՐ ԳԱՐՆԱՆ

Կարօտ ենք տեսքիդ, աննաման գարուն,
Շուտ արի, մեզի բեր ծաղիկ սիրուն.
Բեր պայծառ արև, բեր մեզ տաք օրեր,
Ճըռվըռող թռչուն, բեր կանաչ դաշտեր:

Բայց մեր դռները, բայց մեր պատուհան,
Թող բացուեն, ծաղկեն վարդ, մեխակ, շուշան.
Փակուած սենեակից ելնենք, ազատուենք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորուենք:

Գ Ր Ը Ի Ո Ր Վ Ե Ր Փ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

58. Արտաբերեցէք «Գարնան սկզբին» յօգուածէց բուրբ բայերը:

59. Գրեցէք նոյն բառերը երանց սկզբնական ձևով:

60. Արտաբերեցէք հետևեալ զարժութիւնը:

Ն երկայ ժամանակ

(Այժմ)

եզ. թ. Ես կարդում եմ:

Յոգ. թ. Մենք կարդում ենք:

Դու կարդում ես:

Դուք կարդում էք:

Նա կարդում է:

Նրանք կարդում են:

61. Գրեցէք միևնոյն ձևով գրել, կանգնել և խօսել բայերը:

86. Կ Ա Յ Ծ Ա Կ

— Հայրիկ, կայծակ է լինելու. նայիր, տես, սև-սև ամպերն ինչպիսի արագութեամբ գալիս են:

— Այո, սիրելիս, պիտի սպասել կայծակի, — ասաց հայրը. — դու երևի կայծակից վախենում ես, Աշխէն:

— Վախենում եմ, հայրիկ, երբ կայծակը փայլում է և ամպերը գոռգոռում են, կարծում եմ, թէ ահա մեզ կըսպանէ:

— Իզուր ես վախենում, հոգեակս. հագարից մի անգամ կայծակը խփում է մի որ և է առարկայի, իսկ մեր տանը շանթարգել էլ է շինած, — ուրեմն վախենալդ բոլորովին իզուր է:

— Բայց ինչո՞ւ համար է կայծակը, հայրիկ, միայն վախեցնում է, ուրիշ ոչինչ:

— Կայծակից յետոյ օդը մաքրւում է և թէ մարդիկ, թէ անասուններ, աւելի հեշտութեամբ են շնչում:

Երկինքն այդ միջոցին պատեց սև-սև ամպերով, սկսեց հեղեղի պէս անձրև գալ, փայլեց կայծակն ու ամպը սաստիկ որոտաց, որից Աշխէնի մագերը փշաքաղուեցին:

Գաղարեց անձրևը: Ամպերի յետևից ժպտաց գարնանային արեգակը, որի լոյսից շողշողում էին աղամանղների նման անձրևի կաթիլները ծառերի տերևների վրայ:

— Գնանք այգի, Աշխէն, — ասաց հայրը:


— Ա՛խ, որքան գեղեցիկ է, հայրիկ, որքան մաքուր է օդը, ինչպէս գեղեցիկ են երգում թռչունները, իսկ վարդենիները բուրում են մի առանձին թարմութեամբ և անուահոտութեամբ:

87. ՔՐԻՍՏՈՍ ՅՍՐԵԱԻ

Չատիկն էլ եկաւ, յարեալ Քրիստոս,
Իրան յարութեամբ մեզի կեանք տուաւ.
Մի տեղ բնութիւն, միւս տեղ մարդկութիւն
Շունչ-ոգի առած՝ նոր կեանք սկսաւ:

88. Գ Ա Ր Ն Ա Ն Ը

Մարտի իննին ցերեկն ու գիշերը իրար հաւասար են լինում, իսկ յետոյ ցերեկն հետզհետէ սկսում է երկարիլ, գիշերը կարճանալ: Չինն ու սառույցը հալւում են արեգակի ներգործութիւնից. գետերը լցւում, բարձրանում են և, դուրս գալով ամերից, չորս կողմը ջրով ծածկում են: Գաշտերում և մարգագետիններում, անտառներում և պարտէզներում կանաչ խոտն է սկսում դուրս գալ և գլուխ են բարձրացնում գարնան առաջին ծաղիկները — ձնծաղիկն ու մանուշակը: Թռչունները խումբ-խումբ վերադառնում են հեռու երկրներից, այստեղ-այնտեղ սկսում են երևալ և միջատները: Հովիւր իւր հօտը դուրս է տանում դէպի արօտ: Գարնան գալով՝ սկսւում է և գիւղացու դաշտային աշխատանքը: Նա պէտք է արտերը վարէ, ցանէ, որ իւր դատարկուած ամբարներն աշնանը նորից լցնէ հացահատիկներով:



89. ՀԱՍՕՅԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Յառա՛ջ տարէք արօրը:
Վարը վարենք, ախօս փորենք,
Խոր ախօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Յորեն դիզենք կալի մէջ:

Կրգայ ձմեռ, — մենք վախ չունինք, —
 Ուրախ կանցնի մեր օրը.
 Ուտելու միշտ պաշար ունինք,
 Լի և կուշտ է մեր փորը:
 Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
 Շուտով վարենք արտերը.
 Թող չասեն մեր դրացիքը՝
 «Ծոյլ են Հասօյի եզները»:


90. Ա Պ Ր Ի Լ

Մեր Ազամ նախահայրն իւր կեանքում առաջին անգամ տեսած ձմեռուայ ցրտիցն ազատուեց. գարունքուայ կարմրաշաղարեից նրա մրսած մարմինը տաքացաւ. նրա կեանքի անբաժան ընկերը, մեր Եւա տատը, մի փունջ ծաղիկ ձեռքին՝ ուրախ-ուրախ տուն ընկաւ: Կարծես մի ծանր բեռ վեր ընկաւ Ազամի սրբտից: Ծաղիկը ձեռքիցն առաւ, հոտ քաշեց, Աստծուն փառք տուեց ու ասաց. — «Թող այսօրուանից սկսած այս ամսի ամուսնը Ապրիլ կոչուի. ես վախենում էի, թէ ձմեռը մի օր մեզ ցրտատար կանի, կրսառեցնի, կրմեռցնի. բայց հիմի հաւատում եմ, որ այսուհետեւ մենք ցրտից երկիւզ չունինք, կապրենք ու կեանք կըրաշենք»:

Ապրիլ, իրան որ ապրիլ: Ի՞նչ զրութեան էին միքանի օր առաջ չքաւորները, ինչպէս են այսօր՝ Ապրիլ ամսին: Նրանք աշունքուան դառը քրտինքով ձեռք բերած ապրուստի պաշարը ձմեռուայ սկզբին կերել-վերջացրել էին:

Հայր թուրքին, թուրքը հային պատահելիս՝ յունվարին հարցնում էր՝ «ալիւր ունիս», փետրուարին հարցնում էին՝ «փայտ ուրիս», մարտին էլ իրար սիրտ էին տալիս, որ քաջ լինին, միքանի օր էլ համբերեն:

Ինացին, կորան ձմեռուան ձիւնն ու սառույցը, ցուրտն, ու սառնամանիքը: Անցկացաւ դիժ մարտը, անց կացան բուրձ, ու քամիքը, եկաւ ապրիլը, ապրեցրեց ամենքին:



Պ ա Ր Ի Լ

Կատարեալ ապրելու ամիս է. դաշտը լիքն է տեսակ-տեսակ բանջարներով. փողով չէ, գնում են, քաղում, բերում, ուտում: Ոչխարը ծնել է. գառները, դմակները խաղացնելով, խոտերի մէջ թռչկոտում են. կաթը ջրից առատ է. ոչխարի մածունն աղքատից խնայել չկայ, հարուստն իւր շունեւոր հարեանին կաթնով, մածնով, նոր պանրով, կարագով լիացնում է:

Աշնանավար ցորենի արտը երկու թիզ բարձրացել, ցնծալով ցնծին է տալիս. նրա կողքին մարտ ամսում վարած ու ցայնած գարնանավար արտը նոր ծլել է, մտիկ տուողի հոգին է փառաւորում: Ծառերն արդէն ծաղկել են, անուշահոտութիւն են բուրում: Ծառերի վրայ ծաղկից-ծաղիկ ոսկեգոյն մեղուներն են թռչկոտում. ամեն մի ծաղկի վրայ մի-մի աշխատասէր մերձանձ է նստել. նա ծաղիկների քաղցը հիւթից մեզ համար մեղր է շինում: Չմեռուայ ցրտից փախած թռչուններն օտարութիւնից յետ են եկել: Գրանցից միքանիսը իրանց բներն են շինում, ոմանք ձու ածում, միքանիսն էլ ածել, պրծել, թուխս են նստել:

91. ԳԵՂՋՈՒԿԻ ԵՐԳԸ

Հեռձ, հեռձ, մութ ամպեր,
Պարզիր, երկինք կապուտակ.
Անհետացէք մէզ, մշուշ,
Թող փայլի վառ արեգակ:

Չմբան ճնշող կապանքից
Թող ազատուի բնութիւն,
Երար-աշխարհ արթնանայ,
Չքանայ քուն, թմբութիւն:

Թող փչէ մեղմիկ գեփիւռ,
Լեռներ, դաշտեր կանաչեց.
Սոխակները թող երգեն,
Առու, վտակ կարկաչեն:

Հովիւ, հոտաղ դուրս գան դաշտ
Հօտերն ծածկեն լեռան լայր.
Այսուհետեւ թող խնդայ
Խղճուկ գեղճուկը ցաւատայր:

ԳՐԸԻՈՐ ՎՃՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

62. Արտագրեցէք հետեւեալ վարժութիւնը:
Անցեալ ժամանակ
(Առաջ)

Եզ. թ. Ես կարդում էի:	Եզ. թ. Ես կարդացի:
Դու կարդում էիր:	Դու կարդացիր:
Նա կարդում էր:	Նա կարդաց:
Յոգ. թ. Մենք կարդում էինք:	Յոգ թ. Մենք կարդացինք:
Դուք կարդում էիք:	Դուք կարդացիք:
Նրանք կարդում էին:	Նրանք կարդացին:

63. Փոփոխեցէք միւսնոյն ձևով մնալ, խնդալ և երևալ բայերը:

64. Գրեցէք հետեւեալ բայերը ներկայ ժամանակով:
Մրսել: Տեսնել: Բաղել:

95. ՀՈՎՈՒԻ ԵՐԳԸ ԳԱՐՆԱՆԸ

Մարտն եկաւ յուշիկ-յուշիկ,
Ծաղկեց ծիրան ու նուշիկ.
Երթամ, հանեմ կանաչ արօտ
Իմ նաշխուն իմ խորոտիկ հօտ:

Կանաչ կապեց արդէն ուռը,
Բացուեց գոմիս փակ դուռը.
Երթամ, հանեմ շուտով իմ հօտ,
Քաշեմ դէպի մախմուռ արօտ:

Անձրեն եկաւ արօտ-կարօտ,
Երկինք կապեց կարմիր նարօտ.
Հուշան ծաղիկ շողով շողաց,
Եաղուտ, երնէկ քո տեսողաց:

Մարիս ու այժ քար-թփի տակ,
Ծաղկի. պէս ալ ու սպիտակ,
Ծնեն գառն ու ուլ չալիկ-մալիկ,
Ես ժողովեմ Աստծու բարիք:

Առաջին գառն իմ նորածին
Կանաչ կարմիր սուրբ կիրակին
Մատաղ տանեմ սուրբ Խաչին,
Հօտս փրկէ ցաւ-չօռէն:

93. Յ Ա Ր Դ Ա Գ Ո Ղ

Երեխաները պապի շորս կողմը կտրեցին և քունը խանգարեցին:
— Պապի ջան, պապի, ասա՛ տեսնենք՝ այն ի՞նչ խորդ ու բորդ տեղ է երկնքումը, կարծես մեր վերին արտի քարքարոտ ճանապարհը լինի. մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն ցրուած են:

— Այն մեր ուլերն են կրծոտել:

— Ո՞րտեղից բարձրացան:

— Մի ձմեռ շատ ձիւն էր եկել, խոտ չկար, որ ոչխարն արածէր. մեր ուլերը ձիւնի վրայով բարձրացան, կրծոտեցին:

— Հապա երէկ ասում էիր, թէ յարդագողի ճանապարհն է,

— ասաց երեխաներից մէկը:

— Եթէ զիտէք, էլ ինչո՞ւ էք հոգիս հանում, թողէք, քնե՛մ, — ասաց պապը և երեսը ուզում էր միւս կողմը շրջել: Բայց հարպիկ երեխաներից մէկն իսկոյն լուր տուեց, անցաւ պապի կնձքի վրայից, միւս կողմը պառկեց և շարունակեց.

— Պապի ջան, պապի, միայն այս մէկը, միայն այս մէկը պատմիր, էլ գլուխդ չենք ցաւցնիլ:

— Հա՛, յարդագողի ճանապարհն է, — ճարահատեալ սկսեց պապը: — Մի գիշեր շար Բարշամը եկել է, մեր Վահագնի մարագից մի թոռ լիքը դարման գողացել, շալակն առել ու փախել: Զանս քեզ մատաղ, քաջ Վահագն, շներին քսի է տուել յետից, ինքն էլ մի բարձր բլրի գլխին կանգնել ու նայում է: Բարշամը յարզը շաղ տալով փախչում էր: Մեր խելօք թագաւորը հէնչ որ տեսաւ, թէ շները չկարողացան հասնել և գող Բարշամը դիպացի սարի յետնն է ուզում անցնել ու ազատուել, այն բոպէին գագուկիսանոց, կռանս պէս հաստ նետը դէմ դրեց աղեղի լարին, աչքեց ու լարը պցեց: Նետը սը՛լ...լ...լ, գնաց, այդ գող ու աւագակին ծակեց ու վզգալով անց կացաւ, հինգ օրուայ ճանապարհ հեռու վայր ընկաւ:

— Յետոյ ի՞նչ է անում Բարշամը:

— Ի՞նչ պէտք է անէր, յարդի թոռը մէջքիցը գլորուեց, փացածն էլ այնտեղ շաղ անցաւ, երկնքի երեսը բռնեց: Ինքը էլ թաւալուեց, սարի գլխից գլորուեց, ձորն ընկաւ:

94. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացուում է. շուտ արտը գնամ, Պատուե՛մ սուր խոփով ես կուրծքը հողի. Ի՛մ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ, Մինչև օրերը ամբասն արևի:

Թաղե՛մ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ. Թէ Աստուած ուզեց, դու կանչեցիր, Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ, Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով՝ Տիրամօր առջև ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ, Որ քեզ պարգևէ մի առատ անձրև, Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ ես տաք բրտինքը ճակագիս արևառ, Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չթողնեմ:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով Ծածկիր իմ արտը ողջ ալէ՛ծածան. Նոր այն ժամանակ անուշ շշիւնով Տուր շարդուած սրտիս մի քուն հանգստեան:

95. Մ Ա Յ Ի Ս

Ահա հասաւ մայիսը, մեղրակաթ ամիսը, տաւներկու եղբայրների մէջ ամենագեղեցիկը: Մեր հայրենիքում այս ամիսը հեզիկ նագիկ պարում է բլուրներում ու հովիտներում: Նրա ձեռքն ճոցը, գլուխն ու գոտին լցուած են փունջ-փունջ, գոյն-գոյն ծաղիկներով: Մայիսուայ գալովը փրփրաւորուած աղբիւրները կանչում, քչքչում են. քնքշափետուր թռչնիկները երգում, պարում

են. Թեթևթաթիկ ուլերն ու դառնուկները ցատչում, վազվզում են: Անուշահոտ հովերն ու զով գեփիւնները տարածում են ամեն կողմեր գարնան անուշահոտութիւնը, երբ բլրէ բլուր ցատքելով անցնում, վազում է գեղեցիկ Մայիսը: Նրա շաղակաթ շնչից ծաղիկները վառ վառ շողշողում են, պտուղները խայծ խայծ կարմրում:


96. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԱՌԱՒՕՏԸ

Ի՞նչպէս թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւօտը: Գաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով: Կարծես բնութիւնն օրէցօր աւելի բազրանում է և գարնանային մէզի միջից ժպտում է ամառը:

Երբ ես զնում եմ անտառ, այնտեղ, խոտերի ստուերների տակ, ծաղկապատ հովիտներում, փռուած եմ տեսնում մայիսուայ որդին — սպիտակ և անուշահոտ շուշանը: Ամեն կողմ աչքիդ առաջ կանաչ գորգեր են փռուած, որոնց վրայ առաւօտեան ցօղը ցանել է իւր մարգարտեայ կաթիլները: Արևի առաջին ճառագայթներն, ընկնելով ծառերի տերևներից և խոտերի թերթիկներից կախուած այդ կաթիլների վրայ, փայլեցնում են նրանց, ինչպէս ադամանդեայ ալիներ: Թռչունները ծըլվելում են չորս կողմից. իսկ այնտեղ, վարդի կիսաբաց կոկոններով ծածկուած թփերի մէջ, լսում է սոխակի գմայլելի ձայնը. նա երգում է, սպասելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն:

97. Ա Մ Ա Ռ

Ստեղծողն իւր առատ ձեռքը բաց արեց,
 Արտեր, անտառներ հարստացրեց.
 Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցան,
 Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան:
 Ազատ շրջում են հօտերը դաշտում,
 Ազատ լողում են ձկները ծովում.
 Այգում պտուղները դեղնիլ սկսան,



Ա. Մ. Ա. Ռ.

Արտերում հարուստ ցանքսերը հասան:
 Իաշտերում գերանդին սկսաւ փայլել
 եւ անտառներում թռչուններն երգել.
 «Ի՛նչքան սիրուն է այս ստուերներում.
 «Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.
 «Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,
 «Առատ ամառուան փառք վերընծայում»:
 —Ո՛չ թէ ամառուան, ասաց, փառք տուէք,
 «Ով ամառ տուեց, նրան օրհնեցէք»:

97. Ա Մ Ա Ռ

Որքան երկար են ամառուայ օրերը և ինչպէս սաստիկ է այրում արեգակը երկնքից: Տօթից և փոշուց քաղաքներում կեանքըն անտանելի է, այդ պատճառով բնակիչներից շատերը թողնում, հեռանում են զիւղերն ու ամառանոցները՝ մաքուր օդ շնչելու համար: Ամառուայ այս շոգերի ժամանակ շատ անգամ երկինքը ծածկում է թուխ ամպերով, բարձրանում է սաստիկ բամբի, փայլատակում է կայծակը, գոռգոռում են ամպերը և յորդ անձրև է սկսում տեղալ: Սովորաբար այսպիսի մրրկից յետոյ օդը թարմանում է, ամեն ինչ զուարթանում, ուրախ տեսք է ընդունում:

Ամառը պտուղները սկսում են հասունանալ: Անտառներում հասնում են հատապտուղները, իսկ դաշտերում հացաբոյսերն են դեղնում և հնձուտրներին իրանց մօտ հրաւիրում: Գիւղացին եռանդով սկսում է հունձը:

ԳՐԵԻՐ ՎԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

66. Արտաշեսէք հետևեալ վարժութիւնը:

Ապառնի ժամանակ

Եգ. թ. Ես կըտամ:
 Դու
 Նա ...

Յոգ. թ. Մենք կըտանք:
 Դուք ...
 Նրանք ...

67. Փոփոխեցէք միևնոյն ձևով լողալ, հասնել և թռչել բայերը:
Տ ա լ .

Ներկայ ժամանակ

Եգ. թ. Ես տալիս եմ:
 Դու
 Նա

Յոգ. թ. Մենք տալիս ենք:
 Դուք
 Նրանք....

Անցեալ ժամանակ

Եգ. թ. Ես տալիս էի:
 Դու
 Նա

Եգ. թ. Ես տուեցի:
 Դու
 Նա

Յոգ. թ. Մենք տալիս էինք:
 Դուք
 Նրանք....

Յոգ. թ. Մենք տուեցինք:
 Դուք
 Նրանք....

Ապառնի ժամանակ

Եգ. թ. Ես կըկարդամ:
 Դու կըկարդաս:
 Նա կըկարդայ:

Յոգ. թ. Մենք կըկարդանք:
 Դուք կըկարդաք:
 Նրանք կըկարդան:

99. ԱՆՁՐԵԻԻ ԿԱԹԻԼ

Փայլուն կաթիլը գարնան անձրևի
 Մի օր հարց տուեց իւր ընկերներին.
 — Ինչ՞նչ մենք այս հին, աղքատ խրճիթի
 Լուսամուտն այսպէս բաղխում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկոյն տուին պատասխան.
 — Այստեղ երկրագործ մշակն է ապրում.
 «Քաղցր աւետիք տալիս ենք նրան,
 «Որ. արտում ցորենն աճում է, ծաղկում»:

100. ԵՐԱՇՏ ԵՒ ԱՆՁՐԵՒ

Ամառը չորային էր: Արեգակն օրէցօր բարձրանում էր պարզ երկնքի վրայ: Փոշին ամպի պէս կանգնած էր ճանապարհներին: Գետինը քարի նման պնդացել էր և սկսել էր ճաքճքոտել: Առուները ցամաքել էին, ծաղիկները տխրութեամբ կախել էին գլուխները, խոտը դեղնել էր, դեռահաս ցորենը թառամել էր: Երկրագործը վշտալի սրտով նայում է իւր արտին և մտածում.— «Աստուած իմ, ինչ որ ինձանից էր կախուած, արեցի, արտա խոր վարեցի, ընտիր սերմով սերմեցի և լաւ ցաքանեցի,—այժմ թող լինի Քո սուրբ կամբը:

Պայծառ երկնքի վրայ ամպեր երևացին. հետզհետէ նրանք թանձրացան և ծածկեցին երկնակամարը, իսկ երեկոյեան զովարար անձրևը ջրեց մարգագետիններն ու արտերը: Դաշտային թառամած բոյսերը զուարթացան. նրանք անտեսանելի կերպով իրանց բարակ արմատների օգնութեամբ ծծեցին թաց հողի սննդաբար հիւթը: Խոտը կանաչեց, ծաղիկները բարձրացրին իրանց գլխիկները, ծառերի փայլուն տերևներն ազահաբար ներս ծծեցին խոնաւ օդը: Ուրախ-զուարթ տատանուիլ սկսան վարսակի, գարու և ցորենի արտերը և արագ-արագ լցրին իրանց քրտալի հասկերի հատիկները:

101. ՀՈՒՆՁ

Ահա բանուորներն շարէշար կանգնած,
Գերանդին ձեռքին, գոգնոցը կապած,
Մինչև գոտկատեղ բարձրացող արտում,
Ժպիտն երեսին՝ ցորեն են հնձում:

Ընդարձակ դաշտը, որն ամիսուկէս
Մեղմ քամու դիմաց, կապոյտ ծովի պէս,
Ճկոււմ, թեքոււմ էր ու հօրանց գնում,
Նորից յետ դառնում, իւր տեղն էր բռնում,


Այժմ բաց դեղին ոսկու գոյն առած,
Տիրոջ օգնութեամբ հասկերը լցրած,
Արևի դիմաց փայլում է, խաղում,
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում:

Կարծես հրեշտակը տիրոջ հրամանով
Ծիծաղ է սփռել իւր առատ ձեռքով.
Ուրախ ու քրքիջ, խիճու ու բերկութիւն
Դաշտը բռնած է կարծես օրնիրուն:

Ահա բանուորներն շարէշար կանգնած,
Գերանդին ձեռքին, գոգնոցը կապած,
Հնձում են ցորեն ու խուրձեր կապում,
Կապած խուրձերից տասնեակներ կազմում:

102. ՕՏԱՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Լորը բուն էր դրել գիւղացու արտում և ձագեր հանել: Հրնձի ժամանակ էր: Մի օր արտատէրը իւր կնոջ հետ եկաւ, արտի գլխին կանգնեց և ասաց.— Արդէն ժամանակն է հնձելու— հատիկները թափոււմ են. վաղը ես կը խնդրեմ հարևաններիս, որ գան, ինձ օգնեն»:



ձուտիկները լսեցին այս խօսքերը և սաստիկ վախեցան: «Հեռանանք այստեղից», — ասացին նրանք իրանց Մօրը: Բայց մայրը պատասխանեց— «Մի վախենաք, փտանգը դեռ այնքան էլ մօտ չէ»: Գիւղացին գնաց հարևաններին խնդրելու. նրանք խոստացան առաւօտը գալ, բայց խաբեցին ու չեկան:

Միւս օրը երեկոյեան գիւղացին դարձեալ եկաւ արտը և ասաց.— «Վաղը իմ ազգականներին կը կանչեմ աշխատելու. նրանք

անշուշտ ինձ չեն խաբիլ և կրգան»։ Ճուտիկներն այս անգամ աւելի ևս վախեցան.— «Գնանք, գնանք շուտով»,— կանչեցին միաբերան։ Բայց փորձուած մարին ասաց նրանց.— «մի վախենաք, դեռ տեղափոխուելու ժամանակը չէ հասել»։ Գիւղացու ազգականներն էլ չեկան նրան օգնելու։ Վերջապէս գիւղացին ասում է կնոջը.— «Ուրիշ ճար չկայ. մնում է, որ մենք ինքներս անենք մեր գործը. Աստուծոյ օգնութեամբ մենք էլ կարող ենք հնձել մեր արտը»։ Լորն այս խօսքերը որ լսեց, իսկոյն ձայն տուեց իւր ճուտերին.— «Չաւակներս, այժմ անայտեղից հեռանալու ժամանակն է. քանի դեռ գիւղացին իւր յոյսն օտարների վրայ էր դրել, ես չէի վախենում. իսկ այժմ, երբ նա վճռել է անձամբ կատարել իւր գործը, հաւանական է, որ շատ շուտով արտը հնձուի»։

Այս ասաց ու ձագերին առաւ, արտից հեռացաւ։

ԳՐԱԴՐ ՎԵՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

68. Լրացրէք հետեւեալ վարժութիւնը։

Եզակի թ.	Յոգնակի թ.	Եզակի թ.	Յոգնակի թ.
Ասա՛	Ասացէ՛ք	Բարձրացի՛ր	...
Կանգնի՛ր	Կանգնեցէ՛ք	Ապրի՛ր	...
....	Գնացէ՛ք	Հնձեցէ՛ք
Խօսի՛ր	Հեռացի՛ր
Կարդա՛	Գցի՛ր
....	Խսողացէ՛ք	Կտրեցէ՛ք

69. Արտազրեցէք հետեւեալ նախադասութիւնները և թուական անունների տակ գիծ քաշեցէք։

Գիւղացին երեք կով եւ եօթը եղ ունի։ Տարին ունի տասներկու ամիս, ամիսը չորս շաբաթ եւ շաբաթը եօթն օր։ Առաջին ամսի անունն է յունուար, երկրորդինը— փետրուար, երրորդինը— մարտ, իսկ վերջինինը— դեկտեմբեր։ Յուլիսը տարուայ եօթներորդ ամիսն է։ Հայրս չորս օր առաջ երեք փուլ զու կէս իւր զնեց մեզ համար։

70. Լուծեցէք հետեւեալ նախադասութիւնները։

Երեկոյեան զովարար անձրեւը ջրեց մարգագետիններն ու արտերը։ Դաշտային թառամած ըոյսերը գուարթացան։ Նրանք անտեսանելի կերպով իրանց քարակ արժատների օգնութեամբ ծծեցին թաց հողի սննդարար հիւթը։

71. Գրեցէք հինգ նախադասութիւն կօչական բառերով։

103. Ա Շ Ո Ի Ն

Աշունը եկաւ, թափուեցաւ սաղարթ, էլ մի փնտրիք դու մանուշակ ու վարդ. Բնութիւնը տխուր, պարտէզը արտում, Չմեռուայ հոգսն է ամենի սրտում։

Երեխան փակուած մենակ սենեակում, Պատուհանից պարտէզ է նայում. Միտքը բերում է գարնան օրերը, Մարգերի վրայ գուարթ խաղերը։

Մի տրամիլ, տղայ, թող անցնի մարտը, Նորից կրբացուեն նարգիզն ու վարդը. Նորից սոխակը պիտի գայ հանդէս, Նորից խաղալու դու կերթաս պարտէզ։

104. Ա Շ Ն Ա Ն Ը

Ամառը վեջանալուն պէս՝ ծառերի կանաչ տերևներն սկսում են փոքր աւ փոքր դեղնիլ, թառամիլ՝ գերանդին ու մանդաղը իրանց գործը վերջացնում են արտերում, սարերի և հովիտների կանաչ ծածկոցները չորանում են, ծառերի և թփերի հասած պտուղները քաղում։

Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աչքին են դիպում. անայտեղ, հնձած արտերի տեղ, դեղին ծղօտներ են երևում միայն, այնտեղ, այգիներում, պտուղներից մերկացած ծառերն

են տխրութեամբ շարժում իրանց գլուխները և պատրաստում ձմեռուայ քունը մտնելու: Կալերում արագ-արագ կալսում են հնձած հացարոյսերը:

Քանի գնում, օրերն զգալի կերպով կարճանում են, արեգակն արդէն կորցրել է իւր գօրութիւնը, երկինքն յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով և բարակ անձրեք մաղում է վերեկից: Չուող թռչունները շարան-շարան հեռանում են զէպի տար երկրներ: Գպրոցներում, ամառուայ արձակուրդներից յետոյ, ուսումն է սկսում:

105. ՉՀՆՉԱԾ ԱՐՏ

Աշուն է խորին. ծիծառը թռաւ,
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.
Միայն դաշտում անհունձ մնացած
Տիւր ու տրտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը ասում են միմեանց.
— Ի՞նչպէս մրսում ենք այս ցրտի տակ.
«Շատ տխրալի է գետին խոնարհել
«Եւ ատօք պտուղդ հողում թաթախել:


«Ամենայն գիշեր մեզ մօտ իջնում են
«Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.
«Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում.
«Ո՞ւր է մեր տէրը, ո՞ւմ էր սպասում»:

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»:

ԳՐԵՐՈՐ ՎԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

72. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և դ ե ռ ա ն ու ը ների տակ գիծ բաշեցէք:

Նս այսօր իմ դասը լաւ եմ պատրաստել: Գու շարութիւն ես անում: Նս վեր առաւ գիրքը եւ ինձ տուեց: Մենք այս



Ա. Ու լ ի ն

ամառ ձեզ մօտ հիւր կըզանք: Դուք եղբայրներ էք: Նրանք իրանց տանն են: Կովը, նզը եւ շունը վիճում էին միմեանց հետ, թէ նրանցից ո՛րին տէրն աւելի է սիրում:


73. Հեռեհալ նախադասութիւնների մէջ գոչական անունների տեղ յարմար գերանուններ դրէք:

Հովիւը քշեց իւր նախիրը դէպի դաշտ. հովիւը մինչև երեկոյ նախիրն արածացնում էր դաշտում: Աղանին տեսաւ, որ դեղձանիկը ընկել էր թակարոը եւ աղանին սկսեց ծիծաղել դեղձանիկի վրայ: Արամն ու Գուրգէնն ընկերներից յետ են մնացել, որովհետեւ Արամն ու Գուրգէնը երկար ժամանակ հիանդ են եղել:

74. Արտագրեցէք «Ս տ ա ը ի օ գ ն ու թ իւ ն ը» յօդուածը բոլոր գերանունները:

75. Կրացրէք հեռեհալ նախադասութիւններ:

Արեգակն արդէն կորցրել է իւր զօրութիւնը, Երկինքը յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով: Բարակ անձրեւը մաղում է երկնքից: Չուող թռչունները շարան-շարան հեռանում են մեզանից դէպի տաք երկրներ:



Ո Ս Կ Ի Զ Կ Ն Ի Կ

Ա.

Մի ծերուկ ձկնորս ե իւր պառաւ կին Բնակում էին մեծ ծովի ափին. ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից, Պառան էլ տանը թել մանում բրդից: Այսպէս միասին մի հին գետնատան Երեսուն երեք տարի ապրեցան:

Անձ մէկ օր էլ ծերը գնաց ծով, Որ ձուկը որսայ իւր մաշուած ցանցով. Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց, Առաջին անգամ միայն տիղմ հանեց: Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով, Յանցը դուրս եկաւ ծովային խոտով: Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց, Ո՛վ կարէ ասել, թէ նա ինչ հանեց. Նա բերաւ իւր հետ մի ոսկի ձկնիկ, Չկանց արբայի գուտորը գեղեցիկ. Ծերի ցանցն ընկաւ՝ իբրև խեղճ գերի՝ Ոսկի աղջիկը ձուկ — թագաւորի:

Խեղճ ոսկի ձկնիկ. ինչպէս է խնդրում,
Մարդկային լեզուով ծերին աղաչում.
«Թ՛ոյ ինձ, թ՛ոյ, ծերուկ, թոյ ինձ անվտանգ,
«Քեզ կըվճարեմ թանկագին փրկանք.
«Ինչ սիրտդ ուզի, ինք որ կամենաս,
«Ուղիղն եմ ասում, ինձնից կըստանաս»:

Վախեցաւ ծերը, մնաց զարմացած.
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,
Բայց ձկան մասին երբէք չէր լսել,
Թէ նա մարդու պէս կարող է խօսել:

— Գնա՛, Տէր ընդ քեզ, — ասաց ծերունին, —
«Ինձ չէ հարկաւոր փրկանք թանկագին.
«Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով
«Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

Բ.

Այս զէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,
Պատմեց պառաւին, թէ ինչ բան տեսաւ.
— Այսօր ես ծովից, գիտես ինչ, ա՛ կնիկ,
«Բռնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ.
«Ոսկի եմ ասում և ոչ քո գիտցած,
«Այդպիսի հրաշք ոչով չի տեսած:
«Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,
«Աղաչանք արաւ, որ յետ ձգեմ ծով:
— Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ, յ
«Քեզ կրվճարեմ թանկագին փրկանք»:
«Բայց ես ոչ մի բան չպահանջեցի.
«Ոչինչ չեմ ուզում, գնա՛, ասացի,
«Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով
«Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառաւը, երբ որ այս բանը լսեց,
Խեղճ արևորին խիստ յանդիմանեց,
Թէ ինչո՞ւ ձկնից փրկանք չէ ուզել
Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել:

— Ա՛յ յիմար անմիտ, — հայհոյեց ծերին, —
«Գոնէ կասէիր դու ոսկի ձկին՝

«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կնկան,
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Գարձաւ ծերունին, ծովի ափ գնաց,
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:
— Ի՞նչ ես կամենում, ծերուկ, — հարցրեց:
Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
— Ողորմած լինիս, թագուհի ձկնիկ,
«Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ.
«Հանգիստ չի թողնում խեղճ արևորիս,
«Վրաս մըթմըթում, ուշունց է տալիս.
«Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան.
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց:
— Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, — ասաց. —
«Թող քո պառաւը շատ չնեղանայ,
«Այսօր նա մի նոր տաշտակ կունենայ:

Գ.

Յետ գարձաւ տէրը զէպի իւր տնակ,
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը գոհ չէր. նա այս անգամ էլ
Սկսեց ծերին սաստիկ նախատել.
— Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
«Ինչո՞ւ մի ուրիշ բան չխնդրեցիր.
«Յետ գնա՛ շուտով, անմիտ անասուն,
«Գլուխ տուր նրան և ուզիր մի տուն»:

Ծերունին դարձաւ, ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսաւ ծովը պղտորուած).
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:

—Ի՞նչ ես կամենում, ծերունկ,—հարցրեց ծերըրը գլուխ տուաւ ու պատասխանեց.

—Ողորմած լինիս, թագուհի ձկնիկ, «Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ. «Խեղճ արևորիս հանգիստ չի թողնում, «Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց:

—Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.—

«Թող լինի այնպէս, ինչպէս կամենաք, «Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»:

Ծերըրը յետ դարձաւ կրկին դէպի տուն, էլ նա չգտաւ իւր հին գետնատուն.

Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,

Կտուրից հանած ծխնելոյզներով,

Պատ ու վառարան մաքուր սուղած,

Կրով ու կաւձով սպիտակացրած.

Վարպետի տաշած կաղնի տախտակից

Մեծ գունն էր կախած լայն բակի կողմից:

Պատուհանի տակ կիներն ուռած նստել,

Իւր շարութիւնից ուզում է տրաքել.

Ի՞նչ անէ՞ծք ասես աշխարհիս տակին՝

Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.

Վերջը, երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,

Մուտքը կախած ծերունուն դարձաւ.

—Անշնորհք ծերունկ, տնակ ուզեցիր,

«Երևի քո մէջ մեծ բան կարծեցիր.

«Յետ դարձիլը, անխելք, յետ դարձիլը, գնա՛,

«Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա՛,

«Որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին,

«Ուզում եմ լինել գերագնիւ տիկին»:

Գ.

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց. (Այս անգամ տեսաւ ծովը վրդովուած).

Սկսեց կանչել ոսկի ձկնիկին.

Չուկը լողալով մօտեցաւ ծերին:

—Ի՞նչ ես կամենում, ծերունկ — հարցրեց ծերըրը գլուխ տուաւ ու պատասխանեց.

«Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,

«Հանգիստ չի տալիս ինձ իմ շար կնիկ.

«Էլ չի կամենում մնալ գեղջուկ կին,

«Ուզում է լինել գերագնիւ տիկին:

«Չգիտեմ՝ գլուխն ինչ քամի մտաւ,

«Որ գեղջուկութիւնից յանկարծ ձանձրացաւ»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.

—Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, — ասաց.

«Թող քո պառաւը հէնց այսօրուանից

«Ազատ համարուի իւր գեղջուկութիւնից»:

Յետ դարձաւ ծերըրը և ինչ է տեսնում.

(Կարծեց՝ ցնորք է աչքին երևում).

Մի տուն հոյակապ. վերնասրահում

Պառան է կանգնած՝ ինչպէս նոր խանում.

Հագին սամուրէ բաճկոնակ սիրուն,

Գլխին զիպակէ շարզաթ գոյնգոյն,

Վիզը գարգարած մարգարիտներով,

Մատներին մատնիք, անգին քարերով.

Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,

Միւս հագուստներն էլ մետաքս պատուական.

Ծառաներ ունի միքանի տասնեակ,

Բոլորն էլ իրան հլու հպատակ:

Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց, Խեղճ ծառաներին ձեռնի սկսեց.

(Երևի ուզեց ցոյց տալ իւր մարդին,
 Որ այժմ ինքն է գերագնիւ տիկին).
 Հայհոյանք թափեց ամենքի վրայ,
 Տեղի-անտեղի քօթկեց անխնայ.
 Մէկի մագերից բռնեց, քաշքշեց,
 Միւսին էլ մի լաւ ապտակներ դարկեց:

Ծերը մօտեցաւ գող-գող քայլերով,
 Ասաց պառաւին՝ խոր գլուխ տալով.
 — Բարով գերագնիւ խանում խաթունիս.
 «Հիմա խօսմ գո՛հ ես, հանգիստ կըլինիս»:

Պառաւ տիկինը այնպէս բղաւեց,
 Որ խեղճ ծերունու լեզին պատառեց.
 Նրան հրամայեց, որ իսկոյն գնայ,
 Գոմն աւել, քերէ ու այնտեղ մնայ:

Ե.

Մէկ երկու շաբաթ հագիւ անցկացաւ,
 Պառաւ խանումը նորից կատղեցաւ:
 — Ըուտ կանես, կերթաս,— ասում է մարդին,—
 «Ու իմ կողմանէ կասես ձկնիկին,
 «Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
 «Ուզում եմ ազատ թագունհի լինել»:

Այս խօսքի վրայ ծերունին սոսկաց
 Եւ ազաչելով պառաւին ասաց.
 — Գժուել ես, ա՛ կնիկ, ես չեմ հասկանում.
 «Արդեօք դու գիտես, ինչ ես ցանկանում.
 «Մէկ նայիր վրագ, շէնքիդ ու շնորհքիդ,
 «Լքբլրբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ,
 «Ախրը ինչ ունիս թագունու վայել,
 «Որ խելքիդ այդպէս քամի է փչել:
 «Արի, լսիր ինձ, մի անիր այդպէս,
 «Ամբողջ աշխարհքին կըծիժաղացնես»:

Էլ չհամբերեց մեր պառաւ տատը,
 Որ վերջացնէր մարդն իւր խրատը.
 Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,
 Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց:
 — Ի՞նչպէս թէ այդպէս, յանդուգն ստահակ,—
 Գոչեց ու զարկեց մի ուժին ապտակ.
 «Համարձակում ես, գռեհիկ անգէտ,
 «Վիճել ինձ նման ազնիւ տիկնոջ հետ
 «Քեզ հրամայում եմ պատուաւոր խօսքով,
 «Որ իսկոյն գնաս քո յօժար կամքով.
 «Եթէ ո՛չ՝ ահա ժողովուած կշտիդ,
 «Մըանք կըտանեն, խփելով վզիդ»:

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ տեսաւ ծովը սևացած).
 Մկսեց կանչել ոսկի ձկնիկին.
 Ծուկը լողալով մօտեցաւ ծերին:
 — Ի՞նչ ես կամենում, ծերուկ,— հարցրեց.
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 — Ողորմած լինիս, թագունհի-ձկնիկ,
 «Էլի է կուում իմ պառաւ կնիկ.
 «Ներիր ինձ, խնդրեմ, ես ամաչում եմ,
 «Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.
 «Բայց ո՞ր ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողնում,
 «Վրակն է ձգել, այրում, խորովում.
 «Գնա՛, ասում է,— ա՛խ, նգովեալ կին,—
 «Ըուտ գնա՛, ասա ոսկի ձկնիկին,
 «Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
 «Ուզում եմ ազատ թագունհի լինել»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
 — Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ,— ասաց.
 «Թող քո պառաւի ուզածը լինի,
 «Թող գնայ, դառնայ ազատ թագունհի»:

9.

Ո՛վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,
 երբ ձկան մօտից տուն վերադարձաւ.
 Էլ ինչ տուն, ինչ բան... դու արքայական
 Ապարանք աստ կամ հսկայական
 Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած,
 Բարձր բուրգերով չորս կողմը պատած.
 Զքեղ զահլիճներ, անթիւ սենեակներ,
 Մարդ կը շը շը կուէր, եթէ մէջն ընկնէր:
 Ծերը բարձրացաւ մարմար սանդուխքով,
 Մի զահլիճ մտաւ խիստ պատկառանքով.
 Առջեր բացուեց մի նոր տեսարան,
 երբ այնտեղ գտաւ իւր պառաւ կնկան.
 Նա հիմա ազատ թագուհի դառած՝
 Առօր ու փառօր ճաշի է նստած.
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
 Ոտի են կանգնած՝ որպէս ծառաներ.
 Թագուհու համար գինի են ածում
 Եւ ահուղողով աչք-ունքին նայում.
 Զէմքում կանգնել են ահեղ զինուորներ,
 Ուտերին բռնած կացնաձև սրեր.
 Մենակ պառան էր սեղանին բազմել.
 Ո՛վ կը յանդգնէր նրա հետ նստել.
 Բայց կերակուրներն այնքան շատ էին,
 Որ հարիւր հոգի կը կշտացնէին:
 Եւ քանի տեսակ անձանօթ բաներ,
 Ի՛նչ անուշեղէն, ի՛նչ տապականեր...
 Պառան ուտում էր մեծ ախորժակով
 Ու գինին դատարկում լիքը բաժակով.
 Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,
 Որ քաղցրացնէ շրթունք ու բերան:
 Ծերն այս տեսներով մնաց շփոթուած,
 Ընկաւ պառաւի ոտներն ու սասաց.

— Բարձր քեզ, բարձր, ահեղ թագուհի,
 «Քո մեծութիւնը յաւիտեան լինի»:
 Այս խօսքից յետոյ կամաց շնչեց
 Ու փոփսարով պառաւին հարցրեց.
 — Հիմա որ բաղդի վերին ծայրումն ես,
 Խօսմ բաւական ես, ա՛յ կնիկ, ի՛նչ կասես»:
 Թագուհի՛ դառած պառան այս անգամ
 Մարդու երեսին չնայեց անգամ.
 Հրաման մոմոաց նա քթի տակին,
 Որ դուրս վռնդեն մեր անկոշ հիւրին:
 Հէնց որ լսուեց թագուհու հրաման,
 Հնազանդ երեւալ ամենքն ուզեցան.
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
 Ինչպէս որսորդի արնախում շներ,
 Խփելով ծերի շնքակոթին,
 Զքեղ զահլիճից դուրս վռնդեցին.
 Զէմքումը կանգնած պահապաններն էլ
 Իրանց կացիններն էին պատրաստել.
 Վրայ վազեցին ամենքը մէկէն
 Ու քիչ մնաց, որ խեղճին խողխողեն:
 Ինչպէս որ եզաւ՝ մի կերպ դուրս պրծաւ,
 Դուրսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,
 Որ կարծես նրան լինէր սպասում
 Անձրեի տակին, ցեխոտ փողոցում:
 — «Ա՛յ թէ լաւ արին, ծերուկ դու անգէտ,
 «Ո՛ւմ հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.
 «Թող այս քեզ համար լինի լաւ խրատ,
 «Որ էլ շցանես մանր կտաւատ»:
 է.
 Այս զէպքից յետոյ շատ օրեր շանցան,
 Պառաւի այծերն էլի մօտ եկան.
 Ուղարկում է նա իւր իշխաններին,
 Որ գտնեն, բերեն արսորուած ծերին:


Եկաւ ծերունին՝ պառաւն սկսեց.
 — Դու պէտք է գնաս ձկան մօտ, — ասեց.
 «Կերթաս, խոր գլուխ կրտաս դու նրան
 «Ու իմ փափագը կըյայտնես իրան.
 «Կասես՝ չեմ ուզում մնալ թագուհի,
 «Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
 «Ուզում եմ ովկիան ծովումը կենալ,
 «Ոսկի ձկնիկին ծառայ ունենալ,
 «Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի
 «Եւ ինչ ուզենամ, իսկոյն կատարի»:

Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,
 Առանց յայտնելու որ և տրտունջ:
 Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.
 (Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած.
 Փրփրած ալիքներ սարեր դառնալով,
 Իրար են զարկում անեղ գոռալով):
 Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին.
 Զուկը լողալով մօտեցաւ ծերին:
 — Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ, — հարցրեց:
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
 — Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,
 «Իսպառ գժուել է իմ պառաւ կնիկ.
 «Ի՞նչ անեմ արդեօք այդ նգովեալին,
 «Մինչ երբ տանջուեմ քաւթառի ձեռին.
 «Էլ չի կամենում թագուհի լինել,
 «Այլ, տես, անիծուածն ինչ է միտք արել.
 «Իշխել է ուզում բոլոր ջրերին
 «Եւ իշխանուհի դառնալ ծովային.
 «Ուզում է ովկիան՝ ծովումը կենալ,
 «Ոսկի ձկանդ ծառայ ունենալ,
 «Որ իւր հրամանին միշտ պատրաստ կենաս
 «Եւ ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
 Բայց էլ ծերունուն չպատասխանեց.
 Զրի երեսին շրմփաց՝ պոչով
 Ու անցաւ, գնաց դէպի խորին ծով...

Զատ մնաց ծերը և շատ նայեցաւ,
 Բայց ոսկի ձկնիկն էլ չերևեցաւ.
 Դարձաւ գլխակոր, որ պատմէ կնկան,
 Թէ ինչ փորձանքի մէջ ձգեց իրան:
 Եւ գնաց տեսաւ... (բայց ինչ տեսնի լաւ,
 Որ արդար լինի և ո՛չ անիրաւ).
 Հին խուղի շէմքում պառաւը նստած,
 Կոտրած տաշտակը առաջնն ընկած...

Վ Ե Ր Զ



Յ Ա Ն Կ

№№	Երես
1. Մոյլ աշակերտը	3
2. *Տխուր երեխայ. Գ. Քաթիպա	4
3. Զանաօքը մանուկը	—
4. *Ժրաջան տղայ. Գ. Քաթիպա	5
5. Հայրը և որդիքը	6
6. *Գիւղի գրադէտը	7
7. Եղբայրներ. Լ. Տօլստոյ	—
8. *Որբի պահանջը. Մ. Մամիկոնեան	8
9. *Մայրիկ, Մ. Մամուրեան	9
10. Վատ ընկեր	10
11. *Գիւր. Մ. Մամիկոնեան	11
12. Որդեկան սէր	—
13. *Օրորոցի երգ. Գ. Քաթիպա	12
14. Երջանիկ մարդ	13
15. *Մօր օրորը. Կ. Կ. Մեյլ.-Շահն.	14
16. Մեծեր և փոքրեր	—
17. Արդար վճիռ. Լ. Մեյլ.-Աղամ.	15
18. *Շունն ու կատուն. Յովհ. Թումանեան	16
19. Միժեռակներն ու ճնճողիկը	19
20. Միժեռակի պահանջը, Աթ. Խնկոյեան	20
21. *Միժեռակը պահապան. «Հասուկեր»	22
22. *Միժեռակի լիզողութիւնը. Գ. Աղայեան	23
23. Առիւծը և մուկը. Լ. Տօլստոյ	—

№№	Երես
24. *Մուկն ու կատուն. Խ. Արուսեան	24
25. Որտորդն ու կարգուր. «Աղբիւր»	25
26. Թութակն ու սոխակը. Գ. Աղայեան	26
27. *Գերի թութակը. Բաֆֆի	27
28. Թութակն ու հարուստը. Մ. Մամուրեան	—
29. Ամեն բան իւր ժամանակին	28
30. Զին և էջը	29
31. Էջն առիւծի մորթով	30
32. Կթու կով	31
33. *Կթել և հարել. Գ. Աղայեան	—
34. *Գառը գայլի մորթով. Կռիւով	32
35. Ագռաւ	33
36. Փիղ. Լ. Տօլստոյ	34
37. *Փիղն ու քոթոթը. Կռիւով	—
38. Անզաւակ եղնիկը. Մ. Մամուրեան	35
39. Ոչխարներն ու գայլերը	36
40. Աղուէսն ու գայլը. Աթ. Խնկոյեան	37
41. *Կարուն ու աղուէսը. Յար. Թումանեան	38
42. Պառան ու գայլը	39
43. Մերացած գայլը. Գ. Բալասեան	40

№№	Երես
44. Արագել. Պ. Պոչեանց	43
45. *«Պօղոս Պետրոս». Յովհ. Թումանեան	45
46. Գայլն ու արագելը	48
47. *Պանդուխտ սրտանու երգը. Գողոթեան	49
48. Դայլը և շունը	—
49. *Լուսնահաս. Գ. Աղայեան	50
50. Դայլը և սկիւռը	51
51. Ագահ աղուէսը. Կ. Կ. Մեյլ.-Շահնագար	52
52. Պահպանեցէք ձեր բարեկամներին	53
53. *Մեղուն և արջը. Կ. Կ. Մեյլ.-Շահնագ.	—
54. Սարդն ու շերամը. Ժոխ. Գ. Աղայեան	55
55. *Շերամի որդը. Կ. Կ. Մեյլ.-Շահնագարեան	—
56. Մրջիւններ. Մ. Տէր-Սարգսեան	57
57. Մեղուն և արծիւը	58
58. Մարդը և օձը	59
59. *Մարդը. Հասօ	62
60. Պարտիզպանն ու իւր որդիքը	65
61. *Բոստանչի. Գ. Քաթիպա	66
62. Ծառերի վէճը	67
63. Ծառերն ու կացինը Խ. Աբովեան	68
64. Երկու լինձորենի	69
65. *Խողը կաղնի ծառի տակ Կրիւով	70
66. Աշխատասիրութիւն Թ. Բ. Սերովբեան	71
67. *Առուակ. Զօլ	73
68. Անտառը և առուակը	—
69. *Բարի գործ. Յովհ. Թումանեան	74
70. Քամին և արևը	—

№№	Երես
71. *Քոյրը և եղբայրը. Աթ. Խնկ.	75
72. Կրակ	77
73. *Գարբին. Կ. Կ. Մեյլ.-Շահն.	—
74. Երկու խոփ	78
75. *Երկու քոյր Գ. Քաթիպա	—
76. Մարդը և հրէջը. Գ. Բարսուղ.	81
77. *Զին. Գ. Քաթիպա	89
78. Զմեռը	—
79. *Զմեռ. Գ. Բալասեան	90
80. Կենդ. բնակ. ձմեռ ժամանակ	92
81. *Մշակ. Կ. Կ. Մեյլ.-Շահնագ.	93
82. Աղբատութիւն	—
83. *Թոչուն. Բարկաս	—
84. Գարնան սկզբին. Տուրգենև	95
85. *Հրուէր դարնան. Գ. Քաթիպա	—
86. Կոյժակ «Հասկեր»	96
87. *Քրիստոս յարեաւ Կ. Կ. Մեյլ.-Շահնագարեան	—
88. Կարնանը	97
89. *Հասօյի երգը. Բաֆֆի	—
90. Ապրիլ Պ Պոչեան	98
91. *Գեղջուկի երգը Յ. Ղազար.	100
92. *Հովուի երգը գարնանը. Մ. Տ.-Ա.	101
93. Յարդագող. Պ. Պոչեան	102
94. *Հատիկ. Յ. Յովհաննիսեան	103
95. Մալիս. Ալիշան	—
96. Մալիսուայ առաւօտը	104
97. *Ամառ	—
98. Ամառ	106
99. *Անձրեւի կաթիլ. " Մատ.	107
100. Երաշա և անձրեւ	108
101. *Հունձ	—
102. Օտարի օգնութիւնը	109
103. *Աշուն. Գ. Քաթիպա	111
104. Աշնանը	—
105. *Զհնձած արտ.	112
Ոսկի ձկնիկ. Գ. Աղայեան	115

1. ...
 2. ...
 3. ...
 4. ...
 5. ...
 6. ...
 7. ...
 8. ...
 9. ...
 10. ...
 11. ...
 12. ...
 13. ...
 14. ...
 15. ...
 16. ...
 17. ...
 18. ...
 19. ...
 20. ...
 21. ...
 22. ...
 23. ...
 24. ...
 25. ...
 26. ...
 27. ...
 28. ...
 29. ...
 30. ...
 31. ...
 32. ...
 33. ...
 34. ...
 35. ...
 36. ...
 37. ...
 38. ...
 39. ...
 40. ...
 41. ...
 42. ...
 43. ...
 44. ...
 45. ...
 46. ...
 47. ...
 48. ...
 49. ...
 50. ...

1. ...
 2. ...
 3. ...
 4. ...
 5. ...
 6. ...
 7. ...
 8. ...
 9. ...
 10. ...
 11. ...
 12. ...
 13. ...
 14. ...
 15. ...
 16. ...
 17. ...
 18. ...
 19. ...
 20. ...
 21. ...
 22. ...
 23. ...
 24. ...
 25. ...
 26. ...
 27. ...
 28. ...
 29. ...
 30. ...
 31. ...
 32. ...
 33. ...
 34. ...
 35. ...
 36. ...
 37. ...
 38. ...
 39. ...
 40. ...
 41. ...
 42. ...
 43. ...
 44. ...
 45. ...
 46. ...
 47. ...
 48. ...
 49. ...
 50. ...

«Ազգային գրադարան»



NL0242019

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ ա. տարի (պատ.) 25 կոպ.
2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ բ. տարի (պատ.) 30 կոպ.
3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ գ. տարի (պատ.) 40 կոպ.

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

1. Գրքերն ուղարկուած են կանխիկ փողով կամ վերադիր վճարով:
2. Պատուէրները կատարուած են ստացուած օրը:
3. Ճանապարհածախսը գնողներէ վրայ է:
4. Գումարով գնողներին լինուած է սովորական գիճուծն:
5. Մեծ քանակութեամբ գնողներին աւելի ձեռնառու պայմաններ:
6. Ցանկացողներին գրքերն ուղարկուած են և կազմած, իւրաքանչիւր կազմի համար հաշուելով ուժը կողէի:

Գ Լ Խ Ա Ի Ո Ր Պ Ա Ղ Յ Ս Տ Ն Ե Ր Ը

Ալեքսանդրապոլում՝ հեղինակի մօտ:
(Александрополь, О. А. Арабаджяну).

Տփլիսում՝ «Գուտաներերգ» գրափաճատանոցում:
(Тифлисе, Книж. магазинъ „Гутенбергъ“).

Բաքուում՝ «Ստորուղնիկ» Գրափաճատանոցում:
(Баку, Книж. магазинъ „Сотрудникъ“).

Կարսում՝ պ. Յովսէփ Արարեանի մօտ:

Վաճառուում են նաև ներտեսուել գրափաճատանոցներում.

Ախալքալակ՝ Տ. Տօնականեանի

Բաղու՝ Ս. Յարութիւնեանի

Երևան՝ «Արարատ»

» Պ. Յովհաննիսեանի

Կարսում՝ Եզր. Մկրտումեանների

«Կուլտուրան»

Նոր-Նախիչևան՝ Ս. Աւագեանի

Տփլիս՝ «Կենդրոնական»

» Չ. Գրիգորեանի

և ուրիշ քաղաքների յայտնի գրափաճատանոցներում: